



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Greenwich  
Greenwich

Greenwich


mp 3

1909

9(47.925)  
9-42

1909







9(47.925)

9-42

05 SEP 2011  
19 AUG 2006

ՀՐԵՏԱՐԵԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐ ԵՒ ԳԵՆԵՏԻԿԱ

# ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՂԻԱԾՆԵՐ

(Պատասխան «Հովիտ» ամսագրերից)

Պրակ երրորդ

Եփրեմ Կաթողիկոս.

Մաս I.

*Ե. Ման II*

Կ Ա Ձ Մ Ե Յ

Եղիշէ ա. ք. Գեղամիանց

ԳՐԱԴԱՐԱՆ 40 ԿՈՊ.

## Историческія выписки

(Перепечатано изъ журнала „Овивъ“ (Пастырь)

Католикось Ефремъ

ч. III. Сост. прот. Е. Гегамянцъ.

БАКУ

Типографія Н. А. Эриванцова.

1 9 0 9.



129 MAR 2013  
POS 932 20  
8005 604 81

6892

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ



4 26857-60

## ՍՈՅՆ ՊՐԱԿԻ ԳԼԽԱՌՈՐ ԱՂԲԻՐՆԵՐՆ ԵՆ՝

1. Մսերեանց. Պատմութիւն կաթողիկոսաց  
Էջմիածնի, Մոսկուա, 1874.
2. Երիցեանց. Ամենայն Հայոց Կաթողիկոսու-  
թիւնը և Կովկասի Հայք XIX դարում. հա-  
տոր Ա. և Բ. Թիֆլիզ 1894 և 1895.
3. Акты археогр. комиссії հատոր V<sup>a</sup> և  
V<sup>b</sup>. VI, VII և VIII.
4. Եփրեմ կաթողիկոսի ձեռագիրը կոնգալներ,  
որոնք հ. Գրիգոր Աղանեանց ժամանակաշու-  
րայէս մեզ յանձնեց օգտւելու:
5. Жизнь Генералъ-Лейтенанта князя  
Мадатова. С.-Петербургъ, 1863.
6. В. Потто, Генералъ-Адъютантъ Иванъ  
Давидовичъ Лазаревъ, Тифлисъ. 1900.
7. В. Потто, Первые добровольцы Кара-  
бага, Тифлисъ, 1902.
8. Սրմէոն կաթողիկոս. «Զամբո» Վաղար-  
շապատ, 1873.



ՀԳ.

Նփրեմ կաթողիկոսի երկրորդ գործն... իսկապէս նա էլ ոչ մի գործ չարաւ, եթէ չհաշւենք այն միջամտութիւնը, որ նա ունեցաւ 1813 թւականի ռուս-պարսկական դաշնադրութեան (Գիւլիստանի) ժամանակ, երբ աշխատում էր յօգուտ ռուսաց, ինչպէս որ խնդրել և հրահանգել էին իրան թէ Պետերբուրգում և թէ Թիֆլիսում:

Ինչպէս յայտնի է՝ այդ դաշնադրութեամբ պարսից ձեռքից դուրս եկան և ռուսաց ձեռքն անցան՝ Զարաքաղը, Գանձակը, Շաքին (Նուխին), Շիրվանը (Շամախին), Դարբանդը, Դուբան, Բագուն և Թալիշը:

Իսկ պարսից ձեռքը ֆացին միմիայն Երեւանի և Նախիջևանի խանութիւնները:

Գիւլիստանի դաշնադրութեամբ՝ պատերազմական գործողութիւնները դադարեցան, երկիրը խաղաղացաւ և ժողովուրդը սկսեց ազատ շունչ քաշել և անձնատուր վինել իւր առօրեայ, սովորական պարապմունքներին:

Վանքի նիւթական քայքայւած վիճակը վերականգնելու համար՝ Նփրեմը, Ներսիսի և ուրիշ սինօդականների թելադրութեամբ՝ կանոնա-



ւորեց և ընդարձակեց նւիրականութեան գործը: Նրա նւիրակներն անդադար շրջում էին տաճկահայերի, պարսկահայերի, հնդկահայերի և ռուսահայերի մէջ և մեծ ու փոքր քանակութեամբ՝ նւէրներ և տուրքեր էին հասցնում Մայր Աթոռին\*):

Կաթողիկոսը նւիրակների համար յատուկ կանոններ էր հաստատել, բաղկացած 18 յօդաւածներից\*\*):

Կողմնակի կերպով նկատենք այստեղ, որ այդ յօդաւածներից վերջինը պարտք էր դնում նւիրակների վրայ, որ նրանք իրանց եղած տեղերում «փոյթ ունիցին զհնագոյն գրչեայ գրեանս ստանալ յազազս գրատան Աթոռոյն, ևս և արկանել քարոզութեամբ իւրեանց ի սիրտ ժողովրդեան զսէր ուսումնարանի և հիւանդանոցի յամենայն տեղիս»:

### ՀԴ.

Չնայած պարսկական դանձարանից իւր տացած տարեկան 4000 ռ. ոռճիկին, չէ վանքի սովորական, թէպէտ և պատերազմի պատճառաւ նւազած, եկամուտներին, չնայած մանաւանդ նւիրակներից ստացւած առատ նւէրներին, — այնուամենայնիւ Մայր Աթոռը գրամական մեծ տագնապի մէջ ընկաւ Եփրեմի կաթողիկոսութեան ժամանակ:

Պատճառը ահա թէ ինչ էր:

\*) Պատմ. կաթող. էջմիածնի, եր. 81.

\*\*) Նոյնը, եր. 81.—83.

Եփրեմը վերին աստիճանի թոյլ բնաւորութեան տէր մարդ էր, թէև շատ բարի: Սակայն բարութիւնը նրանում ոչ կրօնական կրթութեան արդիւնք էր, ոչ էլ գիտակցութեան, այլ անընդունակութեան, մտաւոր ապիկարութեան: Կառավարչական ոչ մի շնորհք, ոչ մի ընդունակութիւն նա չուներ: Ամենաշատը՝ նա կարող էր մի հասարակ վանքի՝ հասարակ, սովորական վանահայրը լինել, այլ ոչ ամենայն հայոց կաթողիկոս և Մայր Աթոռի վանահայրը: Եփրեմը ինքը խոստովանում էր իւր ապիկարութիւնը, երբ ժամանակ առ ժամանակ Ներսիսի մասին խօսելիս ասում էր «ի պատճառսն նորա (Ներսիսի) իշխանութիւն իմ ոչ անցանէ քան զսեանս սենեկի իմոյ. ոչ ներգործէ ի լսելիս իմոց յատկացեալ պաշտօնէից հոգևորականաց կամ մարմնաւորականաց»:

Բայց չնայած, որ Եփրեմը այս աստիճան անհամապատասխան էր իւր կոչմանը, ի վերայ այսր ամենայնի նա, մի և նոյն ժամանակ, շատ փառասէր էր և ամեն մի թոկից փախածի, ամեն մի շողոքորթի, ամեն մի խորամանկի և խորագիտի իրան ուղղած գովասանքներն՝ հալած իւրի տեղ էր ընդունում:

Եւ ահա մասամբ նրա այդ փառասիրութեան, մասամբ էլ պարսիկ կառավարութեան նոր խաղաքականութեան պատճառաւ Մայր Աթոռը մեծաքանակ պարտքի տակ ընկաւ Եփրեմի կաթողիկոսութեան մանաւանդ առաջին տա-



րիններումը:

Նա իւր ձեռքն անցած մեծաքանակ գումարներն վատնում էր՝ ոչ թէ իւր և միաբանութեան վայելուչ ապրուստի և կենցաղավարութեան համար, ոչ թէ վանքի բարեգործութեան, ոչ էլ կալածանքի կարգաւորման համար, այլ իրան գովողներին, իրան շողորթորթողներին և իրան պարտատէրներին ընծաներ տալու համար՝ որոց անգաղար տալիս էր «զազգի ազգի բեհեզս, կերպասս, սփռոցս նկարէնս ծաղկայօրինութիւնս, ոսկեայ և արծաթեայ անօթս, մատանիս, տուփս պատական քարամբք ընդելուզեալս, զորս բերել տայր ի Կոստանդնուպօլսոյ, Բեթրպուրգայ և ի Հնդկաց»\*):

Այս մեծագին ընծաները Եփրեմը տալիս էր Մայր Աթոռի պարտապաններին, որոնք իրանց փոխ աւած զրամների համար 30-ական տոկոս էին ստանում\*\*): Մի և նոյն ժամանակ մուրհակները վեց ամսէն մէկ փոխել էին տալիս: Եփրեմը իւր բոլոր կեանքում փող էր հաւաքում և բացի այն, որ գործ չկատարեց, այլ և մինչև մահն էլ անփող, մուրացիկ մնաց:

Բանն այնտեղ հասաւ, որ նրա կաթողիկոսութեան առաջին 10 տարումը՝ Մայր Աթոռի պարտքը հասաւ 184,000 լուրլու:

Պարտատէրերի մեծագոյն մասը պարսիկ վաճառականներ էին, որոնք հայոց կաթողիկո-

\*) Պատմ. կաթող. էջմիածնի, եր. 83.

\*\*) Ամեն. Հ. Կաթող. հատ. Ա, եր. 169.

սին մտերմացել և նրան կեղեքում էին թելադրելով ինչպէս իրանց ընչաքաղցութիւնից՝ նոյնքան, գուցէ և աւելի, պարսիկ կառավարութիւնից:

Պարզենք մեր միտքը:

Հե.

Մենք տեսանք, որ Աբբաս Միրզան ուստաց քաղաքականութեան ցրինակին հետեւելով՝ ըսկսեց Մայր Աթոռի գահակալներին, միաբանութեանը սիրաշահել և նրանց զրաւելու համար՝ մի այնպիսի բարեկամական դիրք բռնել զէպի էջմիածինը, որ վաղուց, շատ վաղուց ի վեր տեսնւած չէր:

Պէտք է ասել, որ բացի քաղաքականութիւնից՝ Աբբաս Միրզան, մի և նոյն ժամանակ, էջմիածնը համարելով մի սրբավայր «տեղի երկրպագութեան» որոշ հաւատ և ջերմեռանդութիւն էր տածում զէպի նա:

Սյսպէս՝ իսա առանձին հրովարտակով էջմիածնի Աթոռին պատկանեալ բոլոր գիւղերն ու կալածանքները ազատեց թագաւորական ամենատեսակ հարկերից և վանքից խլած Աշտարակ գիւղը և մի քանի մանր կալածանքներն՝ հրամայեց վերադարձնելու:

1809 թւին, սեպտ. 15-ին, Երևանից էջմիածին գալով և տաճար մտնելով՝ համբուրեց Աւատարանը, ս. Լուսաւորչի Աջը: Իջման տեղւոյն երկրպագութիւն արաւ, իւր սուրը սեղանի վրայ դրեց և օրհնութիւն խնդրեց, խոստա-



նալով տաճարի համար բերել տալ «յԱսպահանէ կամ ի Սօրասանայ ըստ չափու յատակին հաւասարութեան եկեղեցւոյն՝ զխալիչայս, կախել զկանթեղս և տալ զվաղֆ»:

Յետոյ «կապեաց օրհնութեամբ ընդ մէջ նորա զսուրն՝ տեղապահ սրբազան արքեպիսկոպոսն (Սիմէօն)»:

Յայտնի է, որ մի ժամանակ յայտնի նաղը Շահն ևս՝ Կրետացի Աբրահամ կաթողիկոսի օրհնութեամբ և նրա ձեռքով կախեց իւր սուրը:

## ՀԶ.

Աբբաս Միրզայի քաղաքականութեան բոլորովին հակառակը վարեցաւ Երևանի նոր սարդար նշանակած Հիւսէին Ղուլի խանը, որ Երևանի խանութիւնը գրեթէ անձիշխանաբար էր կառավարում և երկրից ստացած տարեկան մօտ 90 հազար ոսկու հասոյթը գործ էր դնում ըստ իւր կամաց, Շահին տարէնը մի մի թանկագին նւէր ուղարկելով:

Աւասիկ հէնց այս Հիւսէին Ղուլի խանը, կամենալով, որ ռուսները տեղիք չունենան խառնուելու Երևանի գործերում, ձգտում էր բարոյապէս նւաճել էջմիածինը և սրա գահակալին: Իսկ զրա ամենալաւ միջոցն համարում էր Մայր Աթոռը խեղդել պարտքերով այն էլ մասնաւոր, պարսիկ վաշխառուների ձեռքով և օրինաւոր համարուած ճանապարհներով:

Բայց որպէս զի էջմիածինը չկարողանայ երբէք վճարել այդ պարտքերը և միշտ կախումն

ունենայ սարդարի արբանեակներից, հարկ էր կտրել այդ վանքի այն հասոյթները, որ վանքը վաղուց վայելում էր ոչ միայն Աբբաս Միրզի, այլ և նրանից առաջ իշխողների հրովարտականերով:

Վերջապէս Հիւսէին Ղուլի սարդարը խլեց Աբբաս Միրզի էջմիածնին տւած արտօնութիւնները՝ գիւղերը հարկերից ազատ լինելու մասին և Աթուշային կալածների վրայ 400 թուման (1600 ռ.) մաղթա (հարկ) դրեց, իսկ գիւղացիների համար էլ՝ 400 թուման բեկարայ կոչւած հարկը հաստատեց:

Տեսանք որ Աբբաս Միրզան հրամայել էր Աշտարակը վանքին վերադարձնել:

Սակայն սարդարը այդ հրամանը չկատարեց, վասն զի էջմիածնեցիք անձեռնհաս գտնւեցան նրա պահանջած 1000 թուման նւէրը վճարել իրան:

Եղւարդ գիւղի հասոյթի վեց մասից՝  $4\frac{1}{2}$  մասը պատկանում էր էջմիածնին:

Սակայն սարդարը բոլոր հասոյթը իրան էր յատկացնում, պատճառ բերելով, որ Եղւարդի նախկին բնակիչների մեծ մասը՝ ցրիւ են եկել և այժմեան բնակիչները նա ինքն է բերել տւել և գրեթէ ամայացած գիւղը ինքը նորից շէնացրել:

Մուղանլու կոչւած թաթարները՝ վանքապատկան հողերը վարում էին, բայց նրանց աւայմանաւորեալ վճարը չէին տալիս:

Վանականք սարդարի օգնութեանը դիմե-



ցին: Վերջինս ստիպեց թաթարներին՝ հատուցանել վանքին նրա պահանջը, բայց ինքը՝ սարգարը վանքից նախապէս այնքան նւէր ստացաւ (500 թուման), որ գրեթէ հաւասար էր թաթարներէց ստանալիք գումարին\*):

Հէ.

Երևանի սարգարի արարմունքներն խափանելու համար՝ Եփրեմը թէ և զիմեց Աբբաս Միրզին, նոյն իսկ պատգամաւորների միջոցաւ, բայց դրանով ոչինչ չշահւելուց զատ՝ սարգարի բարկութիւնը ևս շարժեց իւր վրայ:

Իսկ սարգարը ոչ միայն քաղաքագէտ էր, այլ նաև Շահի և նրա ժառանգի նման փեսայ ու խնամի\*\*): ունենալով՝ ոչ ոքից երկիւղ չուներ և անարգել անում էր, ինչ որ ուզում էր:

Ուստի և անշեղ կերպով գործադրում էր իւր քաղաքականութիւնը, — այն է՝ նիւթականապէս քոյրորդի/ի ֆայֆայել/Յայր Աթոռը:

Կաթողիկոսը բոլորովին յուսահատւած էր և չէր իմանում, թէ էլ ռթաեղից կարողանայ փող ձեռք բերել:

Մի ժամանակ Ներսէսը Թիֆլիսից նրան օգնում էր, բայց վերջերում նա ևս վերջ տւեց իւր օգնութիւններին, նախ՝ որովհետև ուղարկւած դրամներն աննպատակ կորչում էին և երկրորդ՝ Կովկասի կառավարչապետ Երմօյովը՝ ար-

\*) Ամենայն Հայոց կաթող. հատոր Ա. եր. 172—174.

\*\*) Սարգարի քոյրը Շահի կինն էր, իսկ Աբբաս Միրզին աղջիկը՝ Սարգարի որդու կինը:

գելեց Ներսիսին Վրաստանի հայերից յօգուտ էլմիածնի դրամ հանգանակելն:

Կաթողիկոսի յուսահատութեան միջոցին՝ Երևանի Սարգարը՝ ինքը նրան օգնութեան հասաւ... մի քառեկամական խորհրդով:

Այդ միջոցին Շուշիում ապրող 500 տունի չափ հայերն վաճառականութեան մէջ շատ առաջացել էին և բաւականին հարստութիւն ձեռք բերել:

Նրանց մէջ կային այնպիսիներ էլ, որոնք ահագին, միլիոնաւոր կարողութիւն էին ձեռք բերել, Կասպից ծովի ձկնորսութեամբ, նաւագնացութեամբ և Բագւի նաւթահանութեամբ և մինչև Սիբիրիա և Եւրոպա տարածւած այլ և այլ առևտրական ձեռնարկութիւններով:

Այս կարգի հարուստներն էին Թառումեանց և Հախումեանց տներն:

Թառումեան տունն եկւոր էր Շուշիում: Նրանք Երևանի կողմիցն էին և սարգարի բռնութիւններից փախչելով՝ գաղթել էին Շուշի և հարստացել:

Արդ՝ Երևանի սարգարը Եփրեմին խորհուրդ տւեց, որ կոնդակով, կամ յատուկ մարդով գիմէ Թառումեանցին և նրանից՝ գոնէ փոխարինաբար 4000 թուման խնդրէ:

Եփրեմը այդպէս էլ արաւ: Յովհաննէս անունով մի եպիսկոպոսի միջոցաւ նա Թառումեանց երկու եղբայրներին, — Զոհրաբ և Մարկոս, — մի մուրհակ ուղարկեց իւր և միաբանու-



թեան ստորագրութեամբ: Սակայն թառումեան-  
ները բաւականացուցիչ պատասխան չտւին:

Այդ միջոցին սարգարը կաթողիկոսին խոր-  
հուրդ տւեց, որ ինքը անձամբ գնայ Շուշի թա-  
ռումեաններէից փողն ստանալու:

Սարգարը, առհասարակ, այն կարծիքի էր,  
որ եփրեմ կաթողիկոսը իւր այս ճանապարհոր-  
դութեամբ՝ ռուսահայերից մեծ գումար կբերի  
էջմիածին\*):

Սարգարի այս խորհուրդն ևս լսեց կաթո-  
ղիկոսը և 1821 թւականի սեպտեմբերի կիսին  
էջմիածնից դուրս եկաւ՝ իրան ուղեկից ունե-  
նալով բաւականին մարդիկ, — եպիսկոպոսներ,  
վարդապետներ, սարկաւազներ, աշխարհական-  
ներ՝ իրանց ծառաներով:

Փակագծի մէջ ասենք, որ կաթողիկոսին  
ուղեկցող սարկաւազների թւում էր՝ գալիւ Մես-  
րոբ թաղիադեանցը, որ վերջերում յայտնի մա-  
տենագիր եղաւ մեր մէջ:

ՀԸ.

Կաթողիկոսը ճանապարհորդութիւնը սկսեց  
Նախիջևանի վրայով, որոյ խանը շատ փառաւոր  
կերպով դիմաւորեց և ընդունեց նրան:

Քաղաքի և մօտակայ գիւղերի հայ ժողո-  
վրդականք լսելով, որ կաթողիկոսը Մայր Աթո-  
ռի պարտքը թօթափելու համար է ձեռնարկել  
իւր ճանապարհորդութիւնը, խումբ խումբ դա-  
լիս էին (թերեւս խանի կողմակի թելադրու-

\*) Ամենայն Հայոց Կաթողիկ., հատ. Ա, էր. 188.

թեամբ) և իրանց լուծան դնում նրա առաջ:

Այդ բանից խրախուսւած՝ եփրեմը սկսեց  
մի շրջան գործել Նախիջևանի վիճակում և ք-  
մեն տեղ ժողովուրդը ընդունեց նրան սիրով և  
իւր լուծան չխնայելով:

Բայց յանկարծ հոկտեմբերի սկզբին՝ էջմի-  
ածնից լուր հասաւ թէ՝ սարգարը գղջացել է,  
որ կաթողիկոսին թոյլատրել է անցնել ռուսաց  
սահմանը և այժմ մի հեծելազունդ է պատրաս-  
տում՝ նրան իւր հետևորդներով յետ դարձ-  
նելու\*):

Ճիշտ էր արդեօք այս լուրը թէ սարգարի  
կողմից մի խաղ էր՝ եփրեմի շրջագայութիւննե-  
րի առաջն առնելու և նրա ժամանումը ի Շու-  
շի փութացնելու, — մենք չկարողացանք ստու-  
գել: Յամենայն դէպս՝ էջմիածնից եկած լուրը  
կաթողիկոսի վրայ սարսափ գործեց: Եւ նա  
փութաց լեռնային և նեղ, բայց կարճ, ճանա-  
պարհով մտնել ռուսաց սահմանը, ուր նա  
մուտք գործեց՝ առանց նախապէս ռուսաց կա-  
ռավարութեանը իմաց տւած լինելու: Իսկ այդ  
բանը՝ նրան էժան չնստեց:

ՀԹ.

Եփրեմը դեռ ևս Տաթևումն էր, որ Ղարա-  
բաղի Մէհդի խանը գրեց նրան և խնդրեց, որ  
դէպի Շուշի առաջ չխաղայ, մինչև Երմօլովից  
թոյլաւութիւն ստացւիլն: Եւ իւր այս կարգադ-  
րութեան մասին՝ խանը տեղեկացրեց Թիֆլիսի

\*) Ամեն. Հայոց Կաթողիկ., հատ. Ա, էր. 188.



բարձրագոյն իշխանութեանը: Կաթողիկոսն էլ դիմեց Ներսիսի միջնորդութեանը, որ Թիֆլիսի հայոց առաջնորդն էր:

Այդ միջոցում Երմօլովը Կովկասեան լեռնականների դէմ պատերազմ էր մղում՝ կառավարչապետի պաշտօնավարութիւնը ժենեռալ Վելիամիրովին թողնելով:

Ներսէսը յաջողեցաւ իրաւունք ստանալ, որպէս զի Նփրեմը գայ Շուշի հասնի այն պայմանաւ, սակայն, որ ոչ մի գործի ձեռնամուխ չլինի, մինչև Երմօլովի կողմից կարգադրութիւն լինելն:

Նոյեմբերի վերջերին կաթողիկոսը իւր մեծ շքախմբով ժամանեց Շուշի և իջևանեց պ. Հայրումեանցի տանը: Նւ այնտեղ սպասում էր Երմօլովի կարգադրութեանը:

Մինչդեռ նա, կաթողիկոսը, այս տարտամ, անորոշ դրութիւնումն էր գտնւում Շուշիում, — այնտեղ՝ էջմիածնում՝ Երեանի սարգարը միաբանութեանն էր նեղում, չարչարում՝ իբրև պատասխանատու կաթողիկոսի վախատեանը:

Այս մասին միաբանութեան կողմից հասած տրտունջներն ու թախանձանքները Նփրեմը հաղորդում էր Թիֆլիս Ներսիսին, բայց նա ինչ կարող էր անել առանց երկրի իշխանութեան թոյտութեանը:

Բանն այնտեղ հասաւ, որ Ներսէսը մինչև իսկ դադարեց կաթողիկոսի թղթերին ուղարկութիւն դարձնելն՝ անպատասխանի թողնելով նրանց:

Ներսիսի այս վարմունքը մեծապէս վշտացրեց Նփրեմին, որ նրա դրութիւնը ըմբռնելու անկարող լինելով՝ կարծում էր, որ նա, Ներսէսը, անձնապէս խռովել և երես է դարձրել իրանից:

Նփրեմը չէր կարող կամ չէր կամենում հասկանալ, որ նախ քան Երեանի սարգարի խորհրդով ռուսաց երկիր մեկնելն՝ նա պարտաւոր էր դնէ Ներսիսից խորհուրդ հարցնել:

Զ.

Վերջապէս 1822 թւականի սկզբներին Երմօլովը վերադարձաւ Թիֆլիս և անմիջապէս տեսնւելով Ներսիսի հետ՝ յայտնեց նրան իւր սաստիկ անբաւականութիւնը կաթողիկոսի անսպասելի արարքի մասին:

Երմօլովը այն կարծիքի էր, որ Նփրեմին ռուսաց հողն անցնելն՝ պարսիկները կը համարեն իբրև Երմօլովի իրան սարքած բանը: Իսկ եթէ կաթողիկոսը շարունակէ մնալ Շուշիում և յետ չդառնայ էջմիածին, — զրանից թերևս պատերազմ ծագի ռուսաց և պարսից մէջ՝ միանգամայն հակառակ կայսեր խաղաղասիրական քաղաքականութեանը:

— «Այսքան տարւայ աշխատանքս, — պարսից հետ հաշտ մնալու մասին՝ Նփրեմը իւր մի քայլովը ոչնչացրեց և այդ անհեռատես վարմունքի պատասխանատուութիւնը ինձ վրայ է ծանրանում կայսեր առաջ» — գայրոյթով ասում էր Ներսիսին Երմօլովը և վճռաբար պահանջում, որ կա-



Թողիկոսը անմիջապէս ռուսաց սահմանից հեռանայ:

Ի զուր ներսէսը աշխատում էր համոզել ցոյց տալով Երմօլովին կաթողիկոսի յետ դառնալուց առաջանալի վտանգն թէ նրա անձի և թէ Աթոռի նրկատմամբ:

Երմօլովը իւր որոշման մէջ անփոփոխ մընաց: Նա, իբրեւ պետական անձն, ի հարկէ պետական շահն աչքի առաջ ունէր ամենից առաջ: Իսկ Հայոց Մայր Աթոռին և նրա գահաժառանգին կը պաշտպանէր անջնքան և ան ժամանակ, որքան և երբոր այդ պաշտպանութիւնիցն ևս՝ պետութիւնը որեւէ մերձաւոր կամ հեռաւոր օգուտ կարող էր ունենալ:

Առ այժմ մի այդպիսի օգտի ակնկալութիւն չունենալուց զատ՝ կառավարչապետը ընդհակառակը դեռ փնաս էլ էր տեսնում: Ուստի և պահանջելով պահանջում էր Եփրեմի յետ դառնալը\*):

Եւ այդ իմաստով Ներսիսին արած ազդարարութիւններովն ևս չբաւականանալով՝ Երմօլովը ինքն իւր կողմից էլ մի նամակ գրեց կաթողիկոսին\*\*):

Պէտք է ասել, որ Երմօլովը առհասարակ իւր կարծիքներն ու զգացումները պատրւակել, կեղծել չգիտէր:

Նա շատ ուղղախօս մարդ էր: Դիւանագիտական կեղծ ու պատիր ձեւերն նրան անծանօթ

էին: Եւ նա ամենքի հետ և ամեն տեղ վարւում և գործում էր անկեղծօրէն, անպատրւակօրէն:

Կովկասի այս կառավարչապետի ամբողջ գործունէութիւնը, նրա ամբողջ գրագրութիւնները՝ կենդանի ապացոյց են նրա այդ հոգեկան յատկութեանը:

Եփրեմ կաթողիկոսին ուղղած նամակն էլ՝ Երմօլովը իրան յատուկ պարգութեամբ էր գրել, պահանջելով, որ նա շուտով հեռանայ ռուսաց հողից:

## ՁԱ.

Եփրեմը Երմօլովի նամակին՝ մի ընդարձակ պատասխան գրեց, որի մէջ յայտնում է, որ «ժամանակի պատճառած բազմաթիւ դժբաղտութիւնները և չալ դէպքերը» իրեն ստիպել են իւր «յոյսը դնել կայսեր գահոյից ողորմածութեան վրայ և դիմել Ղարաբաղում նորա բարերար հովանաւորութեանը, որպէս զի գալով ձեզ մօտ՝ ձեզ Աստուծոյ պարգեւած իմաստութիւնից խորհուրդ ստանալի ինձ և էջմիածնի Աթոռ ապահովացնելու մասին»:

— «Բայց որովհետեւ, — շարունակում է Եփրեմը, — ուղիղ ճանապարհաւ ես չեի կարող պարսից տէրութիւնից առ այդ հրաման ստանալ, այդ պատճառաւ ստիպւած էի Ղարաբաղ գնալու պատրւակաւ արձակիչ...»:

Եւ յետոյ խնդրում, աղաչում և պաղատում է Երմօլովին, որ իրեն թոյլ տայ Թիֆլիս գալու և անձամբ իրեն ներկայանալու: Իսկ եթէ դա

\*) АКТЫ, V. кр. 450 № 603.

\*\*) Նոյնը, № 604.



անկարելի է,—խնդրում է «Ներսէս արքեպիսկոպոսին ուղարկել ինձ մօտ, խորհրդակցելու համար, թէ իմ ձեզ մօտ գալու դիտաւորութեան վերաբերութեամբ և թէ այլ որևէ պատշաճաւոր տնօրէնութեան մասին»:

Այս նամակը կաթողիկոսը ուղարկեց Սիմէօն եպիսկոպոսի հետ:

Սակայն ոչ նամակագրի աղաչանք պաղատանքը, ոչ էլ նամակատարի բանաւոր դիմումները չկարողացան Երմօլովին շեղել իւր որոշումից: Ուստի նա՝ մարտ 24 թւակիր մի նոր նամակ գրեց Եփրեմին, ուր հերքելով նրա պատճառաբանութիւնները՝ աւելացնում էր «քեզ համար չկայ մի ուրիշ անվտանգ և խելացի միջոց վայելուչ կերպով ազատելու այժմեան դժարութիւններից, բացի այն, որ, հետևելով իմ առաջնական աւած անկեղծ խորհրդին, առանց այլ ևս ժամանակ կորցնելու, վերադառնալ էջմիածին ձեր Աթոռը և այս ճանապարհաւ, հեռացնելով ձեզանից պարսից տէրութեան բոլոր կասկածները, գործին նախկին ընթացքը տաք\*):

Կառավարչապետի այս նամակը վերջանում է մի նոր առաջարկութեամբ, — «Մինչև անգամ, —ասում է Երմօլովը,—եթէ ձերդ վեհափառութիւնը, ըստ ձեր ըստի կամաց, վճռէիք հրաժարելի պատրիարքական գործերը վարելու ծանր լուծը կրելուց, կամ այն պատճառաւ, որ Երևանի տեղական վարչութիւնը, չյարգելով ձեր

\*) АКТЫ, V. кр. 450 № 604.

բարձր աստիճանը զանազան նեղութիւններով անպատեած է ձեզ, և կամ թէ զգայիք, որ զառամութեան և թոյլ առողջութեան պատճառաւ ուժից ընկել էք,—յամենայն դէպս ոչ միայն քաղաքավարութիւնը, որ ամենայն տէրութիւններից սրբութեամբ յարգւում է, այլ և նոյն իսկ էջմիածնի վանքի շահերը, ըստ իմ կարծեաց, կը պահանջէին, որ ձերդ վեհափառութիւնը ձեռնամուխ լինէիք այդ գործին (կաթողիկոսութիւնից հրաժարելուն), կամ, թէ կանխապէս վերադառնալով ձեր հօտին, ուր և էջմիածնի սրբազան սիւնօդոսի հետ խորհրդակցելով, նշանակէիք ձեզ ժամանակաւոր յաջորդ ու պարսից տէրութիւնից համաձայնութիւն ստանալիք բոլոր գործերի վարչութիւնը նրան յանձնելու մասին:

Այն ժամանակ ձեր հանգստութեան համար տեղ ընտրելն, եթէ մինչև անգամ այս երկրումը լինէր այդ վայրը, այլ ևս չէր կարող պարսից տէրութեանը կասկածների մէջ մտցնել և ուրեմն չէր վրասել երկու տէրութեանց բարի յարաբերութեանը:

«Գալով Ներսէս արքեպիսկոպոսի Ղարաբաղ գալու թոյլտւութեանը, պատիւ ունիմ ծանուցանել ձերդ վեհափառութեան, որ ձեր այս ցանկութեան մասին՝ ես պաշտօնական թղթով հաղորդեցի նորին Երբազնութեանը: Եւ որովհետեւ ես ինձ իրաւունք չեմ համարում ոչ էլ ստիպելու նրան, այդ պատճառաւ այդ բանը թոյլ եմ





տւած իւր սեպհական կամքին, նկատելով միայն՝ որ նրա կողմից քաղաքավարութիւնը և նոյն իսկ իւր պարտաւորութիւնները պահանջում են, որ յարգէ ձերդ վեհափառութեան կամքը»:

ՁԲ.

Կարծում ենք, որ ընթերցողի համար զըժ-  
լար չէ Երմօլովի առաջարկութեան նպատակը  
ըմբռնելն:

Երմօլովը Եփրեմին ճանաչում էր թէ ան-  
ձամբ, երբ 1817-ին դեսպանութեամբ Թէհրան  
գնալիս՝ մի ամբողջ օր էջմիածնում անցկացրեց,  
և թէ նրա գործերից: Կառավարչապետը համոզ-  
ւած էր, որ Եփրեմը անընդունակ է որևէ օգուտ  
բերելու կառավարութեանը կամ թէկուզ էջ-  
միածնին,— ուստի նա բարւոք համարեց Եփրե-  
մին հրաժարացնել կաթողիկոսութիւնից՝ վանքի  
կառավարութեան ղեկը մի ընդունակ, գործու-  
նեայ եպիսկոպոսի յանձնելով:

Եւ որովհետև Երմօլովը ոչ իրաւունք ունէր,  
ոչ էլ անտակտութիւն ուղղակի առաջարկելու  
կաթողիկոսին, որ հրաժարւի, ուստի իւր նամա-  
կով նա նրան միայն թելադրեց, որ հրաժարւի:  
Մի և նոյն ժամանակ դաս տւեց թէ՛ իւր հրա-  
ժարականը ինչպէս պատճառաբանէ:

Այդ պատճառների մէջ կան կէտեր, որոնք  
ժամանակին Երմօլովի ձեռքին պատրւակ և կամ  
առիթ կը լինէին սարդարին և առհասարակ պար-  
սիկ կառավարութեանը մեղադրելու:

Միւս կողմից՝ կաթողիկոսի հրաժարեցուց-

մամբ՝ Երմօլովը պարսիկ կառավարութեանը հա-  
ւաստիացրած կլինէր իւր ի որտէ բարեկամու-  
թեան մէջ իբր: Եւ նրա կասկածները՝ միանգա-  
մայն փարատած:

Աւելորդ է ասելն, որ Երմօլովը Եփրեմի  
մասին իւր արած կարգադրութիւնները, նրան  
ուղղած իւր նամակները՝ անմիջապէս զեկուցա-  
նում էր կայսրին: Կայսրն էլ միանգամայն հա-  
ւանում և հաստատում էր կառավարչապետի ա-  
րածներն\*):

Վերևում տեսանք, որ Երմօլովը յանձն էր  
առնում Եփրեմին,— երբ սա կաթողիկոսութիւ-  
նից հրաժարւի,— բնակութեան տեղ տալ ռուսաց  
հոգւում, իբրև մի սոսկ վարդապետի, մի հիւրի:  
Այդ առթիւ էլ՝ ահա ինչ հրահանգ էին տալիս  
Երմօլովին Պետերբուրգից:

«Նորին Մեծութիւնը հաւատացած է, որ  
դուք ամեն ջանք գործ կդնէք, որ պարսից տէ-  
րութիւնը չկարողանայ մինչև անգամ մտածել,  
իբր թէ պատրիարքի տեղափոխութիւնը մեր թե-  
լադրութեամբ է եղած և կամ թէ մեր կողմից  
որև է քաղաքականութիւն է գործ դրւած այն-  
տեղ, ուր խնդիրը միայն ծերունու խնդրած և  
յանուն հիւրասիրութեան ապաստանարանի մա-  
սին է\*\*):

ՁԳ.

Իւր որոշումների առթիւ կայսեր հաճու-

\*) АКТЫ, V. № 602.

\*\*) Նոյնը № 605.



Թիւնն առնելուց յետոյ՝ Երմօլովը, որ իւր նախորդներին փայփայիչ և շոյիչ քաղաքականութեան հակառակ քաղաքականութեամբ՝ մի ձեռքով Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի խանութիւններն էր ջնջում, միւս ձեռքով Վրաստանի, Գուրիայի և Իմերեթի թագակիրներին և իշխանագոյններին նեղը լծում, — Երմօլովի համար ասում եմ, — դժուար չէր հայոց կաթողիկոսին, այն ևս Եփրեմի նման կաթողիկոսին, գահավէժ առնել, մի կողմ շարժել:

Ուստի նա, Երմօլովը Ներսիսին գրաւոր պատուէր տալով Շուշի գնալու՝ նրանից պահանջեց կամ Եփրեմի վերադարձը էջմիածին, կամ նրա հրաժարագիրը կաթողիկոսութիւնից:

1822 թւի մայիսի սկզբներին Ներսէսը Թիֆլիսից մեկնեցաւ Շուշի՝ ուղեկցութեամբ իւր մտերիմ Անտօն արքեպիսկոպոսի և Յովհաննէս վարդապետի, որոց Եփրեմը Շուշուց հրաւիրակ էր ուղարկել նրան, Ներսիսին.

— «Արքայաւայել իմն մեծափառութեամբ» Ներսէսը հազիւ Ղարաբաղի մայրաքաղաքն էր ժամանել, երբ ստացաւ ժեներալ Վելիամինովից մի նամակ, որով նա՝ յանուն Երմօլովի յայտնում էր, «որ ուռնաց տէրութիւնը այլ ևս չէ կարող պահել նրան (Եփրեմին) իւր սահմաններում պատրիարքական կոչմամբ, այլ կարող է ճանաչել նորան լոկ իբրեւ սոսկական վարդապետի և այս աստիճանին վայելուչ յարգանքը տալով, թոյլ կուտայ նրան բնակւիլ, ուր և կը կա-

մենայն\*):

27.

Ի կատարումն Կովկասեան իշխանութեան այս խիստ պահանջման՝ Եփրեմը՝ 1822 թւականի յունիսի 20-ին՝ տեղի հրաժարականը մի կոնդակով յանուն իւր հետ եղած արքեպիսկոպոսների և վարդապետների\*):

Կոնդակի գրողը կամ թելադրողը անշուշտ Ներսէս արքեպիսկոպոսն էր, որ ստիպւած լինելով թէ՛ Երմօլովի կամքը կատարել և թէ՛ մի և նոյն ժամանակ, հայ եկեղեցւոյ կանոնը, — կաթողիկոսի ցմահ ընտրւած լինելն, — չխախտել, հրաժարագիրը այնպէս կարկատեց իբրեւ թէ՛ կաթողիկոսը հրաժարւում է «ազատական սրտաբեամբ և ինքնաշօթար, անքոնաբար կամօք»: Թէ՛ հրաժարւելու պատճառը՝ կաթողիկոսի անձնական տկարութիւնը և յատկապէս ծերութիւնն է (Եփրեմը այդ ժամանակ 72 տարեկան էր): Սրանից առաջ էլ՝ Եփրեմը քանի քանիցս անգամ թէ՛ բանաւոր և թէ՛ գրաւոր հրաժարական տւած է եղել իբր թէ՛ կայն:

Այս կարկատաններն արգելք չեղան, սակայն, որ մի քանի տարուց յետոյ Եփրեմը նորից հայրապետական գահի վրայ նստի, ինչպէս իւր տեղում կտեսնենք:

28.

Եփրեմը իւր հրաժարականը վերջացնում էր առաջարկելով իւր մօտ գտնւող հոգևորա-

\*) АКТЫ, V, № 606.

\*\*) АКТЫ, V, № 453.



կաններին, որպէս զի նրանք էջմիածնի միաբանութեան և ազգի աշխարհականների հետ՝ մի ուրիշ անձն յասկացուցանեն ի քառնալ զհոգս պաշտօնի և կոյնանս կաթողիկոսութեան և պատրիարքութեան ամենայն հայոց»։

Աւելացնում էր նաև, որ իւր հրաժարելը փութով կյայտնէ նա և «իւրոյ կայսերական մեծութեան ամենայն ոռւսաց, ևս և թագաժառանգի թագաւորութեանն պարսից և ամենայն հասարակութեան հոգևորականաց և մարմնաւորականաց հայոց, որք ի Ռուսաստան և որք ի Կ. Պօլիս և յամենայն սահմանս զանազան իշխանութեանց զսանին տարածեալ»։

Ամեն ինչ այսպէս ձեռաց, թղթի վրայ վրձնելով՝ Եփրեմը իւր հետ եղած հոգևորականների ուղեկցութեամբ՝ Ըուշից մեկնեցաւ Գանձակ գնալու համար։

Այդ մասին Ներսէսը վաղօրօք իմացրել էր Վելիամինովին՝ որին ուղարկել էր, մի և նոյն ժամանակ, Եփրեմի հրաժարականի պատճէնը։

Սակայն Եփրեմը Մելիք Յովսէփ Փրիզոնեանին պատկանեալ Գիւլստան գիւղը հասնելով՝ ստիպւած եղաւ այլ ևս առաջ չշարժել։

Վասն զի այդտեղ Ներսէսը Վելիամինովից մի նոր նամակ ստացաւ, որով ժենեւալը առաջարկում էր առ ժամանակ մի Շուշիում մնալ, մինչև որ ինքը Երմօլովից հրահանգ կստանայ հրաժարւած կաթողիկոսի բնակելու տեղի մասին\*)։

\*) АКТЫ. V, кр. 452, № 608.

Բայց այս պատճառը՝ միակը չէր Եփրեմի ճանապարհորդութիւնը խափանելուն։

Վելիամինովը տակաւին չունէր իւր ձեռին Եփրեմի հրաժարականը յանուն կայսեր։

Ներսէսը, ինչպէս տեսանք, ոռւս ժենեւալին ուղարկել էր Եփրեմի այն հրաժարականի պատճէնը, որ ուղղած էր եպիսկոպոսների հասցէին, իսկ կայսեր անւան ուղարկելի հրաժարականը Ներսէսը խոստանում էր շուտով պատրաստել տալ և ուղարկել։

Արդ՝ Վելիամինովը թերևս կասկածելով, որ Ներսէսի խոստումը չիրականանայ՝ գրեց որ կաթողիկոսը Շուշիում մնայ։

## 22.

Վելիամինովի գրութեան պատճառաւ, չկարողանալով առաջ գնալ դէպի Գանձակ՝ Եփրեմը չէր էլ կարող յետ դառնալ դէպի Ըուշի։

Ուստի անճարացած նա հէնց Գիւլստան գիւղում գրեց իր հրաժարականը (1822 թ. յուլիսի 30-ին) կայսեր և պարսից զահաժառանգի անունով և ուղարկեց Վելիամինովին\*)։

Ստանալով այս հրաժարականը, Վելիամինովը Երմօլովի անունով հաղորդեց իսկոյն Ներսիսին, որ հրաժարւած կաթողիկոսին թոյլատրւում է Գանձակ գնալ, սակայն այն պայմանով, որ հետը շատ ուղեկիցներ չունենայ։—Որովհետև Եփրեմը հրաժարւելով կաթողիկոսու-

\*) АКТЫ, V, кр. 453.



թիւնից, բնականաբար հրաժարուում է և շքախումբ ունենալուց: Այսուհետև նա բաւականանալու է, իբրև սոսկ վարդապետ, իրան հետ մի երկու սպասաւորներ ևեթ պահելու,—գրում էր Վելիամինովը\*):

Ներսէսը նրան պատասխանեց, որ Եփրեմը չէ ուզում որ և է քաղաքում ապրիլ: Այլ նա իւր մշտական բնականութեան համար Հաղբատի վանքն է ընտրել Թիֆլիզի մօտ:

Երմօլովը միանգամայն հաւանեց այդ մըտքին, որը, ի դէպ, առաջին անգամ ինքն էր յայտնել, Վելիամովի յայտարարութիւններից մէկի վրայ դրած մակագրական որոշմամբ\*\*):

Այսպէս ահա 1822 թւականի աշնանը՝ Եփրեմը ստիւում եղաւ քաշել, մեկուսանալ Հաղբատի կիսաւեր վանքը, որտեղ Ներսէսը ձեռաց մի երկու, աշուք խուցեր պատրաստել տալով և վանքի քայքայւած պարիսպը նորոգելով, ինքը անցաւ գնաց Թիֆլիզ իւր գործին:

Հաղբատում մնացին Եփրեմը, նրա կոնդակագիր եպիսկոպոսը և մի երկու ծառայ: Միւս եպիսկոպոսներին և վարդապետներին Ներսէսը իրանից առաջ Հաղբատից հեռացրել էր արդէն:

Ձէ.

Հաղբատում Եփրեմը շարունակ զբաղւած էր... կոնդակներ գրելով, որոց տակ միշտ ստո-

\*) АКТЫ, V. кр. 454, № 611.

\*\*) Նոյնը, կր. 453, № 609.

րագրում էր «կաթողիկոս ամենայն հայոց»:

Եթէ կոնդակը մօտիկ տեղ էր ուղարկւում, ուր մարդիկ կարող էին կաթողիկոսի հետ պատահած անցքերին տեղեակ լինել՝ կոնդակի գրւած տեղ՝ ցոյց էր տրւում Հաղբատը կամ Շուշին: Իսկ եթէ հեռաւոր տեղեր, օրինակ Թուխատ, Բասրա և այլն՝ այն ժամանակ կոնդակը գրւած էր լինում իբրև թէ Էջմիածնից:

Կոնդակների մէջ յաճախ շեշտւում էր թէ՛ «գոր ինչ ի դիմաց մեր յաղագս աթոռային տալեաց և առնելեաց գրել ունեցի քեզ Ներսէս արքեպիսկոպոս հաւատարիմս մեր, իբրև իսկական ի մեջն գրեալ ընկալչիք ահաւրակոյս»:

Շեշտւում էր թէ՛ Ներսիսի գրածներն պէտք է ընդունել «իբրև զգիր սեպհական անմիմ իմոյ և սուրբ ժողովոյ մերում»\*):

Ներսէս Աշտարակեցւոյն այս տեսակ կարթ — պլանշներ (արտօնութիւն) տալով ևս չբաւականացած՝ Եփրեմը ինքն ևս կարգադրութիւններ էր անում:

Ինչ և որոնք էին այդ կարգադրութիւնները:

Նւիրակների հաշիւներն էր տեսնում, նւիրակներին փոխում, մեռածների գոյքերն ստանում, փոխանագիրներ քաշում, դանձանակադրամ և նւիրադրամ ժողովում, այս և այն «բարեպաշտի» վրայ եղած, կամ խոստացած ապօրիկներն պահանջում, ստանում, իրան հին ու նոր ծանօթներին, իրան շողոքորթողներին ըն-

\*) Եփրեմի ձեռագիր կոնդակներից:



ծայ տալու համար՝ ժամացոյցներ և այլ առարկաներ ապսպրում,—մի խօսքով Եփրեմը Հաղբատի մենաստանը գրեթէ մի առևտրական գըրասենեակի էր վերածել<sup>\*)</sup>։

Նրա ձեռքերը անդադար փողի հետ էին խաղում, նրա ուշն ու ուրուշը՝ դրամական հաշիւներումն էին դեգերւում միշտ։

Այստեղ պէտք է յայտնենք ընթերցողին, որ Շուշում եղբարք Թառումեաններից Եփրեմը ըստացած էր նաև այն 4000 ոսկին, որի համար տակաւին էջմիածնից մուրհակ էր ուղարկել իւր և սինօղականաց ստորագրութեամբ։

Եւ թէպէտ այդ 4000 ոսկին Թառումեանք սկզբում իբրև փոխարինութիւն տւին կաթողիկոսին, սակայն Մարկոս Թառումեանը իւր մահամերձ հիւանդութեան միջոցին՝ կաթողիկոսի մուրհակը մի սկուտեղի վրայ դրած՝ իբրև նւէր յետ ուղարկեց նրան։

## ԶԸ.

Եփրեմը իւր հաւաքած այս մեծ ու փոքր գումարները էջմիածին չէր ուղարկում՝ ի հատուցումն իւր պարտքերին, կամ գոնէ մասամբ ի սնունդ միաբանութեանը. ոչ էլ ինքն էր օգտւում այդ գումարներով։

Եւ ինչ բանի վրայ գործածէր։

Նա ինքը շատ սակաւապէտ անձն էր։

Նրան հարկաւոր էր միմիայն սնունդ, որ

<sup>\*)</sup> Եփրեմի ձեռագիր կոնդակներից.

մատակարարում էին Թիֆլիսից Ներսէսը և տեղւոյն ազգայինները։

Վերջիններիս արգելած էր Հաղբատ գնալ ի տես և այցելութիւն իրանց «հոգևոր տիրոջ», ուստի նրանք գէթ իրանց առատաձեռն նւէրներով, գլխաւորապէս ուտելիքներով և խմելիքներով, շտապում էին մխիթարել քաղաքական հաշիւներին գոհ գնացած իրանց ծերունի ու անճար հայրապետին<sup>\*)</sup>։

— Ուրեմն Եփրեմի հաւաքած փողերն, գոնէ նրանց մեծագոյն մասը, ուր էին գնում։

— Ներսէս արքեպիսկոպոսի մօտ, որ Եփրեմի «ամենաջերմեռանդ աջակիցն» էր։ Կամ աւելի ճիշտը՝ բացարձակ կաթողիկոսութիւն էր աւնում։

Ներսիսի և նրա բազմազան գործունէութեան մասին իւր տեղում կը խօսուի, այստեղ պէտք է յայտնենք մեր ընթերցողներին, որ Ներսէսը իւր ձեռքն անցած մեծ և փոքր գումարներն առնաստիճանով գործադրում էր ազգային եկեղեցական գործերի վրայ և Եփրեմի պարտքերն էր վճարում<sup>\*\*)</sup>, թէպէտև նա էլ քիչ գումար չէ ծախսել յանպէտս և յումպէտս։

## ԶԹ.

Եփրեմի կաթողիկոսութիւնից հրաժարուելն՝ բայց, մի և նոյն ժամանակ, իբրև կաթողիկոս՝ աթոռային ամենատեսակ տուրքերն, նւէրներն

<sup>\*)</sup> Եփրեմի ձեռագիր կոնդակներից.

<sup>\*\*)</sup> АКТЫ, V. кр. 456.



իւր մօտ գանձերն՝ շատ նեղը լծեց էջմիածնի միաբանութեանը:

Վերջինս անդադար դիմում էր Եփրեմին և խնդրում, աղաչում որ կամ վերադառնայ վանքը և կամ իւր թողած պարտքերի հատուցման մասին՝ որ և է տնօրէնութիւն անելով՝ իրանց ազատէ պարտատէրների ձեռքից\*):

Սակայն միաբանութեան թախանձանքներն միանգամայն ապարդիւն էին անցնում:

Միաբանութիւնից ոչ պակաս Երևանի Սարգարի համար էլ զգալի էր Եփրեմի բացակայութիւնը Մայր Աթոռից:

Զգալի էր այն պատճառաւ, որ նախ՝ նրա անձնական արդիւնքի աղբիւրն ևս ցամաքել էր. և երկրորդ, որ ամենագլխաւորն էր, քաղաքական տեսակէտով՝ պարսիկ կառավարութեան համար նւաստացուցիչ, կասկածելի. նոյն իսկ վտանգաւոր էր կաթողիկոսին ոռոսաց հողում գտնւելը: Այն ևս՝ Ներսէս արքեպիսկոպոսի նրման մի մարդու անմիջական և զօրեղ ազդեցութեան տակ գտնւելն:

Իսկ թէ՛ Ներսէսը ոռոսաց քաղաքական շահերին նւիրած անձն էր, — այդ ոչ ոքի համար, ևս առաւել պարսիկ կառավարութեան համար, գաղտնիք չէր:

Ուստի և այդ կառավարութիւնը ուզում էր անշուշտ Եփրեմին վերադարձնել էջմիածին:

Եյդ նպատակաւ էլ՝ Երևանի Սարգարը զը-

\*) АКТЫ, V. кр. 456.

րեց Երմօլովին, որ եթէ Եփրեմը չվերադառնայ, էջմիածնի միաբանութիւնը և պարսկահայերը ստիպւած կը լինեն իրանց համար նոր կաթողիկոս ընտրել տալու\*):

Երմօլովը փութաց պատասխանել Սարգարին, որ էջմիածնի կաթողիկոսին ընտրում են ոչ միայն պարսկահայերը, այլ և ամեն երկիրների հայերը և թէ՛ կաթողիկոսի հաստատութիւնը կախած է, ի թիւս այլոց, նա և ոռոսաց կայսրից, թէ Եփրեմը, իբրև օծեալ կաթողիկոս, անփոփոխելի է\*\*):

Անշուշտ ընթերցողը կը հարցնէ՝ չէ՞ որ Եփրեմը ոռոսաց կայսեր, պարսից գահաժառանգին և Չուշիում իւր մօտ եղած արքեպիսկոպոսներին տւած հրաժարականներումը՝ դրականօրէն առաջարկում էր իրան յաջորդացու ընտրել:

Արդ՝ ինչո՞ւ այդ ընտրութիւնը տեղի չունեցաւ: Պատճառն ի՞նչ է:

— Ահա ինչ:

Ղ.

Ներսէս արքեպիսկոպոսի համար անկարելի էր նոր կաթողիկոսի ընտրութեան հարցը բարձրացնել, որովհետև նա գիտէր հայ եկեղեցւոյ այն կանոնը, որով հայրապետը ընտրւում և օծւում է ցմահ: Եւ եթէ նա ինքը Եփրեմի հրաժարականների մէջ գրել տւեց, որ ազգը թող մի այլ կաթողիկոս ընտրէ, — նա այդ արած էր Երմօլո-

\*) АКТЫ, V. кр. 457.

\*\*) Նոյնը, № 618.



վի բարկութիւնը իջեցնելու, նրա կամքը կատարած լինելու համար: Հակառակ դէպքում, այսինքն՝ եթէ Եփրեմը չհրաժարւէր, նա անշուշտ պարտաւոր էր յետ դառնալ էջմիածին: Իսկ վերադարձը ոչ Եփրեմն էր ուզում, ոչ էլ Ներսէսը կամենում:

Թէ, արդարեւ, Ներսէսը Եփրեմին հրաժարւած չէր համարում,—նա այդ չթագցրեց վերջերում և՛ Երմօլովից, երբ սրան հաղորդում էր ի պաշտօնէ այն խօսակցութեանը, որ Ֆեթալիխան պարսից դեսպանի հետ ունեցաւ Թիֆլիզում\*):

Ահա թէ ինչի Ներսէսը չէր կարող նոր կաթողիկոս ընտրելու հարց բարձրացնել:

Միւս կողմից՝ հարկ էլ չկար մի այդպիսի հարց զարթեցնելու, քանի որ արդէն ինքը Ներսէսը անում էր կաթողիկոսութիւնը...»:

ՂԱ.

Երմօլովի համար էլ հարկ չկար նոր կաթողիկոսի ընտրութեան հարցը բարձրացնելու, կամ բարձրացնել տալու:

Վասն զի նա շատ լաւ տեսնում էր, որ ընտրուած կաթողիկոսը չէ կարող ուսաց թեկնածուն լինի:

Իսկ եթէ հարկը ստիպեց անպատճառ ուսաց թեկնածուին անցկացնել.—հարկ կը լինի նորից ճնշում, նորից բռնութիւն գործ դնել ինչպէս հայերի—նոյնպէս և պարսիկ կառավարութեան վրայ:—Իսկ այս բանը՝ միանգամայն հակառակ էր ուս կառավարութեան այն կառավարութեան այն ժամանակիս քաղաքականութեանը:

Նորանոր «Դաւիթ Դանիէլեան» շփոթներ առաջ բերել տալն՝ այն ժամանակ բնաւ ձեռնատու չէր,

Ահա թէ ինչ պատճառաւ՝ ուս կառավարութիւնը Եփրեմի պաշտօնական հրաժարականը իւր ձեռին ունենալով՝ շարունակում էր անպաշտօն կէտքով նրան կաթողիկոս ճանաչել դարձեալ:

Անշուշտ այդ քաղաքական հաշիւ օգտին էր, որ Երմօլովը, կամ արտաքին գործոց նախարարը՝ չհասցրին ըստ պատկանելոյն՝ Եփրեմի այն հրաժարականներն, որոնք նա Գիւլստանից ուղղած էր յանուն պարսից գահաժառանգի և Կ. Պօլսոյ հայոց պատրիարքին և ժողովրդին:

Միւս կողմից՝ Երմօլովը շատ լաւ տեսնում էր, որ առանց կաթողիկոս կոչւելու՝ արդէն կաթողիկոսութիւն է անում Ներսէս արքեպիսկոպոսը, որին ամբողջ հայ ազգը ճանաչում է և սիրում է, որ Եփրեմի նման կամազուրկ, մի խեղճ ու մոլոր անձն չէ, այլ ունի խելք, ընդունակութիւն, ճարպիկութիւն և որ քաղաքականութեան համար ամենաանհրաժեշտ բանն էր՝ Ներսէսը ունէր ջերմ հայրենասիրտրիւն, պարսիկների ձեռքից իւր հայրենիք ազատելու աննկուն փափագ ու ցանկութիւն:

Արդ՝ Ներսէս Աշտարակցու այս սրբազան

\*) АКТЫ, V. кр. 455, 456 և 457, № № 618, 619.



յատկութիւնները՝ ամենացանկալի առիթներ էին ընծայում ամեն մի սրբութիւն հարստահարող, ամեն մի վսեմութիւն շահագործող քաղաքակա- նութեան համար:

ՂԲ.

Երբ պարսիկ կառավարութիւնը համոզւեց, որ իրան հաւատարմութեան երդում տւող Եփ- բեմը այլևս չի հեռանալ ռուսաց հողից, — կամե- ցաւ նրան փախցնել բռնութեամբ էջմիածին վերադարձնելու նպատակով\*):

Սակայն Երմօլովի ձեռք առած գզուշու- թիւնները Հաղբատի վանքի շրջակայքում՝ պար- սից այդ նպատակը եւ ի գերե հանեցին\*\*):

Երմօլովը մինչև անգամ բացարձակ գրեց թէ Աբբաս Միրզին և թէ Երևանի սարգարին, որ ինքը չի թող տալ Եփրեմին վերադառնալ, մինչև որ էջմիածնի վանքը իւր միաբանութիւ- նով և իւր կալուածներով դուրս չը գայ սար- գարի իրաւասութիւնից և կախումն ունենայ մի- միայն գահաժառանգից\*\*\*):

Այս միտքը Երմօլովին թելադրում էր Ներ- սէս արքեպիսկոպոսը:

Յանձին Եփրեմի հասած վիրաւորանքի՝ Երմօլովը վիրաւորւած էր համարում նրան հաս- տատող թագաւոր կայսեր պատիւը:

Ընթերցողը պիտի գիտենայ, որ Եփրեմը

\*) АКТЫ, V. кр. 456.

\*\*) АКТЫ, V. № 616.

\*\*\*) Նոյնը, №№ 620 և 622.

էջմիածնից դուրս գալուց առաջ՝ մի օր Երևան էր գնացել մի պարսկական տօն շնորհաւորելու սարգարին:

Կաթողիկոսը իւր կուրծքը զարդարել էր միմիայն ռուսական չքանշանով: Սարգարը գայ- րացած՝ ասել էր Եփրեմին. «Եթէ միւս անգամ այդ չքանշաններով ինձ ներկայանաս, — կը կար- գադրեմ որ հէնց այդ ժապաւէնով քեզ խեղդեն»:

Այս լուրը, իւր ժամանակին, Ներսէսը հաս- ցրել էր Երմօլովի ականջին\*): Այժմ երբ առի- թըն եկաւ, Երմօլովը սարգարի էլ, Աբբաս Միր- զի էլ երեսովը տուեց:

Երկնչելով Երմօլովի խիստ լեզուից, չկամե- նալով Եփրեմի պատճառով իւր յարաբերութիւնը նրա, Երմօլովի, հետ լարելու, — Աբբաս Միրզան 1825 թուականի մայիսին մի շատ փաղաքշա- կան և ողորմած ֆերման ուղարկեց, որի մէջ Հայոց կաթողիկոսին յուսադրում էր իւր պաշտ- պանութեան և անսահման ողորմածութեան մէջ:

Սակայն Ներսէսը և Երմօլովը այդ ֆերմա- նին եւ նշանակութիւն չտուին:

Նրանց համար կաթողիկոսական գահի ա- պահովութիւնը, արդարեւ, ունէր նշանակութիւն: Բայց աւելի նշանակութիւն ունէր այն տեսակէ- տով թէ որ աստիճան կարելի է օգտուել այդ հարցով՝ էջմիածինը և նրա շրջակայ գաւառնե- րը պարսիկներից ի բաց կորզելու համար:

Քաղաքական գէպերը իրականացրին՝ այդ նպատակի իրականացումը:

\*) АКТЫ, V. № 606.



ՂԴ.

Յայտնի է, որ 1825 թուականի նոյեմբերի 18-ին Աղեքսանդր Ա. կայսրը վախճանուեց անգաւակ:—Հանգուցեալի եղբայր Կոստանդնի հըրաժարմամբ՝ գահ բարձրացաւ նրա կրտսեր եղբայրը՝ Նիկողայ Պաւլովիչը, որի պէմ ապստամբութիւն ծագեց, որին մասնակցում էին թիկնապահ զօրքի մի քանի գնդերն:

Ռուսաց պատմութեան մէջ այդ ապստամբները յայտնի են «գեկաբերիստներ» անունով, որովհետեւ ապստամբութիւնը ծագեց գեկտեմբեր ամսի 14-ին:

Թէեւ Նիկողայ Պաւլովիչը զինու զօրութեամբ ձեռաց ընկճեց այդ ապստամբութիւնը, սակայն նրա համբաւը՝ չափազանցութեամբ և արագութեամբ տարածուեց ամեն տեղ, մինչև իսկ Պարսկաստան:

Աբբաս Միրզան շունչ ու հոգի առաւ: Պարսից զահաժառանգը մեծայոյս էր, որ շուտով Ռուսաստանում ներքին, եղբայրասպան պատերազմ կը ծագի, որի պատճառով ռուս զօրքերը հարկադրուած կը լինեն թողնել Կովկասը և քաշուել Ռուսաստան: Դա ամենայարմար առիթ կը լինի Աբբաս Միրզի համար՝ իւր զօրքը առաջ մղել և ռուսների պարսիկներից խլած երկիրները յետ ստանալ:

Աբբաս Միրզի այս ծրագիրը, ինչպէս և պէտք էր սպասել, հաւանութիւն գտաւ պարսից ժողովրդի մէջ, որի հոգևորականները աշկարայ

գրգռում էին իրանց ազգակիցներին ռուսաց դէմ:

Ընթերցողը պէտք է գիտենայ, որ մինչև այդ ժամանակ ռուսաց և պարսից երկիրների նոր սահմանը՝ տակաւին վերջնականապէս որոշուած չը լինելով, այդ առթիւ դեռ շարունակուում էին բանակցութիւնները երկու տէրութիւնների մէջ:

Այդ բանը ձեռին լաւ առիթ բռնած՝ Աբբաս Միրզան մի կողմից իւր զօրքերը կամաց-կամաց ռուսաց սահմանագլխին էր մօտեցնում, միւս կողմից Թիֆլիզ գետաւաններ էր ուղարկում սահմանի ինդիւրը լուծելու պատրուակով,—իսկապէս լրտեսելու և ներքին Ռուսաստանի դրութեան մասին՝ ճիշտ տեղեկութիւններ հաւաքելու համար\*):

ՂԴ.

Մինչ այս մինչ այն՝ 1826 թուի փետրուարին Պերբուրգից դէպի Պարսկաստան ճանապարհ ընկաւ իշխան Մենշչիկովը, որ Նիկողայոս կայսեր ինքնաձեռագիր նամակները տանում էր՝ Շահին և Աբբաս Միրզին, որոց մէջ իւր գահ բարձրանալը յայտնելով ռուսաց կայսրը ցանկութիւն էր յայտնում խաղաղութիւնը հաստատ պահելու: Մենշչիկովին իրաւունք էր տրուած՝ սահմանի վերաբերեալ հարցը տեղն ու տեղը լուծելու և վճռելու, նոյնիսկ յայտնի գիշողու-

\*) Ամենայն հայոց կաթող. Ա. հր. 229—232.



Թեամբ՝ Թալիշի խանութեան մի մասը Պարսկաստանին վերադարձնելով:

Բայց Մենշչիկովը հէնց որ իւր ոտքը Պարսկաստան դրաւ՝ այնպիսի իրարանցումի, ժողովրդի այնպիսի ոգևորութեան, զօրքի այնպիսի զինաւորման ու շարժումների հանդիպեց, այնպիսի ատելութեան ցոյցեր տեսաւ դէպի ռուսները, որոնք պարզ ապացուցանում էին իւր միասիրտի ապարդիւնութիւնը:

Դրանում կատարելապէս համոզուեց ռուս իշխանը՝ նա մանաւանդ Շահին ներկայանալիս:

Շահը ոչ միայն սառը կերպով ընդունեց Մենշչիկովին, այլ և Նիկողայոս կայսեր նամակը, — ընդունուած սովորութեան հակառակ — փոխանակ իւր ձեռքով ընդունելու, առաջարկեց դեսպանին մօտի եղած բարձի վրայ դնելու:

Մենշչիկովը ունայնաձեռն յետ դարձաւ դէպի Ռուսաստան:

Բայց... Երևանում նրան արգելեցին առաջ գնալու: Եւ ռուսական դեսպանը, հակառակ միջազգային օրէնքի, ստիպուեց մի ամսից աւելի պատուաւոր բանտարկելութեան մէջ մնալ, մինչև որ, ուր ուրեմն, Թաւրիզի անպիտանական դեսպանի միջամտութեամբ կարողացաւ ազատուել:

Դեռ Մենշչիկովը ռուսաց սահմանը չէր մտած, որ պատերազմն արդէն սկսուած էր:

ՂԵ.

1826 թուի յուլիսի 16-ին պարսից մեծաքանակ բանակը՝ յանկարծակի թափուեց Փամ-

բակի և Շորագեալի սահմանապահ և սակաւթիւ ռուսական վաշտերի վրայ և անողորմաբար սկսեց ջարդել նրանց:

Եւ որովհետեւ այդ վաշտերը գետեղուած էին, ամենամեծ մասամբ, հայկական զիւղերում, — ռուսի ռուս զինուորների հետ, հայերը ևս՝ աղամարդիկ և կանայք, մեծերը և փոքրերը, քաջութեամբ դիմադրելուց յետոյ, վերջ ի վերջոյ, ընկնում, սրախողխող էին լինում պարսիկներից:

Այսպէս Փամբակի և Շորագեալի բազմաթիւ, ծաղկած հայկական զիւղերը մի քանի օրում անմարդաբնակ աւերակների վերածուեցան, որոնց թշուառ բնակիչների դիակները կոյտերը դէզ առ դէզ լցուած էին ամեն տեղ:

Թէ ռուսական վաշտերի զինուորներից և թէ հայ զիւղացիներից կենդանի մնացած սակաւթիւ անձինք՝ մաղապուրձ Լօռուայ կողմերը ապաւինելով՝ Զալալ-օղլի և Գարգառ զիւղերի միջհաւաքուեցան ոգի ի բոին:

Փամբակի և Շորագեալի գլխին այս գուլումը բերողը՝ Հասան խանն էր — Երևանի սարգարի եղբայրը:

Հասան խանի հետ միաժամանակ պարսկական մի այլ բանակ էլ (60 հազար հոգի) Ղարաբաղ մտաւ Աբբաս Միրզայի իրան առաջնորդութեամբ: Աւելորդ է ասելը, որ Ղարաբաղի տեղական թուրքերը անհամբերութեամբ սպասում էին Իրանի զահաժառանգին:



Աբբաս Միրզի առաջ խաղալը տեսնելով՝  
նուս սահմանապահ գնդերը յետ քաշուեցին դէ-  
պի Շուշի: Բայց պարսիկները հասնում էին ե-  
տեներիցը և անխնայ կոտորում:

Պարսից կատաղութեան մասին մի գաղա-  
փար կազմելու համար՝ բաւական է յիշել, որ  
Ախղարաչայ գետակի մօտ՝ մի ռուսական գունդ,  
որ բաղկացած էր 1000 զինուորներից և 21  
սպաններից, ամբողջապէս կոտորուեց:

Հայերի տներում և նրանց միջոցով թագ  
կենալով՝ ամբողջ գնդից ազատուեցան միմիայն  
6 զինուոր և 2 սպայ\*):

Գալով հայերին, — պարսիկները նրանց Տա-  
թևի հռչակաւոր վանքը աւերեցին և վանահայր  
արքեպիսկոպոսին, — որ Ներսիսի սիրելին էր,  
գերի տարան՝ շատ հայերի հետ միասին Թաւ-  
րիդ, ուր նա յանկարծամահ եղաւ:

Թշնամու ձեռքից ազատուած ռուս զինուոր-  
ները մի կերպ բերդը (Շուշի) հասնելով՝ միա-  
ցան այնտեղ եղողների հետ, — ընդամենը 1700  
հոգի, գնդապետ Բէռտի հրամանատարութեան  
ներքոյ:

Այդ քաջերը վճռեցին տեղական հայերի  
հետ և նրանց օգնութեամբ, պաշտպանուել մին-  
չև իրանց արեան վերջին կաթիլը:

Դժբաղդաբար բերդում ոչ բաւականաչափ  
պաշար կար, ոչ ջուր և ոչ էլ վառոդ:

\*) Այս ամենի մասին տես АКТЫ, VI. 6. Կր. 352—363, և  
Կր. 371 № 675. և և Ամենայն Հ. Կաթող. Կր. 234—237.

Շատ չանցած պարսկական բանակը եկաւ և  
բերդը շրջապատեց, շղթայեց:

Պաշարումը 41 օր տևեց: Թշնամու ամեն  
տեսակ փորձերը բերդին տիրելու համար՝ ա-  
պարդին էին անցնում: Սակայն պաշարուած-  
ների դրութիւնը օր աւուր ծանրանում էր ա-  
ռաւելապէս պաշարի, մթերքի չգոյութեան  
պատճառով:

Ինչպէս միշտ՝ հայերը այս անգամ ևս մե-  
ծամեծ ծառայութիւն էին մատուցանում բեր-  
դապահ բանակին:

Եղան այնպիսի սրտոտ, քաջ հայեր որոնք  
գիշեր ժամանակ բերդի ժայռերից թռկերով սո-  
ղոսկում, ցածր էին իջնում և պարսիկներից ա-  
զատուելով՝ Թիֆլիզ երմօլովին լուր էին հասցը-  
նում, օգնութիւն խնդրում\*):

Եղան հայ կարիճներ, որոնք իրանց ուսերի  
վրայ բառնալով ցորնի տոպրակները՝ գիշերները  
իջեցնում էին Զօշ գիւղի ջրաղացները, աղուն  
անում և վերադառնում բերդը՝ շատ անգամ  
թշնամու հետ ընդհարուելով և նրան մոլորեց-  
նելով\*\*):

Այդ քաջերից պակաս ծառայութիւն չէին  
մատուցանում նաև Շուշուայ մի քանի հայ վար-  
պետները՝ զօրքի համար օրական 30—40 գըր-  
վանքայ վառօդ պատրաստելով\*\*\*):

\*) В. ПОТТО.-ի գրութեանցից.

\*\*) Նոյնպէս.

\*\*\*) Նոյնպէս.



Տեսնելով որ Շուշիի գրաւումը ձգձգւում է, Աբբաս Միրզան իւր բանակից 12 հազար զօրք Գանձակի վրայ ուղարկեց: Իսկ ինքը շարունակեց բերդի պաշարումը:

Հէնց որ այդ բանակը Գանձակին մօտեցաւ տեղացի թուրքերը նրա հետ միացան և բանտարկուածներին ազատեցին:

Այնուհետև սկսուեց կոտորածը:

Ռուս պաշտօնեաները, իրանց ընտանիքներով, գրեթէ ամենքն էլ սրախողիող եղան: Շատ քչերն ազատուեցան՝ հայերի տներում ապաւինելով:

Գանձակի մօտ եղած մի քանի գերմանական գաղութները—Ելէնէնդօրֆ, Աննէնֆելդ և Կատարինֆելդ,—ուերակ դարձան պարսիկների ձեռքով: Նոյն վիճակին ենթարկուեցան և Բոլնիսի ձորի հայ գիւղերը:

Ժողովրդին կոտորելով և գիւղերն աւերելով՝ կանանց, առաւելապէս գերմանահիւներին գերի տարան պարսիկները և վերջերում նրանց օգնութեան հասած մի քանի հազար սպառազինեալ քրդեր:

Երբ այս աղէտների լուրը Թիֆլիզ հասաւ՝ ժողովուրդը սարսափեց: Նրա երեւակայութեան մէջ յանկարծ վերածնեց Աղա Մահմադ խանի նախորդ արշաւանքը: Եւ ամեն ոք սկսաւ իւր գլխի ճարը տեսնել՝ իրանց գանձերը հորելով, Գուշէթ և այլ լեռնային տեղեր փախչելով ևայլն:

Թիֆլիզում եղած զօրքի բանակութիւնը

ընդամենը 3000-ի չէր հասնում, որ ի հարկէ, անզօր էր դիմադրելու Աբբաս Միրզին, որին ժամ առ ժամ մարդիկ սպասում էին Թիֆլիզում:  
ՂԶ.

Իայց Աբբաս Միրզան Շուշին չվերցրած չէր կարող, կամ չէր ուզում առաջ խաղալ:

Իսկ Շուշին ինչպէս յիշել ենք, ի շնորհս մի բուռ ոռոս զինուորների և տեղական հայերի բուռն դիմադրութեան՝ դեռ կանգուն էր և մըտքով անգամ չէր անցկացնում անձնատուր լինել:

Ղարաբաղի մայրաքաղաքի—Շուշիի,—այդ հերոսութեանն է պարտական Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիզը, որ այս անգամ ազատ մնաց Աղա Մահմադ խանի գործած խժոժութիւններն ու աւերածութիւնները վերստին իւր վրայ փորձելու:

Շուշեցիներին և նրանց անառիկ բերդին ուժով յաղթահարել չկարողանալով՝ Աբբաս Միրզան փորձ փորձեց խորամանկութեամբ հասնել իւր նպատակին:

ՂԷ.

Նախորդ գլուխներից մէկում մենք տեսանք, որ Աղուանից կաթողիկոսները՝ իրենց ինքնուրոյնութիւնը ունենալով հանդերձ՝ գտնուում էին ամենայն Հայոց կաթողիկոսի գերիշխանութեան ներքոյ:

Տեսանք որ Մեծին Պետրոսի օրերիցն ըսկսած՝ Աղուանից կաթողիկոսները սկսան քաղաքական հարցերի մէջ մտնել և Ռուսաց պաշտպանութեան վրայ իրանց յոյսը դնելով՝ սկսեցին



ոչ միայն ընդվզել է ջմաժնի դէմ, այլ և աշխատում էին իրանց իրաւասութեան ենթարկել ողջ ռուսահայերին:

Եւ եթէ Սիմէօն և ապա Ղուկաս կաթողիկոսների գործ դրած ջանքերը չլինէին՝ Աղուանից կաթողիկոսները անշուշտ կը հասնէին իրանց նպատակին:

Եփրեմ կաթողիկոսի օրով՝ Վրաստանի և առհասարակ Անդրկովկասի ռուսահայատակ հայերի վրայ առաջնորդ նշանակուած Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին՝ ռուս կառավարութեան աջակցութեամբ՝ Աղուանից կաթողիկոսութիւնը միանգամայն վերացրեց և 1815 թուին Աղուանից Սարգիս կաթողիկոսին պաշտօնապէս հրատարակեց Գանձասարի կամ Ղարաբաղի արքեպիսկոպոս, կամ ինչպէս սովորաբար անուանում էին միտրօպօլիտ\*):

Այնուհետև Սարգիսը այդ համեստ տիտղոսով գրեթէ իբրև մի սոսկ վանահայր՝ ապրում էր Գանձասարի վանքում:

ՂԸ.

1826 թուին երբ Աբբաս Միրզան յանկարծակի եկաւ և Շուշին պաշարեց՝ լուր ուղարկեց Սարգիս միտրօպօլիտին և տեղական հայ մեղիքներին, որ զան և իրան ներկայանան:—Ոչ միտրօպօլիտը և ոչ էլ մեղիքները չկատարեցին պարսից գահաժառանգի այդ առաջարկը:

Եւ դրանով նրանք ի հարկէ, շարժեցին Աբ-

\*) Акты, V6, кр 437, № 518, և кр. 443, № 522.

բաս Միրզի բարկութիւնը:

Գահաժառանգը աւելի միտրօպօլիտի վրայ էր զայրացած:

Նա զօրք ուղարկեց Գանձասար և ինչպէս միտրօպօլիտին, նոյնպէս և մեղիքներին բռնութեամբ պարսից բանակը բերել տուեց՝ Շուշուայ բերդի տակ:

Բանակը հասնելուց առաջ՝ Ղարաբաղի նախկին տիրապետող Մէհթի Ղուլի խանը ճանապարհին բարեկամաբար հաղորդել էր Սարգիս միտրօպօլիտին, որ ռուսները թողնում են պարսիկներից գրաւած երկիրները և յետ քաշում Անդրկովկասից:

Մէհթի Ղուլի խանը միտրօպօլիտին այս ևս հաղորդեց, որ ինքը արդէն բռնած ունի Երմօլովի այն նամակը, որով Կովկասի կառավարչատը հրամայում է Շուշում պաշարուած գնդապետ Րէուզին՝ թողնել այդ բերդը և յետ քաշուել:

Մէհթի Ղուլի խանի հաղորդած այդ տեղեկութիւնը պարզամիտ Սարգիսը հալած իւղի տեղ էր ընդունել, երբ պարսից բանակն հասաւ:

Վերջինս այդ միջոցին իւր ձեռքն ընկած հային գլխատել էր տալիս:

Եւ հայ արքեպիսկոպոսի աչքին, նախ քան Աբբաս Միրզին ներկայանալը, առաջին անգամ ընկան այն հայերը, որոնց գլխատելու հրամանը դեռ նոր պիտի գործադրուէր:



ՂԺ.

«Երբ այս երկիրը,—այս եղաւ միտրօպօլիտի տռաջին խօսքը երբ ներկայացաւ Աբբաս Միրզին,—եղած է պարսից կամ ռուսաց իշխանութեան ներքոյ, բնակիչները հպատակ են եղած տիրողին»:

Հիմա եթէ այս երկիրը պէտք է մնայ պարսից ձեռքին, բնակիչների ջարդելուց ի՞նչ օգուտ»:

Այս և սրա հման յորդորիչ խօսքերից Աբբաս Միրզան զիջաւ՝ կամ ձեացրեց թէ զիջաւ՝ և հրամայեց կալանաւորուած հայերին այլևս չգլխատել, այլ ազատ թողնել: Միայն մի պայմանով, որ միտրօպօլիտը և մելիքը բերդի տակից՝ յորդորեն Շուշուայ հայերին անձնատուր լինելու:

Այդպէս էլ արին: Եւ միտրօպօլիտը շրջապատուած մելիքներով և պարսիկ իշխաններով՝ բերդի տակից բարձր ձայնով սկսաւ կանչել. «ինքը՝ Սարգիս կաթողիկոսն է և երգւում է իր սուրբ կարգով, որ պարսիկները չեն փասիլ նոցա, եթէ անձնատուր լինեն»:

Սակայն բերդի հայերը՝ անշուշտ գիտնալով որ իրանց միտրօպօլիտը այդ քայլն անում է ստիպուած պարսիկներից՝ նրա խօսքերին ուշադրութիւն չգարձրին և անձնատուր չեղան:

Վերջերում մի կամ մի քանի չարամիտ մարդիկ ձայն ձգեցին՝ իբրեւ թէ Սարգիս միտրօպօլիտի հրաւերին Շուշուայ հայ կանայք և աղջկերք քարէ կարկուտով պատասխանեցին Սարգ-

սի երեսն ի վեր պոռալով իբր թէ՝ «այսուհետև դու մեր հոգևոր տէրը չես. այլ մօլլա Սարգիս ես»:

Ինչ էլ որ լինի, Սարգիս միտրօպօլիտը իր այս կամայ արդեօք թէ ակամայ վարմունքով՝ ազատեց ոչ միայն Գանձասարի վանքը այլ և շրջակայ հայ գիւղերն անխուսափելի աւերմունքից ու կոտորածից:

ՂԺ.

Սակայն Սարգիս արքեպիսկոպոսի այս վարմունքի վրայ այլ աչքով նայեց երմօլովը և չարամիտների հնարած առասպելը՝ իբրեւ իսկական իրողութիւն ընդունելով, երբ ռուսները Աբբաս Միրզին քշելով Շուշին ազատեցին, Կովկասի կառավարչապետը անմիջապէս ձերբակալել տուեց Սարգսին և խիստ հսկողութեան ներքոյ՝ Թիֆլիզ բերել տալով՝ Ներսէս արքեպիսկոպոսին հետևեալ նամակն ուղղեց՝ գրուած գեկտ. 2-ին 1826 թուին\*):

«Ղարաբաղի ապստամբութեան ժամանակ, երբ տեռութեան յոյսը մնացել էր միւլիայն հայոց վրայ, որպէս իր կրօնակիցների, Սարգիս արքեպիսկոպոսը ոչ միայն նսեմացրեց իրան գարշելի դաւաճանութեամբ և անձնատուր եղաւ Աբբաս Միրզին, այլ և յորդորում էր գործել նոյնը հայոց ժողովրդի աւագներին: Նա ներկայանալով Շուշուայ բերդի տակ, գովաբանում էր Ղաջարի (Աբբաս Միրզայի) վեհանձնութիւնը և համոզում էր քերդը պաշտպանող հայերին ան-

\*) АКТЫ, V. кр. 456.



ձնատուր լինել: Թշնամեաց բանակում, խաչը ձեռքին, նա Աստծու օրհնութիւնն էր հայցում այն յարագործին, որ առաջնորդում էր աւագակներին և երբ սոքա սրին էին մատնում ձեռքներն ընկած թշուառներին»:

«Այսու ամենայնիւ, — շարունակում է Երմօլովը, — յարգելով նրա (Սարգսի) բարձր աստիճանը և պաշտպանելով այն նախատինքից, որին մրտադիր էին ենթարկել նրան ընդդէմ հայք, վասն զի երբ նա յորդորում էր հայոց դաւաճանել, սոքա բերդից կոչում էին նրան Վօրջա Սարգիս, — ես հրամայեցի ուղարկել նրան Թիֆլիզ իբրեւ մի մարդու, որ արժանի է խիստ պատժի: Այդ պատիժը ես կը սպասեմ ձերդ սրբանութեան խստապահանջութիւնից, վասնզի դուք էք հայոց ազգի հաւատարմական զգացմանց պահապանը:

«Յաւելով պիտի ասեմ, որ Վօրջա Սարգսի գարշելի վարմունքը մեծապէս ազդեց հայոց վրայ, որոնք միշտ նշանաւոր են եղել իրանց հաստատ հաւատարմութեամբ առ տէրութիւնն, բայց որոց մեջ այս անգամ երեւեցան ոչ սակաւ ուխտադրութիւններ»:

«Այս եղելութիւնը պատմելով տակ ու վերեւ է լինում սիրտս, ամենաարժանապատիւ իմ հովուապետ, բայց ձեզանից յուսամ ուղիղ միջոց բնաջինջ անելու վարուց այդ ապականութիւնը, որ մի վնասակար օրինակ է և որի նմանը Ղարաբաղի վրդովմանց ժամանակ երբէք չի եղած»:

ՃԱ.

Կովկասեան կառավարչապետի այս նամակի բովանդակութեան և յատկապէս մեր ընդգծած բառերի մասին խորհրդածելն՝ ընթերցողին իրան թողնելով՝ մենք պէտք է նրան յայտնենք, որ Ներսիսի կատարած քննութեամբ Երմօլովի գլխաւորեց ոչ մէկն էլ չհաստատուեց, այլ երևան եկաւ այն, ինչ որ մենք այս հատուածի սկզբումը դուրս ենք բերել:

Այդ ժամանակ Երմօլովը փոխուած էր և նրան յաջորդել էր Պասկեվիչը, որին հաղորդելով իր քննութեան հետևանքը՝ Ներսիսը աւելացնում էր հետևեալը՝ «այսպէս անաբողոր հանգամանքներից երևում է, որ Սարգիս արքեպիսկոպոսը բոլորովին անմեղ է և մեղադրանաց ոչինչ առիթ չի տուած: Վասն որոյ կամ բարեհաճեցէք հաւաստիանալ այս մասին նորանոր քննութեամբ և կամ բաւականանալով վերոբերեալ տեղեկութիւններովս, թոյլ տուէք Սարգիս արքեպիսկոպոսին վերադառնալ իր բնակութեան տեղը՝ Ղարաբաղ»\*):

Պասկեվիչը բաւականանալով Ներսիսի կատարած քննութեամբ՝ արձակեց միտրօպօլիտին\*\*) որ հասնելով Գանձասար անկողին մտաւ, որտեղից այլևս չվերկացաւ մինչև հետևեալ տարին, երբ և կնքեց իր մահկանացուն: Նրան յաջորդեց նրա եղբորորդի Բաղդասար արքեպիսկոպոսը:

\*) АКТЫ, VII. кр. 251.

\*\*) Նոյնը, № 204-ժանութիւնը



ՃԲ.

Մենք տեսանք, որ պարսից յանկարծական յարձակումները շատ մեծ հոգս պատճառեցին ուսու կառավարութեան, որ իր ձեռքի տակ բաւականաչափ զօրք չունենալով՝ անելիքը չէր իմանում:

Կառավարութեան հոգսը առաւել ևս բազմացաւ, երբ Անգրիկական բռնապետակ պարսիկները ևս, աշկարայ կերպով, միացան իրանց կրօնակից պարսիկ զօրքի հետ:

Տեսանք որ այդ կրկնակի չարագուշակ դէպքերը այն աստիճան ներգործոցին տեղացի խաղաղ քրիստոնեայ տարրի վրայ, մասնաւորապէս Վրաստանի մայրաքաղաքում, որ նրանք սարսափահար սկսեցին լեռնային կողմերը փախչոտել՝ հէնց որ Գանձակի պաշարումը լսեցին:

Երկրի և ժողովրդի այդ կրիտիկական վիճակին մի որևէ ճար անելու նպատակաւ՝ Երմովը իր մօտ գինուորական խորհուրդ կազմեց, ուր հրաւիրուած էր Հայոց առաջնորդ Ներսէսը:

Այդ խորհրդում որոշուեց. ա) գէսից-գէնից մի քանի վաշտ զօրք ժողովել և ուղարկել Աղստաֆա պարսիկների մուտքը ի Թիֆլիզ արգելելու և բ) որովհետև Պետերբուրգից տակաւին կարգադրութիւն եղած չէր ի պաշտօնէ պարսիկներին պատերազմ յայտարարելու, ուստի և յանձնարարուեց Ներսիսին, որ սա, իր կողմից, մի ընդհանուր շրջաբերականով՝ հրաւէր կարդայ

կարդայ հայ ազգին սրտաւնդուելու և պարսիկներին դիմադրելու:

Եւ շրջաբերականը խմբագրուեց և հայ թարգմանութեամբ հանդերձ՝ Ներսիսի ստորագրութեամբ 1826 թ. յուլիսի 29-ին՝ ցրուեց ազգի մէջ:

Շրջաբերականը սկսվում էր այսպէս՝ «Պաշտուաբժան Հայոց ազգին, որ միշտ հաւատարիմ հպատակ է եղած Քրիստոսասէր կայսրութեան ոռւսաց և բնակւում է Թիֆլիզում, Երևանում, Ղարաբաղում, Նուխիում, Շամախում, Բազում, Դարբանդ և առհասարակ թէ քաղաքներում և թէ գիւղերում՝ հոգեւորականաց և աշխարհականաց»:

Այնուհետև Ներսէսը ծանուցանելով հայ ազգին, որ պարսիկները, հակառակ միջազգային օրէնքների, յանկարծակի մտել են «ուսաց սահմանները և խոյս տալով ոռւսական սահմանապահ զօրքերից\*» աւագակաբար յարձակվում են գիւղերում առանց ամենայն նախազգուշութեան բնակւող հայոց վրայ» յորդորում է նրանց, — հայերին, դիմադրել թշնամուն և սրա արբանեակներին կամ ոռւսաց զօրքերի հետ և կամ թէ մի ուրիշ կերպ, որ աւելի յարմար կը լինի ներկայ աւագակօրէն յարձակմանց միջոցին: Հաւատացած եղէք, — շարունակում է Ներսէսը, — որ Աստծոյ հրաշալի փրկութիւնը կը պահպանէ ձեզ ամեն վտանգից որպէս ներկա-

\*) Ներսէսը կարող էր չիմանալ, որ պարսիկները նախ սահմանապահ զօրքերին են կոտորում:



յումս, այնպէս և ազգէ ազգ, իսկ աստուածա-  
յին շնորհը և մոռսիոյ օգոստոսափառ ինքնակալի  
ողորմած ուշադրութիւնը պսակներ կը հիւսեն  
թէ ձեզ և թէ բոլոր ձեր համագգեաց»:

Ընթերցողը պէտք է գիտենայ, որ Ներսէսը  
ինքը համոզուած էր և հայ ազգին էլ համոզում  
էր, որ «մոռսիոյ օգոստոսափառ պետութիւնը  
իր հզօր բազուկը տարածեց մեր հայրենեաց վը-  
րայ ոչ այնքան իր սեպհական օգտի համար,  
որքան մեր անդորրոքեան և բարօրութեան  
համար ու Քրիստոսի սուրբ կրօնը և եկեղեցին  
պաշտպանելու համար»:

«Մոռսիոյ տէրութիւնը տակաւին այն ժա-  
մանակները, երբ դեռ ոչ մեր երկրի և ոչ մեզ  
վրայ տիրող չէր, յեր քողկում մեզ խռանց  
պաշտպանութեան և խորտակում էր մեր բարօ-  
րութեան թշնամիներին,—միթէ հիմա, երբ Աս-  
տուծոյ և ամբողջ աշխարհի առաջ հանդիսանում  
է նա որպէս պաշտպան և հովանի մեր ազգի և  
եկեղեցւոյն Քրիստոսի, միթէ հիմա, կրկնում եմ,  
կը թողնէ մեզ առանց հովանաւորութեան և  
պաշտպանութեան»:

«Ուստի,—ոգևորվում է Ներսէսը և ոգևո-  
րեցնում հայերին,—մենեք քաջութեամբ և ա-  
ռանց հայրենեացը դաւաճանելու և այսպիսով  
ժառանգենք մեր նախնեաց պանծալի անունն ու  
փառքը»\*):

Ներսիսի այս շրջաբերականի կամ գոչի ամբողջութիւնը  
տես «Ամենայն Հայոց Կաթող. եր. 237—248.

ՃԳ.

Բացի այս ընդհանուր շրջաբերականից՝ Ներ-  
սէս Աշտարակեցին այդ ժամանակներում մաս-  
նաւոր, անթիւ նամակներով դիմում էր ամեն  
տեղի ազգեցիկ հայերին\*) և ոգևորում ու խրա-  
խուսում էր չխնայել կեանքը անգամ հայրենեաց  
ազատութիւնը ձեռք բերելու:

«Հասաւ ժամը,—գրում էր Ներսէսը իր  
բարեկամներին ամեն երկիր և ամեն տեղ, երբ  
աչքով պիտի տեսնենք Արարատեան աշխարհի  
և հայոց ազգի ազատութիւնը. հասաւ ժամը, երբ  
Մայր Արողը պիտի վերականգնէ իր վաղեմի  
անկախութիւնը. ոտքի կանգնեցէք, Հայոց քա-  
ջեր, թօթափեցէք պարսից լուծը, ուրախացէք  
ալեգարդ Մասիսին, մի անգամ արիւնով ներկե-  
ցէք հայրենի հողերը և ապա ապրեցէք ազա-  
տամ է արդէն, օն անդր, հիմա կամ երբէք»\*\*):

Ներսիսի այս ազգասիրութիւնը, նրա այս  
ոգևորութիւնը՝ ուստական քաղաքականութեանը  
համար շատ և շատ ձեռնառու էր: Եւ նա ոչ մի  
առիթ չէր բաց թողնում Հայոց ամենաազգեցիկ  
եպիսկոպոսի այս տրամադրութիւնից օգտուելու:

Մենք գիտենք, որ միևնոյն բանը անում էր  
կառավարութիւնը, մի ժամանակ, և Արղութեան  
Յովսէփ եպիսկոպոսի նկատմամբ:

\*) Ընթերցողը տեսաւ. որ միևնոյն բանը մի ժամանակ ա-  
նում էր և Արղութեանց Յովսէփ արքեպիսկոպոսը:

\*\*) Ամենայն Հայոց Կաթող. եր. 268.



ՃԴ.

Պարսից հետ մղելի մօտակայ պատերազմի նախագիծ կազմելու համար՝ կոմս Դիբիչը Պետերբուրգից Թիֆլիզ եկաւ:

Տեսնելով Ներսէս արքեպիսկոպոսի ոգևորութիւնը և ոռոս զօրքին օգնելու մեծ պատրաստակամութիւնը՝ կոմսը միջնորդեց կայսեր առաջ՝ և Նորին Մեծութիւնը 1827 թուականի փետրուարի 2-ին հետևեալ հրովարտակը տուեց Ներսիսին\*):

«Քակտեին պարսից զխաղաղութիւն և յանկարծակի յարձակել նոցա ի սահման Մեր առիթեառն ազգի Հայոց բնակելոց ի Վրաստան յայտնել իսկութեամբ զջերմեռանդութիւն իւր և զանկեղծաւոր անձնընծայութիւն մեզ: Յայտոսիկ դիպուածս եցոյց նա՝ թէ գիտէ զգին թաւերար հոգացողութեանց կառավարութեան վասն իւր, և թէ տեսանէ պարզապէս զներկայական վիճակ իւր գերազանցեալ քան զվիճակ բազմաթիւ հաւատակցաց իւրոց, որք սփռեալ կան յայլ և այլ կողմանս:

Յանձն առնեմք Ձեզ յայտնել ամենայն Հայոց եղելոց ընդ Ձերով հոգևոր կառավարութեամբ զկատարեալ թաւեհաճութիւն Մեր, և հաւատարմացուցանել զնոսա կայսերական քանիւ Մերով, թէ յարատեւ ունին առ նոսա յատուկ ողորմութիւնք Մեր: Յորչափ ժամանակ տեւեցէ անյողղող հաւատարմութիւն ազգի Ձերոյ՝ որ զը-

\*) Ամենայն Հայոց Կաթող. եր 269.

տեալն է զյուսալի տեղի ապաւինի ընդ հովանեաւ զահին ոռոսաց, հարկ համարեսցուք Մեք հոգ տանել անփուն վասն թաւեհաճութեան մորա եւ անորորութեան»:

«Վերաբերելով զգովանի ընթացս հոգևոր հօտի Ձերոյ և առ ներգործութիւն հովուական յորդորանաց Ձերոց՝ Մեք յայտնեմք Ձեզ զկայսերական երախտագիտութիւնը Մեր և մնամք կայսերական ողորմութեամբ Մերոյ բարեհաճ առ Ձեզ»:

ՃԵ.

Կոմս Դիբիչը անձամբ անձին յանձնեց հրովարտակը Ներսիսին և իր մասնաւոր խօսակցութեան հետևանքը՝ անմիջապէս տեղեկացրեց կայսեր ասելով թէ՝ «Հայոց արքեպիսկոպոս Ներսէսը բարձրագոյն հրովարտակը ընդունեց ամենախորին շնորհակալութեամբ: Հրովարտակը կը կարգացուի եկեղեցիներում և կը հրատարակուի հայերէն: Ներսէսը երաշխաւոր է լինում Հայոց ազգի հաւատարմութեան և ջերմեռանդութեան մասին և յոյս ունէ, որ եթէ յաջողութեամբ մտնենք Երևանի խանութիւնը, այնտեղ հայերի մօտ դեռ բաւականաչափ պաշար կը գտնենք, որի մասին ես էլ հաւատացած եմ»:

Կայսեր հրովարտակը հանդերձ հայ թարգմանութեամբ՝ Ներսէսը տպագրել տուեց այսպիսի վերնագրով «Հռչակ ողորմութեան Ինքնակալի և կայսեր ամենայն Ռուսաց Նիկողայոսի Առաջնոյ առ ազգն Հայոց որ ի Վրաստան», և



հազարաւոր օրինակներով ձրի բաժանեց ազգի մէջ\*):

«Հոչակի» մէջ Ներսէսը տպագրել տուեց նաև իր այն ճառը, որ ինքը պիտի ասէր կայսերական հրովարտակի ընթերցման հանդէսին փետրուար ամսի 22-ին: Տպուած էր նաև Ներսիսի մի շրջաբերական առաջադրութիւնը Թիֆլիսի աւագ և ժամորհնոյ քահանաների անուանով, որով պատուիրում էր նրանց կայսեր այս հրովարտակի մասին՝ արեւարանէջ ամենայն ժողովրդեան հայոց»:

Եթէ ընթերցողը չի մոռացել՝ Ներսիսից ոչ պակաս ոգևորուած էր մի ժամանակ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը ևս, որ Կատարինէ կայսրուհուց ստացած ընծաներն ու հրովարտակը համարում էր հայ ազգի համար «ոսկէ դար», և մեծ ողորմութիւն «Յաբեթեան սերնդի» համար:

Եւ այդ «ողորմութիւնը» բարձրաբարբառ «աւետարանում էր» մի ժամանակ Յովսէփ արքեպիսկոպոսը Պետերբուրգի եկեղեցում, իսկ այժմ—Ներսէս արքեպիսկոպոսը Թիֆլիզի վանքում:

Եւ մինչդեռ Նիկողայոս կայսեր վերոյիշեալ հրովարտակը՝ ամենքին հասկանալի պարզութեամբ ասում էր, որ կառավարութիւնը նրա—Ներսիսի վրայ նայում է իբրև մի հոգեւորականի» վրայ, իսկ հայ ժողովրդի վրայ՝ իբրև մի

\*) Ամենայն Հայոց Կաթող. եր. 270.

«հոգեւոր հօսի» վրայ, — Աշտարակեցի հայ Արհին՝ ինքնիրան մի աշխարհիկ զօրապետի, կամ հրամանատարի տեղ դնելով՝ ոչ միայն ռուս կառավարութիւնից առաջ՝ ի պաշտօնէ Պարսկաստանին պատերազմ էր յայտարարում, ինչպէս տեսանք, այլև, այժմս էլ տէրութեանը խոստանում էր հայկական յատուկ զնդեր կազմակերպել:

Եւ այս ամենը Ներսէս Արհին անում էր առանց խորհրդակցելու՝ եթէ ոչ ս—Էջմիածնի սինօդականաց, գոնէ իր աչքի առաջ նստած ամենայն Հայոց կաթողիկոսի հետ...:

ՃԶ.

Հայկական զնդեր կազմակերպելն արդէն մտնում էր կառավարութեան ծրագրի մէջ: Ուստի և վերջինս ամեն աշակցութիւն ցոյց տուեց Ներսիսին փութով իրականացնելու այն:

Եւ իրականացաւ:

1827 թուականի մարտ ամսին սկսուեց հայ կամաւորների զօրաժողովը: Մի քանի օրուայ մէջ՝ մի քանի հարիւր մարդիկ զինուոր գրուեցին:

Դրանք ռուս բանակի առաջընթաց գունդն էին կազմելու:

Եւ Ներսէսը ինքը պէտք է առաջնորդէր նրանց Երևանի վրայ գնալու:

Նախ քան ճանապարհ ընկնելը՝ հայ վեղաւորաւոր զօրապետ Ներսէսը՝ Ղաբախ հրապարակի վրայ (այժմեան Աղէքսանդրեան այգին) զօրահանդէս կատարեց:



Երբ հայ զինուորները պատրաստի, զինուած շարուած էին՝ եկաւ Ներսէսը ձի հեծած, ողջունեց զինուորներին, մի ոգևորիչ ճառ խօսեց նրանց և վերջում հրամայեց որ ռազմական ձևով (церемониальнымъ маршомъ) անցնեն իր առաջից:

Եւ երբ զինուորները անցնում էին՝ Ներսէսը քաջալերում էր ասելով՝ «ապրիք, քաջեր, շնորհակալ եմ»: Երաժշտութիւնը և զինուորների «կեցցէ» և «ուռա» կանչատոցները օդը թնդացնում էին և հանդիսատես ամբոխին զուարճացնում, հրճուեցնում\*):

Զնայած որ հայկական գունդն արդէն կազմուած պրծած էր, բայց կայսերական հաւանութիւնը այդ մասին՝ դեռ ևս ստացուած չէր:

Մինչդեռ ռուսական մի բանակ պէտք էր Թիֆլիզից դէպի Զալալ-Օղլի մեկնէր:

Բանակին անհրաժեշտ էր անշուշտ մի լաւ ուղեցոյց:

Այդ պաշտօնը վիճակուեցաւ Ներսէս արքեպիսկոպոսին, որ ուրեմն այսպիսով՝ փոխանակ հայկական զընդի հրամանատարը լինելու, ինչպէս որ կարծում էր, այժմ ստիպուած էր ռուսական զնդին ուղեցոյցը լինելու:

Եւ եղաւ: Ներսէսը ճանապարհ ընկաւ Զալալ-Օղլի: Իսկ հայկական զնդի վերջնական կազմակերպումը յանձնուեցաւ մի յատուկ յանձնաժողովի՝ ընդ նախագահութեամբ Թիֆլիզի զի-

\*) Ամենայն հայոց կաթող. եր. 272

նուորական նահանգապետ՝ Ժեներալ ատիւտանդ Սիպեագինի:

Ճէ.

Մայիսի սկզբին ստացուեցաւ կայսեր հաճութիւնը հայկական զնդեր կազմելու մասին, որ և յայտարարուեցաւ հայ լեզուով տպուած առանձին թերթիկներով:

Ռոշուեցաւ մայիսի 15-ին օրհնել հայկական զնդի դրօշակը և զինուորներին երգում տալ:

Այդ օրը վառքի մայր եկեղեցին լիքն էր հանդիսատես ժողովրդով, նոյնպէս և պաշտօնական անձնաւորութիւններով, որոնց պարագլուխը Ժենեռալ Սիպեագինն էր:

Պատարագից յետոյ՝ հայ զօրքը շարուեց եկեղեցու զաւթում, ուր թափօրով դուրս եկած հոգեւորականութիւնը՝ զինուորներին երգուեցրեց և նրանց դրօշակն օրհնեց:

Այդ միջոցին Յարութիւն քահանայ Արամ-դարեանը — յանձնաժողովի անդամներից մինը, — մի ճառ արտասանեց, որով հրաւիրում էր հայ զինուորներին ջերմեռանդութեամբ և հաւատարմութեամբ ծառայել:

Հայոց եկեղեցուց գունդը, թուով 600 հոգի, իր դրօշակով և երաժշտութեամբ գնաց Ղաբախի հրապարակը, ուր Սիպեագինը ինքը մի զօրահանդէս կատարեց:

Մի քանի օրից յետոյ՝ հայ ժողովրդի մէջ ցրուեցին Սիպեագինի մի պրօկլամացիան, որով հայերին լաւ գովելուց յետոյ՝ Ժենեռալ Սիպեա-



գինը ազգարարում էր, որ ինքը մի առաջադրութիւն, կամ հրահանգ է կազմել Հայ գործի համար:

Եւ թէ՛ այդ հրահանգի համեմատ պէտք է վարուեն ինչպէս արդէն զինուոր գրուած և երգում կերած հայերը, նոյնպէս այսուհետև զինուոր գրուիլ ցանկացողները:

Ահա և այդ հրահանգը\*).

ՃԸ.

1. Հայոց գործը կ'ունենայ բառալիօններ:
2. Բառալիօնի մէջ հայերը մտնում են իրանց սեպհական ցանկութեամբ:
3. Զինուոր կարող են գրուել 18-ից ըսկսեալ մինչև 30 տարեկան հայերը: Բայց այս կանոնից կարող է բացառութիւն լինել, երբ զինուոր լինել ցանկացողի անձնական կազմը և առողջութիւնը ներում են:
4. Զինուորի ծառայութեան մէջ գտնուած ամբողջ ժամանակամիջոցում՝ նրա ընտանիքը՝ թաղաւորական հարկ տալուց կամ այլ ծառայութիւն մատուցանելուց՝ ազատ է մնում:
5. Նրանք պէտք է ծառայեն այնքան ժամանակ, որքան ժամանակ որ կը տևէ պարսից հետ ռուսների ունեցած պատերազմը: Պատերազմից յետոյ՝ նրանք կարձակուին իրանց տները: Իսկ ցանկացողները կարող են գործի ծառայութեան մէջ մտնել:
6. Զինուորների առաջ կը կարգացուին Մե-

ծին Պետրոսի սահմանած կանոնները և այն պատիժները, որոնց կ'ենթարկուին զինուորները՝ պարտազանցութեան ժամանակ:

7. Նրանք երդվում են հաւատարմութեամբ ծառայելու համար:

8. Նյս կանոններին ենթարկուող ամեն մի ցանկացողը կարող է զինուոր գրուել: Եւ գանձարանից կը ստանայ իր ապրուստն:

9. Ամեն մի բառալիօն կ'ունենայ՝

|                         |      |
|-------------------------|------|
| Շտապ օֆիցէր . . . . .   | 1.   |
| Կապիտան . . . . .       | 2.   |
| Շտապ-կապիտան . . . . .  | 2.   |
| Պորուտչիկ . . . . .     | 4.   |
| Պոդպորուդչիկ . . . . .  | 4.   |
| Գանձապահ . . . . .      | 1.   |
| Ատիւտանդ . . . . .      | 1.   |
| Զուռնաչի . . . . .      | 4.   |
| Թմբկահար . . . . .      | 4.   |
| Ունտէր-օֆիցէր . . . . . | 80.  |
| Զինուոր . . . . .       | 800. |
| Սայլապան . . . . .      | 40.  |

10. Գլխաւոր զորապետի հրամանով՝ ունտէր-օֆիցէրից ընտրվում են օֆիցէրներ այնպիսիներից, որոնք յայտնի են լինում իրանց խելքով, քաջութեամբ և ջերմեռանդութեամբ:

11. Օֆիցերական առաջին չինը՝ տրվում է յատուկ քաջութիւնների համար:

12. Իւրաքանչիւր բառալիօնի մեծաւորը՝ շտապ օֆիցէր կամ կապիտան, հայ պէտք է լինի:

\*) Պատմ. կաթող. էջմ. եր. 111.



13. Մէն մի բատալիօն կ'ունենայ իր քահանան և տեղական հեքիմը—բժիշկը:

14. Ամեն մի բատալիօն բաղկանում է 800 հոգուց: Ամեն մի հարիւրեակը՝ տասը տասնեակից:

15. Ամեն մի զինուոր գանձարանից կը ըստանայ հրացան, թասմա գօտիով պարկ, 30 փամփուշտ և 10 չախմախի քար:

16. Ամեն մի զինուոր պիտի ունենայ իր սեպհական դաշոյնը և մի պարկ, որով իր ուսերի վրայ 4 օրուայ պաշար է կրելու:

17. Ունտէր-օֆիցէրները դաշոյնի փոխարէն՝ թուր պէտք է ունենան:

18. Օֆիցէրները պէտք է ունենան մի զոյգ ատրճանակ և թուր:

19. Շորերը լինելու են՝

Գորշ մահուդից չուխայ

Մութ գունանի արխալուխ

Շալուար նոյն գոյնով.

Վրացու գտակ.

Եսփրենճի:

20. Զինովիները զինուորական աստիճանաւորների համեմատ ոռճիկ կը ստանան:

21. Շորի համար զինուորները կը ստանան 10 հատ արծաթ մանէթ մի տարումը. ունտէր-օֆիցէրները՝ 15 մանէթ: Այդ փողերով նրանք պէտք է իրանց շորերը պատրաստեն՝ մինչև գանձարանից իրանց յատուկ շորեր տրուելը:

22. Զօրքերին վրաններ կը տրուի:

23. Իւրաքանչիւր տասն զինուոր կ'ունե-

նայ մէկ ձի՝ բեռ դարսելու համար վրան՝ պըղինձ և 2 փութ ու 25 ֆունթ սուխարի (պաքսիմատ): Քսան զինուորի համար կը տրուի մի մշակ: Յիսունի համար՝ մի կացին և մի թի: Ամեն մի հարիւրից կազմվում է մի խումբ\*):

Եւ այլն:

ՃԹ.

Բացի ներսիսի ձեռքով կազմուած հայկական զօրագնդից, որ հետեակ էր, կառավարութիւնը մի հայկական հեծելազուհէ էլ Ղարաբաղի հայերից կազմել տուեց:

Բացի զբանցից՝ այդ ժամանակ նորից պատերազմական ապարէզը հրաւիրուեցաւ Գրիգոր եպիսկոպոս Մանուչարեանցը\*\*) որ Շամշադինի վիճակի Հախում գիւղիցն էր, որի անունով գիւղն էլ յաճախ «Վարդապետի գիւղ» էր կոչվում:

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարեանցը դեռ ևս 1803 թ. աւանական իշխան Յիցիանովի Գանձակի վրայ արշաւած ժամանակ հոչակուեցաւ:

Իշխանի հրաւիրանօք՝ Գրիգոր եպիսկոպոսը Շամշադինի և Ղազախի հայերից 500 կտրիճ հայ երիտասարդներից մի հեծելազուհէ էր կազմել և ինքը զարձել նոցա զնդապետ: Վեղարը և հոգևորական տարազը ծալելով տանը՝ նա հագել էր շինականի չուխայ, ծածկել ոչխարի մորթի մեծ փափախ, կապել թուր և դաշոյն և հրացա-

\*) Պատմ. կաթող. էջմիածնի, եր. 193—197.

\*\*) Ամենայն Հայոց կաթող. եր. 243—247.



նը ձեռքին, սպիտակ նոյզի վրայ նստած՝ առաջնորդում էր իւր գնդին թէ Գանձակի և թէ Երևանի վրայ արշաւած ժամանակ:

Պարսից հեծելազօրքի հետ կռիւ սկսող և ճակատահար լինողը՝ միշտ Գրիգոր արհին էր լինում իւր կտրիճներով: Սարսափելի էր լինում այս հեզ և համեստ հոգեւորականը պատերազմի դաշտում, թուրը հանած միջոցին:

Իշխան Յիցիանովը, որ առհասարակ հայերին չէր համակրում, բայց և այնպէս Գրիգոր եպիսկոպոսի գործած քաջութիւններին ականատես լինելով՝ նոյնիսկ կռիւ դաշտում կախեց նրա կրծքին Ս. Գէորգի չորրորդ աստիճանի զինուորական խաչը և 300 ռուբլի մշտական թոշակ նշանակեց:

1808 թուին էլ կոմս Գուգովիչը Երևանի վրայ արշաւելիս՝ իր հետ տարաւ նաև Մանուշարեանցին իր կտրիճներով:

Այստեղ, Նախիջևանը վեր առնելիս, եպիսկոպոսը մեծ կոտորած անելով և թշնամու արեան մէջ շաղախուած՝ ինքն էլ վերք ստացաւ և հազիւ մահից պրծաւ:

Կոմսի առաջարկութեամբ՝ կայսրը առանձին հրովարտակով՝ նրան շնորհեց Վլադիմիրի և Աննայի շքանշանները և 300 ռուբլու փոխարէն՝ 600 ռուբլի թոշակ կապեց:

Պարսից հետ խաղաղութիւն հաստատուելուց լետոյ՝ Գրիգոր եպիսկոպոսը քաջուեց իր հայրենի Հախում գիւղը և աշխարհից մեկուսա-

ցած՝ նորից սղանձնեց իր վանահայրութիւնը մօտակայ վանքում, որ Վարազայ Ս. Նշանի անունն էր կրում:

Երբեմն-երբեմն միայն, երբ Գրիգոր եպիսկոպոսը լսում էր թէ թուրք աւագակները հայերից տաւար են գողացել կամ մարդ են սպանել, իսկոյն վեղարը փոխում էր փափախի և ձի հեծնելով թռչում էր չարագործների ետևից:

Թուրքերի վրայ Արհին առհասարակ սարսափ էր ձգել, իսկ հայերը, ինչ ասել կուզի, նրան շատ յարգում և ակնածում էին\*):

ՃԺ.

Երբ 1826 թուին պարսիկները ուսուց հողի վրայ յարձակուեցան՝ նրանց հրոսակային խմբերը և տեղացի ապստամբ թուրքերը բռնեցին նաև Թիֆլիզի շրջակայ ճանապարհները, որ տեղերով աներկիւղ անցուդարձ անելը դժուարեցել էր:

Հաղբաւի վանքում մեկուսացած Եփրեմ կաթողիկոսին թուրքերը կարող էին փախցնել, կարող էին նոյնիսկ սպանել:

Ուստի Ներսէսը փութաց օր առաջ՝ ծերունի կաթողիկոսին իր մօտ բերելու կարգադրութիւն անելու:

Այս դժուար գործը նա յանձնեց Մանուշա-

\*) Շամախույ գաւառի Գեղիւնի գիւղում սրանից 30 տարի առաջ մի հայ քահանայ կար Աղեքսանդր Մանուէլեանց անունով, որ ձիւտ Գրիգոր եպիսկոպոսի դերն էր կատարում շրջակայ թուրք աւագակաւորոյ խմբի դէմ պաշտպանելով իր հօտը:



բեան Գրիգոր եպիսկոպոսին, որին ի մօտոյ ճանաչում էր:

Մանուշարեանցը 40 ձիաւորներով օգոստոսի սկզբին հասաւ Հաղբաթ և Եփրեմին վերցրած՝ յետ դարձաւ ոլոր-մոլոր ճանապարհներով:

Սակայն չնայած ամեն տեսակ հախազգուշութիւններին՝ Բօրչալուի դաշտում, Խըամ գետի ափին, կաթողիկոսական խմբի վրայ պարսկական մի հեծելազունդ յարձակուեցաւ, որ բաղկացած էր 200 հոգուց:

Սկսուեցաւ անհաւասար կռիւը թրերով: Գրիգոր եպիսկոպոսի տակի ձին ընկաւ: Նա մի այլ ձիու վրայ թռաւ և ամենայն արիութեամբ շարունակում էր ինքը և իւրայինները կատաղի կռիւ:

Ի վերջոյ՝ Մանուշարեանցը իննը հոգի, — երկուսը իր ամենամօտիկ ազգականներն էին, — կորցնելով և բաւականին թուրք կոտորելով կարողացաւ Եփրեմ կաթողիկոսին անվնաս թիֆլիզ հասցնել:

Մանուշարեանցի այս քաջագործութիւնը Ներսիսից լսելով և նրա անցեալի մասին տեղեկանալով կառավարչապետ Երմօլովը ինքը ևս կամեցաւ օգտուիլ այս զարմանալի հայ եպիսկոպոսի ծառայութիւնից:

Ուստի խնդրեց նրան Շամշադիլ երթալ, տեղական թուրքերի ապստամբութիւնը զսպել և պարսից գերի տարած մի քանի հարիւր տուն գիւղացիների գերգաստունները վերադարձնել:

Մանուշարեանցը հաւաքեց իր 500 կտրիճներին և ամենայն արագութեամբ և անձնութեամբ ի կատար ածեց կառավարչապետի ցանկութիւնը: Շատ կարճ ժամանակում ապստամբները խաղաղեցան և գերիները յետ տարուեցան իրանց տեղերը:

Թուրք տարրի վրայ՝ Գրիգոր եպիսկոպոսի անունը միանգամայն սարսափ էր բերում:

„Դալի քէշիշը“ (խենթ — տէրտէր), — այսպէս էին անուանում թուրքերը Գրիգոր եպիսկոպոսին, — թուրքերի համար մի առասպելական հերոս էր դարձել, որին ղիմադրելը՝ նրանք անկարելի էին համարում:

Հասան-Սու գետակի մօտ՝ Երմօլովը անձամբ տեսնելով Մանուշարեանի կատարած գործերը՝ զրկեց նրան և համբուրեց՝ խնդրելով յայտնել իրան թէ ինչով է կարող իրան վարձատրել:

Սրհին պատասխանեց, որ ինքը անձամբ ոչնչի կարօտ չէ, բայց անօրէնութիւն է համարում, որ թուրք աղալար և բէգ կոչուած ազնուականներն վաղուց ի վեր տէր են դարձել հայոց գիւղերին և նրանց կալուածներին և, ծանր հարկ առնելով, կեղեքում են հայ ազգաբնակութիւնը, այն էլ ներկայ քրիստոնեայ իշխանութեան տիրապետութեան ժամանակ:

ՃԺՍ.

Երմօլովի առաջարկութեամբ Մանուշարեանցը իր խնդիրը զբաւոր կերպով էլ ներկա-



յացրեց, որին կառավարչապետի կողմից հետևեց այս պատասխանը՝ «Ըստ վկայութեան Վրաստանի Հայոց առաջնորդի՝ Ձեր սրբազնութեան ջերմեռանդ ծառայութեանց մասին առ պետութիւնն՝ որին օգտաւէտ լինելու մշտական պատրաստակամութիւն էք յայտնած, ես հրաւիրեցի Ձեզ երթալ Շամշադիլի գաւառակը, ուր տեղի բնակիչները պարսից թելադրութեամբ վրդովման մէջ էին, իսկ թուրք տանուտէրներն էլ մեծ մասամբ մեզ դաւաճանեցին:— Դիտենալով որ ժողովուրդն ընդհանրապէս Ձերդ սրբազնութեանը յարգում է և հաւատ է ընծայում, ես ես խնդրեցի ձեզ խաղաղացնել բնակիչներին, որպէս զի նոքա իրանց միամտութեամբ չհետեւեն ուխտադրութիւնին: Դուք ի կատարեալ բաւականութիւն իմ, բոլորովին արդարացիք Ձեր առաջնորդ հովուապետի թէ՛ ընտրութիւնը և թէ՛ Ձեր մասին ունեցած բարի կարծիքը: Ձեր անձը վտանգի ենթարկելով՝ Դուք սակաւաթիւ մարդկանցով դիմադրեցիք ապստամբներին քշելու, արտասահման տանելու հայ գերդաստունները: Առհասարակ Դուք ամեն կերպ օգնում էիք Ձեր երկրի գլխաւոր վերակացու իշխան Թաւրիսանովին տէրութեան կամքը կատարելու»:

«Զօրաց բանակի հետ գալով Հասան-Սու, ես ինքս վկայ եղայ Ձեր գովելի գործերին, վասնորոյ սուրբ պարտք եմ համարում ինձ յայտնել Ձերդ սրբազնութեան ի դիմաց տէրու-

թեան կատարեալ գոհունակութիւն:—Հաճելի է ինձ յուսալ, թէ Դուք այսուհետեւ ևս չէք դադարիլ պատրաստ լինելու յօգուտ ծառայութեան թագաւոր կայսեր»:

«Յարգելով ձեր ինձ մատուցած տեղեկագրի մէջ յայտնած մտքերը, ես հրամանագրեցի Շամշադիլի գլխաւոր վերակացուին, որ նոյն գաւառակի հայերին բոլորովին ազատելով թուրքերի (ազնուականների) իրաւասութիւնից՝ արձանագրէ որպէս արքունի: Իսկ ինչ որ կը վերաբերի բոլոր հայոց ընդհանուր կախումն ունենալուն մնացած թուրքաբնակ գաւառակներում, ես այդ ևս անմիջապէս կը կարգադրեմ և պաշտօնապէս կը հրատարակեմ ի գիտութիւն ամենեցուն»:

ՃԺԲ.

Այսպէս ահա Ներսիսի կազմած հայկական հետեակ զուռըր, դարաբաղցի հայերից կազմած հեծելազուռըր և Մանուչարեան Գրիգոր եպիսկոպոսի 500 կտրիճները մեծամեծ, անգնահատելի ծառայութիւններ մատուցին ռուսաց բանակին 1826—1828 ռուս-պարսկական պատերազմի նախօրեկին և ողջ տևողութեան միջոցին:

Հայ հոգևորականների և երիտասարդների այդ շարժումը, նրանց պատրաստակամութիւնը, բնականաբար, շարժեցին և հայ ժողովրդին, որ Վուրի եզերքից մինչև Արաքսի ափերը՝ սկսու մասնակից լինել պատերազմին ու ինչով որ կա-

\*) Ամենայն Հայոց կաթող. Լր. 247—248.



— րող էր, — հոգևորական և աշխարհական, կինարմատ և տղամարդ, մեծ և փոքր, անխտիր, ամենքն էլ:

Հայ ժողովուրդը չխնայեց իր տունը, անգամ կեանքը ոռոսաց յաղթանակները Արարատեան աշխարհում տւելի ևս փառաւոր անելու համար:

Այս վկայուած և հաստատուած է նոյնիսկ ոռոս ականատեսների և պատմաբանների գրածներով և պաշտօնական դօկումենտներով, այս վկայուած է և «Վէրք Հայաստանի» հեղինակի հետեւեալ տողերով՝ «ինչ որ պարսից կուի ժամանակ հայք արին, Աստուծոյ է յայտնի: Թէ մարդ չիմանայ, քարերը վկայութիւն կտան: Հալբաթ որ մէկ արդար, անաչառ մարդ Վրաստանու պատմութիւնը կը գրի, էն ժամանակը կերևի, թէ հայք ինչ արին, ինչ հաւատարմութիւն են ցոյց տւել տէրութեանը, ինչ արին են վեր ածել...»:

ՃԺԳ.

Աբբաս Միրզի բանակին Թիֆլիզ մտնելուն արգելք դառնալու համար՝ Երմօլովը այստեղից ու այնտեղից մի քանի վաշտ զօրք ժողովելով՝ Սիմօնիչ գնդապետի հրամանատարութեամբ Ղազախ ուղարկեց: Միքանի օրից յետոյ էլի միքանի նոր վաշտեր եկան թէև, սակայն պարսից զօրքի համեմատութեամբ՝ ոռոսական զօրքի քանակութիւնը շատ և շատ չնչին էր: Յուսահա-

տութիւնը տիրել էր ինչպէս զօրքին, նմանապէս և նրա հրամանատարին:

Բայց երբ յանկարծ լուր եկաւ թէ նոր հրամանատար է նշանակուած հայ ազգի իշխան Մաղաթովը՝ զօրքի տրամադրութիւնը դէպի լաւը փոխուեց:

Մաղաթովը արդէն յայտնի էր իր գործած քաջութիւններով 1808—1810 թուականներում տաճիկների դէմ մղուած պատերազմների ժամանակ:

Նա՝ էլ աւելի յայտնի եղաւ 1812—1814 թ. Նապօլէօնի դէմ եղած կռիւներում: — Եւ իւր կուրծքը զարդարած ունէր ոռոսական բազմաթիւ շքանշաններով:

Երբ Եւրոպայում խաղաղութիւնը հաստատուեցաւ, իշխան Մաղաթովը՝ նշանակուեցաւ, — 1815 թուականում, Չաքի (Նուխի), Շիրուան (Շամախի) և Ղարաբաղի գաւառների կառավարիչ և այդ ժամանակից սկսեալ նա մեծ հռչակ էր ստացել՝ մանաւանդ տեղական թուրքերի մէջ, առաւելապէս Դաղստանում գործած քաջութիւնների համար:

1826 թուականի ամառը իշխան Մաղաթովը կովկասեան հանքային ջրերում բժշկվում էր, երբ պարսից արշաւանքի լուրն առնելով, յետ դարձաւ Թիֆլիզ և ստանձնուեց Ղազախում եղած ոռոսական սակաւաթիւ բանակի հրամանատարութիւնը գնդապետ Սիմօնիչի փոխարէն:



Մադաթովի Ղազար հասնելն լսելով՝ ապստամբուած թուրք աղալարները խումբ-խումբ եկան նրա մօտ և խնդրում էին, որ իրանց ընդունէ իր մօտ ծառայելու:

Իշխանը այդ թուրքերից մի հեծելագունդ կազմեց, որոնք շատ անգամ յարձակվում էին իրանց հաւատակից պարսիկների դէմ:

ՃԺԴ.

Հէնց այդ ժամանակն էր, որ Մադաթովի բանակին եկաւ միացաւ Մանուշարեանց Գրիգոր եպիսկոպոսը իր 500 հեծեալներով: Եւ ճանապարհը կապելով՝ չթողեց վերադառնալ պարսից Ձոհրաբ խանին, որ զօրքերով ու ապստամբ աղալարներով մտել էր Շամշադիլի Ամիրլախ գիւղը:

Սրանով Գրիգոր եպիսկոպոսը ռուսաց փոքրիկ բանակին միջոց և հնար տուեց՝ բոլորովին ջարդելու պարսիկներին և ապստամբներին: Այս յաղթութեան միջոցին, բացի բազմաթիւ սպանուածներից՝ շատ նշանաւոր ապստամբներ գերի բռնուեցան:

Բացի այդ՝ Գրիգոր եպիսկոպոսի հեծելագունդը՝ մեծապէս օգնեց վրացի կամաւոր զօրացը՝ ջարդել Ասրիկ գետի մօտ պարսից Մահմադ Ջաման խանին և Շամշադիլի ապստամբ աղալարներին:

Եւ երբ հայ Արհին այս յաղթութիւններից յետ էր դառնում, ճանապարհին նա բռնեց և իշխան Մադաթովին յանձնեց այն չորս նշանա-

ւոր լրտեսներին, որոնք գնում էին Ղարաբաղի և Բօրչալուի գաւառներում խռովարար ֆերմաններ ցրուելու:

ՃԺԵ.

Սեպտեմբերի սկզբին Մադաթովը՝ իր ձեռքի տակ եղած 2000 հոգի զօրքերով յառաջ խաղաց դէպի Գանձակ: Ճանապարհին, Ջազեամ գիւղի մօտ, նրա հանդէպ էր մօտ 12000 հոգուց բաղկացած պարսից բանակը:

Այստեղ, Շամքօր գետի ափին, սկսուեցաւ կռիւը: Պարսիկները ի փախուստ դարձան դէպի Գանձակ, թողնելով պատերազմի դաշտում 2000 զիակ և մեծ աւար:

Մադաթովը հետապնդեց և ամսի 4-ին մըտաւ Գանձակ, ուր նրան ղիմաւորեցին տեղացի հայերը և հոգևորականութիւնը խաչով ու խաչվառով:

Իսկ պարսից զօրքը հէնց նախընթաց օրը Գանձակից ևս փախել, խոյս էր տուել դէպի Ղարաբաղ:

Պարսից այս մեծաքանակ բանակի ամօթալի վարտութիւնը Մադաթովի մի բուռ զօրքերից՝ պէտք է վերագրել նախ՝ այս իշխանի անուանը և հոշակին, որ ինչպէս յիշել ենք, շատ տարածուած էր թուրքերի մէջ: Եւ երկրորդ՝ որ հէնց պատերազմի սկզբում Մադաթովը խորտակեց բանակի այն մասը, որին ղեկավարում էր Աբբաս Միրզի անդրանիկ որդին՝ Միրզա Մահամադը:



Իսկ ամբողջ բանակի հրամանատար Ամիր-  
խան Սարգսրը, որ Աբբաս Միրզի քեռին էր ըս-  
պանուեցաւ:

Զօրքը տեսնելով իր արքայազուն զօրավար-  
ների հետ պատահած այս դժբաղտութիւնները՝  
լքաւ, վհատեցաւ և ցաք ու ցրիւ եղաւ\*):

ՃԺԶ.

Աբբաս Միրզան կարեւոր վշտացաւ իր որդ-  
ւոյ և քեռու և նոցա զօրքերի հետ տեղի ունե-  
ցած այս անակնունելի պարտութեամբ:

Եւ լրաեսներից ստուգելով Մաղաթովի զօր-  
քի կարի սակաւութիւնը՝ անմիջապէս թողեց  
Շուշին և 50,000 զօրքով առաջ խաղաց Մաղա-  
թովի վրայ:

Բայց այդ ժամանակ Մաղաթովին օգնու-  
թեան էր հասել Ժենեռալ Իվան Ֆէօդորովիչ  
Պասկևիչը\*\*), որ կայսեր կողմից նշանակուած  
էր Կովկասեան զօրքերի ընդհանուր հրամանա-  
տար և իր հետ բերել էր կայսերական թիկնա-  
պահ (զվարդիա) գնդերի այն վաշտերը, որոնք  
մասնակցած էին անցեալ դեկտեմբերի 14-ին  
կայսեր դէմ յարուցած ասորտամբռութեան մէջ:  
Նիկողայոս կայսրը իր թիկնապահներին ուղար-  
կել էր պարսից դէմ կռուելու և իրանց արիւ-  
նով քաւելու իրանց յանցանքը:

Պասկևիչի բերած այդ զօրքը, թէև փոք-  
րաքանակ, սակայն իրանց յաղթանդամ կազ-

\*) АКТЫ, VI. №№ 673, 676, 677 և 678.

\*\*) Նոյնը, № 660.

մուածքով, իրանց վիթխարի հասակով և գոյնըզ-  
գոյն հագուստներով, զարմանք և երկիւղ էին  
ազդում տեսողների վրայ, նամանաւանդ թուր-  
քերի վրայ:

Պասկևիչի գալստեամբ՝ Մաղաթովը պար-  
տաւորուեցաւ իր իշխանութիւնը նրան յանձնել:  
Բայց Շամքօրի ափին իր տարած յաղթութեամբ  
նա՝ Մաղաթովը, արդէն նախապատրաստուել էր  
և Աբբաս Միրզի բանակի խորտակումը:

Այդպէս էլ եղաւ:

Սեպտեմբերի 13-ին Գանձակի առաջ տա-  
րածուած դաշտում կատաղի կռոււմ՝ Աբբաս  
Միրզան ևս յաղթուեցաւ և օգապարիկ նժոյգի  
վրայ հեծած՝ հազիւ հազ անձը ազատեց՝ թող-  
նելով ուսաց ձեռին 1000 զերի, մի քանի թն-  
դանօթներ, չորս դրօշակ և այլ և այլ մթերքներ:

Այս փառաւոր յաղթութեան մէջ ամենա-  
առաջին տեղը բռնեց Մաղաթովը, ևս և Մանու-  
չարեանի հեծելագունը:

Ինչպէս ինքը Պասկևիչը, նամանապէս և  
Մաղաթովը կայսրից ստացան բոլիւսաններով  
զարդարուած սուր: Մաղաթովը ստացաւ նաև  
Ժենեռալ-Էյտենանտի աստիճան:

Գալով Աբբաս Միրզին՝ նա մէկզլուիւ Ա-  
րաքսն անցաւ և գնաց Թաւրիզ: Նրան հետևում  
էին նրա ջարդուած բանակամասերը: Այնպէս  
որ պատերազմի հինգերորդ օրը՝ Ղարաբա-  
ղում այլևս ոչ մի պարսիկ զինուոր չմնաց:



ՃԺԷ.

Մինչդեռ Շամբորի և Գանձակի մօտ պարսիկները կռվում էին ռուսների հետ՝ Երևանի Սարգարի եղբայր Հասան Խանը՝ մի հոծ հեծելազինված պատրաստուած էր ռուսաց վրայ դալ Դելիշանի կամ Լօռուայ կողմից։

Այդ յարձակման առաջն առնելու համար՝ ինքը երմօլովը մի քանի վաշտ զօրքով՝ Թիֆլիզից նրա դէմ գնաց և կարգադրեց, որ Դիլիշանի ձորը պահպանէ Մանուչարեանց Արհին, իսկ ժեներալ Դաւիդովը Զալալ-օղլիում կենտրոնացած զօրքը վերցնելով՝ յարձակուի Հասան խանի վրայ։ Թէ՛ Մանուչարեանցը և թէ՛ Դաւիդովը գեղեցիկ կերպով կատարեցին երմօլովի հրահանգը և Հասան խանի հեծելազունը ջարդելով՝ իրան էլ ի փախուստ դարձրին։

Անյաշողութիւնից զայրացած Հասան խանը՝ իր վրէժը թափեց շրջակայ հայ գիւղերի վրայ՝ քաղանելով և կողոպտելով ժողովրդին։

Ապա իջնելով Էջմիածնի դաշտը՝ ուզեց կրակ տալ, այրել նոյն իսկ Մայր Աթոռը, սակայն հետը եղած թուրք բէգերը չթողին։

— «Սարգսր, — ասաց ծերունի բէգերից մէկը, — ռուսները երկու անգամ եկան Երևանը նուաճելու և երկու անգամ էլ պարտութիւն կրեցին, բայց յետ քաշուելով՝ նրանք ոչ մի անգամ ձեռք չտուին մեր մէջիւսներին։ Դու էլ մի քանդիր քրիստոնէից տաճարը։ — Յիշիր, որ վար-

դպետները օրհնեցին Շահադէի (Աբբաս Միրզի) թուրը, որով նա յաղթեց տաճիկներին»։

Հասան խանին ի փախուստ դարձնելով՝ Դաւիդովը ուզում էր նրա ետևից գնալ և Երևանը պաշարել։ Սակայն որովհետև արդէն ձմեռը մօտենում էր, ուստի երմօլովը նրան յետ կանչեց Զալալօղլի ձմեռելու։

ՃԺԸ.

Զինուորական խորհուրդը թէպէտ վճռեց Երևանի և Նախիջևանի խանութիւնների նուաճումը յետաձգել մինչև հետևեալ, 1827 թուականի, գարնանը, սակայն միևնոյն ժամանակ, Մադաթովին հրամայուեցաւ որ նոյն իսկ ձմրան սաստիկ ժամանակը Արաքսն անցնի և նւաճէ Շախսեվան կոչուած այն խուժադում թափառական ցեղերին, որոնք ձմեռը քօչում գալիս էին Մոզանլուի դաշտը և, մեծ մասամբ, աւազակութեամբ էին պարապում։

Մադաթովին տուին մի վաշտ հետևակ և 600 ձիաւոր զօրք դազախ։ Դրանց հետ Մադաթովը միացրեց՝ Ղարաբաղի հայերից կազմուած հետևակ և հեծեալ զօրքը մօտ 600 հոգի, որոցմով դեկտեմբեր ամսին Արաքսն անցաւ և փոխանակ թափառական ցեղերին նուաճելու, մըտաւ Ղարադաղ և Ագար քաղաքին տիրեց։

Բայց այդ քաղաքի առումը՝ Ղարադաղի մի քանի հայկական գիւղերի վրայ շատ քանակ նրսեցեց։

Հայ հետևակ և հեծեալ զնդերը իր հետ



Պարսկաստան տանելով Մադաթովը ամենայարմար առիթ տուեց Ղարաբաղում եղած այլ և այլ թափառական թուրք տարրին, նոյնիսկ տեղացի խաղաղ, բայց աւագակաբարոյ թուրքերին յարձակուել և կոտորել ու կոտորեսել անպաշտպան մնացած հայ գիւղերն ու ժողովուրդը:

Եւ թէպէտ Մադաթովը 1827 թ. յունուարի կէսին՝ վերադարձաւ Ղարաբաղ, բայց արդէն ուշ էր: Հայկական շատ գիւղեր քառոյսանոց և դաժ պրծած էին: Եւ Կովկասեան իշխանութիւնը ոչ ժամանակ և ոչ ցանկութիւն ունէր յանցաւորներին զսնելու և պատժելու:

Վերևում ասացինք, որ Պասկեվիչը կայսեր կողմից ուղղակի նշանակուած էր Կովկասեան զօրքերի հրամանատար, թէպէտև կառավարչապետութիւնը էլի ֆառցած էր Երմօլովի վրայ:

Սակայն երբ պարսիկները Անդրկովկասից քշուեցան պրծան, կայսերական հրամանաւ 1827 թուի մարտի 29-ին Երմօլովը յետ կանչուեցաւ և նրան յաջորդ կարգուեցաւ Պասկեվիչը կայսեր շատ սիրելի անձն, քաջ, 29 տարեկան հասակում արդէն ժենեւալի աստիճանին հասած, բազմատեսակ չքանչաններով կուրծքը զարդարած և... շատ փառասէր:

ՃԺԹ.

— «Նա չէր սիրում իրանից մեծն ունենալ և նախանձում ու թշնամանում էր իր ստորա-

դրեալներին, եթէ սրանք որեւէ փառքի արժանի էին լինում:

«Նա չէր թոյլ տալիս ոչ ոքին իր վրայ ազդեցութիւն ունենալու, լսած խորհուրդների միշտ հակառակն էր գործում, կամակոր էր, հրպարտ և չափազանց վրէժխնդիր ու հալածող իր չ'սիրած մարդկանց»:

«Կովկաս գալու օրից՝ Պասկեվիչը մտքումը դրեց տապալել Երմօլովին: Սիրելի լինելով կայսեր և օգուտ քաղելով ստացած իրաւունքից՝ բանակցելու կայսեր հետ ուղղակի և առանց նախարարաց միջամտութեան, — Պասկեվիչը ամենասե գոյներով էր նկարագրում թէ Երմօլովին, թէ երկրիս գլխաւոր գործիչներին և թէ ոռոսաց տեղական զօրքին, որ այնքան քաջութիւններ էր գործել նամանաւանդ Դաղստանում:

„Պասկեվիչը անբաւական էր երկրի մէջ եղած կարգ ու կանոններից և ամեն բանի մէջ չարագործութիւն և դաւաճանութիւն էր գրտնում»:

«Բայց երբ Երմօլովին տապալելուց յետոյ՝ ինքը դարձաւ կառավարչապետ չէր խղճահարւում գովել և երկինք բարձրացնել իր ամբաստանած զօրքի քաջութիւնները, օրինապահութիւնը և այն ամենը, ինչ որ վաղուց կարգել սարքել էր Երմօլովը»:

„Պասկեվիչի երկերեսանի վարմունքը նկատելի էր նրա ամեն մի քայլում, ամեն դրութեանց մէջ: Ելիզաւետօպօլի յաղթութիւնից յետ-



տոյ՝ զօրքերին տուած հրամանադրում նա հիանում էր Մադաթով և Վելիամինով գեներալների գործած քաջութիւններով. իսկ կայսեր գրում էր թէ գործը աւելի յաջողութիւն կունենար, եթէ Մադաթովը և Վելիամինովը չէին եղել և այլն»\*) :

Ահա այսպիսի բնաւորութեան տէր մարդու հետ և նրա գլխաւոր իրաւասութեան ու հրամանատարութեան տակ՝ Ներսէս արքեպիսկոպոսը պիտի գործէր և գլուխ բերէր իր ցանկութիւնը, որ էր «*սեսնէլ Արարատեան աշխարհի եւ Հայոց ազգի ազատութիւնը եւ Մայր Արոտի վաղեմի անկախութիւնը*» :

Եւ իր այդ սրբազան նպատակին հասնելու համար Նորին սրբազնութիւնը ոչինչ, միայն մայն ոչինչ չխնայեց, «*առանց դադար ու հանգիստ տալու իր մարմնոյն, մտքին ու կամքին, ինչպէս որ վերջերում նա ինքը Բեստարաբլայից գրում և բողոքում էր մինիստրին ի Պետերբուրգ* :

Հետեւեալ, ընթերցող Ներսիսին՝ ռուսական բանակում :

ՃԻ.

Ծրագրի համաձայն՝ ռուս-պարսկական պատերազմը ի պաշտօնէ պիտի սկսուէր հէնց որ գարունը (1827) բացուէր\*\*)

Ռուսական գլխաւոր բանակը՝ Պասկեվիչի իրան հրամանատարութեամբ արշաւելու էր Երևանի վրայ. Նախիջևանում նրա հետ պիտի

\*) Ամենայն Հայոց Կաթող. Կր. 266—268.

\*\*) АКТЫ, VI, № 684.

միանար Ղարաբաղում եղած զօրքը, որոնց մէջըն էր և տեղական հայերի հեծելազունը :

Այդ միացեալ բանակները պիտի անցնէին Արաքսը՝ տիրէին Թաւրիզին և հասնէին մինչև Թեհրան, որտեղ Պասկեվիչը հաշտութեան դաշն էր կռելու պարսիկների հետ :

Վերջիններս 40 միլիօն տուգանք պիտի վճարէին ռուսներին, որոնց ձեռքն անցնելու էին նաև Երևանի և Նախիջևանի խանութիւնները : Երկու տէրութիւնների սահմանագիծը Արաքսն էր լինելու\*) :

Եթէ պարսիկ կառավարութիւնը այս պայմանները չընդունէր, կամ ընդունելութիւնը ձգձգէր, — Պասկեվիչը շահի դէմ պիտի ապստամբեցնէր Արաքսի աջ ափում եղած պարսկահպատակ մի քանի մանր խաներին և նրանցից մի անկախ իշխանութիւն կազմէր ռուսաց հովանաւորութեան ներքոյ :

ՃԻԱ.

Գլխաւոր բանակի շարժուելուց առաջ՝ նրա մի յառաջնութաց գունդը ապրիլի 2-ին՝ ժեներալ Բենդենդօրֆի հրամանատարութեան ներքոյ՝ Ղազարից ճանապարհ ընկաւ դէպի Երևան :

Գնդի ուղեցոյցը՝ Ներսէս Արքեպիսկոպոսն էր : Նա ինքը հաւատացած էր և Պասկեվիչին ու Դիպլիչին էլ հաւատացրել էր, որ Երևանի շրջակայ հայ գիւղերում, նոյնպէս և Էջմիածնի վանքում ռուսաց զօրքի համար բաւականաչափ պաշար կը ճարուի :

\*) АКТЫ, VII, № 540, № 502.



Այս պատճառով Բենկենդորֆի գունդը պաշարի առանձին պատրաստութիւն չտեսաւ:

Ըստ ծրագրի՝ նա պիտի հասնէր Երեւան և այնտեղ հաստատուելով՝ յարձակումներ էր գործելու կամ Երեւանի, կամ Սարդար-Աբաթի բերդերի վրայ:

**Մինչև զլիսաւոր բանակի ժամանելը՝** նա — յառաջապահ գունդը, — պարտաւոր էր նաև պաշտպանել շրջակայ հայաբնակ գիւղերը, որպէսզի նրանք պաշար հայթհայթեն զօրքին:

Սակայն... հակառակ Ներսիսի և Պասկեվիչի սպասածին՝ պարսիկները ձեռքները ծալած նստած չէին:

Մինչև Բենկենդորֆի և Ներսիսի գալը՝ պարսիկները աճապարեցին և Արարատեան դաշտի հայերին ընկոյթեանք Արաֆսի միւս ափը անցկացրին, քանդելով նրանց գիւղերը և ոչնչացնելով նրանց ունեցած զաւառը: Աշնանային ու գարնանային ցանքներ անելը եւս՝ հայ գիւղացիներին վաղորօք արգելում էր: Պարսիկները յոռուցան, հարկաւ, դատարկել նաև Էջմիածնի հացի ամրարներն ու մթերեղենների շտեմարանները: Այնպէս որ երբ ամբիօր 9-ին՝ Ներսէսը Բենկենդորֆի հետ Երեւանեան դաշտը մտաւ, այնտեղ ուրիշ ոչինչ չտեսաւ, եթէ ոչ ամայացած և կողոպտուած հայկական գիւղերի աղէկտուր, անմարդաբնակ աւերակները...

ՃԻՅ.

Հէնց առաջին քայլափոխում զօրքի համար զգալի եղաւ պաշարի պակասութիւնը, որի առ-

թիւ Բենկենդորֆը հաղորդելով Պասկեվիչին՝ աւելացնում էր, որ եթէ անմիջապէս Թիֆլիզից պաշար չուղարկուի զօրքին՝ վերջինս քաղցածութիւնից կը կոտորուի: Զինուորներն սկսել էին արդէն զեմնի արմատներն ուտել\*):

Սակայն յուսարով, որ էջմիածնում շատ կամ քիչ պաշար կը **ճարուի՝** Բենկենդորֆը առաջ շարժուեց,

ի՜նչ ճանապարհից՝ Ներսէս Արքեպիսկոպոսը էջմիածին ուղարկեց Բիւրականցի մի երիտասարդի, — Յովհաննէս Ասլանեան անունով, որ ուսանելին ճանապարհ ցոյց տայ, նրանց գալը միաբանութեան աւետէ և մի քանի ուրիշ բերանացի յանձնաւորութիւններ:

Ծպեալ Ասլանեանցը բռնուեցաւ պարսիկներից և քննութեան ենթարկուեցաւ:

Չնայած իրան տուած չարչարանք ու խոշտանգներին՝ Ասլանեանցը հրաժարուեցաւ յայտնել պարսիկներին թէ՛ Ներսէսը ինչ յանձնարարութեամբ է ուղարկել իրան էջմիածին:

Պարսիկները կտրեցին նրա քիթը, հանեցին նրա մէկ աչքը, ի վերջոյ կտրեցին լեզուն և արիւնի մէջ լողացող կիսաշունչ դիակը զաշտի մէջ թողնելով իրանք հեռացան:

Մի քանի ժամ յետոյ՝ Ասլանեանցը ուշքի գալով՝ հազիւ հազ էջմիածին հասաւ և նշաններով հասկացրեց միաբանութեանը՝ ուս զօրքի հետ՝ Ներսիսի մօտ լինելը վանքին:

\*) АКТЫ, VII. кр. 259.



Քթից, աչքից ու լեզուից զրկուած բիւրա-  
կանցի Յովհաննէս Ասլանեանցը, իր հերոսական  
հաւատարմութեան համար, ուստի կառավարու-  
թեան կողմից պարգևատրուեցաւ ոսկեայ մեդա-  
լով և տարեկան 100 ըուբլի կենսաթոշակով\*):  
ՃԻԳ.

Ապրիլի 13-ին Բենգէնդօրֆի բանակը, Ներ-  
սիսի առաջնորդութեամբ, հասաւ Էջմիածին:  
Հոգևորականութիւնը նրան զիմաւորեց զանգա-  
հարութեամբ և խաչ առ խաչվառով: Մտան տա-  
ճարը և Ներսէսը բեմ բարձրանալով միաբանու-  
թեանը աւետեց թէ՛ «ահա հասաւ աղատութեան  
պանծալի օրը, երբ Հայաստանի գարեհօր փառքը  
աշխարհիս վրայ նորից պիտի վերականգնի խա-  
չի զօրութեամբ, որ իրանց հետ բերում են ուս  
եղբայրները»:

Զօրքը տեղաւորուեց վանքում, նրա պարս-  
պում: Բայց վանքը թալանուած լինելով, ուտե-  
լու հաց չկար:

Բենգէնդօրֆի թախանձանքի համաձայն՝  
Պասկեվիչը թէև փութաց Վրաստանից զօրքին  
պաշար հասցնել, սակայն պաշարը բերում էին  
լեռնային, խորտուբորտ ճանապարհներով և թըշ-  
նամու ձեռքն ընկնելու ահ ու տագնապալ: Ուս-  
տի և շատ դանդաղ էին շարժվում պաշար բե-  
րողները: Մինչդեռ սովածութիւնից գլխաւորա-  
պէս՝ զօրքի մէջ արդէն հիւանդութիւններ սկըս-  
ուեցան: Ուստի Բենգէնդօրֆը, իր թուուցիկ խմ-

\*) АКТЫ, VII, стр. 492 № 443.

բերով, մի կողմից հաց էր որոնում շրջակայ-  
քում, միւս կողմից Սարգար-Աբաղի բերդի վրայ  
յարձակում գործում: Սակայն բերդը ամուր էր:  
Բենգէնդօրֆի աշխատանքը ի գուր անցաւ:  
Նա թողեց Սարգար Աբաղը և պաշարեց Երևանի  
բերդը, բայց նոյնպէս ապարդիւն:

Վերջապէս մայիսի 12-ին Թիֆլիզից դէպի  
պատերազմի դաշտը ճանապարհ ընկաւ ինքը Պաս-  
կեվիչը՝ 500 ձիաւոր հայ և վրացի իշխանների  
և ազնուականների ուղեկցութեամբ:

Առաջ շարժուեց ուսաց գլխաւոր բանակը  
ևս: Մայիսի 17-ին գուրս եկաւ Թիֆլիզից և  
հայկական հեծելազուններ իր դրօշակով:

Ճանապարհին հրճուանքով զիմաւորում էին  
հայկական գնդին զիւղացի հայերը և իրանք էլ  
յօժարակամ միանում էին գնդին, որոյ թիւը՝  
դեռ Երևան չհասած՝ 1000 հոգուց անցկացաւ:

Երբ հայկական գունդը Էջմիածնին մօտե-  
ցաւ՝ նրա ուրախութեան ու ոգևորութեան չափ  
ու սահմանն անցաւ:

Վանքի պարիսպի վրայ ուսական դրօշակն  
էր ծածանում այդ միջոցին:  
ՃԻԳ.

Յուլիսի 8-ին Պասկեվիչը հասաւ Էջմիածին  
և խաչով աւ խաչվառով ընդունուեցաւ հոգևո-  
րականութեան կողմից, ի հարկէ, Ներսիսի ա-  
ռաջնորդութեամբ, որի վրայ էր ծանրացել հի-  
ւանդ ուս գինուորներին խնամելու գծուարին  
գործը:



Իսկ հիւանդների թիւը, ժամ առ ժամ, աւելանում էր, թէ անդի և թէ կլիմայի պատճառով: Այնպէս որ Բենգենդօրֆի բանակում աւելի հիւանդներ կային, քան առողջ զինուորներ:

Եւ այս ժենեռայի գունդը, իսկապէս, պատերազմական գործողութիւնների համար՝ գրեթէ անպէտք էր դարձել:

Ուստի Պասկեվիչը Բենգենդօրֆի և նրա գնդի փոխարէն՝ ժենեռայ կրասովսկուն և նրա գնդին յանձնելով Երևանի պաշարումը, ինքը գլխաւոր բանակով անցաւ Գառնի և Շարուրի ամառի և անշուր անապատի միջով՝ հասաւ Նախիջևան և առանց արիւն թափելու՝ տիրեց: Ուրովհետեւ պարսիկները Նախիջևանը անպաշտպան թողնելով՝ իրանց ոյժը կենդրոնացրել էին մօտակայ Աբբաս-Աբադ բերդում\*):

Պասկեվիչը պաշարեց այս բերդը և սկսեց ուժեղացնել: Վերջ ի վերջոյ յուլիսի 7-ին Աբբաս-Աբադը ռսներին յանձնելով՝ պարսիկները «բորբոքեալ անհնարին զայրացուկս սրտի՝ սկսան կողոպտել, քանդել և հրձիգ առնել զբնակարանս Հայոց, որք փախուցեալ թաղչէին յերեսաց կատաղութեան նոցա»\*\*):

Երբ Պասկեվիչը Աբբաս-Աբադը ուժեղացնում էր, յանկարծ Արաքսի աջ ափում երևեցաւ Աբբաս-Միրզան 16,000 հեծելազօրքով և խաղաց Երևանի վրայ:

\*) АКТЫ, VII. кр. 259, 264.

\*\*) Պատմ. կաթող. էջմ. կր. 90.

Նա մտադիր էր վերցնել էջմիածինը, ապա անցնել Վրաստան, աւերել Թիֆլիզը և յետոյ Գանձակի և Ղարաբաղի վրայով յետ դառնալ Պարսկաստան:

Պասկեվիչը ամենեւին տեղեկութիւն չունէր պարսից զահաժառանգի այս առաջխաղացութեան և նրա մտադրութիւնների մասին:

ՃԻՆ.

Բենգենդօրֆի զինուորներին չխնայող Երևանի կլիման, այն էլ ամառային ամիսներում, ի հարկէ՝ չխնայեց կրասովսկուն զինուորներին ևս: Սրանց մէջ ևս հիւանդութիւն սկսուեց և տարածուեց այն աստիճան, որ կրասովսկին ստիպուած եղաւ Երևանի պաշարումը վերացնելով՝ զօրքը տեղափոխել Բաշ-Աբարանի բարձրաւանդակը:

— «Տարաբախտութիւն երկրին Երևանայ, — այդ առթիւ գրում էր Ներսէսը, — դեռ ծանրանայ և ծանրացուցանէ զիրացն զանձկութիւն և զնեղութիւն: Մինչև անա լրանան երեք ամիսք յորս անաւոր զօրութիւնք ռուսաց տաւալին առանց իրիք արժանաւոր ներգործութեանց գտանին և ժողովուրդի առհասարակ մնան ճարագիր յօսարոքեան և ի սարս և ի ձորս սահմանաց Օսմանցոց»:

«Այլ այսուամենայնիւ, — շարունակում է Արհին, — յուսով կամք թէ լրացին և տարաբախտութեանցն չափը և ի վերջին աւուրան՝ օգոստոսի հասցեն խնամք Ամենաբաւականին և զօրութիւնք Ռուսաց սասանեցուցեն զթշնամիս և



գամրոցն Երևանու և եղիցի վաղման ճարարադ-  
դորքեան հայրենեաց Հայաստանի»:

Հէնց որ Կրասովսկին Երևանի պաշարումը  
վերացրեց և քաղուեցաւ Բաշ-Աբարանի բարձ-  
րաւանդակը՝ պարսիկները՝ քաջ գիտենալով որ  
ամառուայ վերջերում ոռոտները նորից պիտի  
գան՝ սկսեցին բերդի վրաստեած տեղերը կարկա-  
տել և բերդը նոր ի նորոյ ամրացնել:

Միևնոյն ժամանակ Երևանի սարդարը որո-  
շեց էջմիածինը ոսներից յետ վերցնել:

Այս դիտաւորութեամբ՝ սարդարը յուլիսի  
4-ին մօտեցաւ էջմիածնին՝ հետն ունենալով,  
ըստ վերոյիշեալ գրութեան Ներսիսի, 1500 սար-  
քազ, 2000 ձիաւոր և երկու թնդանօթ:

Վանքից երեք վերստ հեռաւորութեան վրայ  
կանգ առնելով՝ սարդարը գրեց էջմիածնում ե-  
ղած զօրքի մեծաւորին՝ իբր թէ Կրասովսկին  
յետ է քաղուել Վրաստան և չէ կարող օգնու-  
թիւն հասցնել, խորհուրդ էր տալիս չլսել «խա-  
քեքայ Ներսիսին» և անձնատուր լինել, խոստա-  
նալով թողնել ոռոտ զօրքին ազատ երթալու,  
հակառակ դէպքում Սարդարը սպառնում էր վան-  
քը քարութանդ անել և մարդկանց բնաջինջ ա-  
նել՝ Աստծոյ առաջ այդ մասին պատասխանաւո-  
ւութիւնը թողնելով ոռոտ մեծաւորի վրայ:

Ի պատասխանի Սարդարի այս գրութեան՝  
վանքի պարսպից թնդանօթը որոտաց և ուռմբն  
ընկաւ պարսից բանակի առաջ:

Սարդարը յետ քաղուեց, բայց նրա հեծե-

լագունդը բռնեց բոլոր ճանապարհները, որպէս-  
զի վանքի յարաբերութիւնը միայնգամայն կը-  
տրուի զրսի աշխարհի հետ:

Զնայած զրան՝ մի քանի կտրիճ հայ ձիա-  
ւորներ թռան Կրասովսկուց օգնութիւն խնդրելու:

Ժենեռալը երկու վաշտ զօրք և չորս թըն-  
դանօթ վերցրած շտապեց դէպի էջմիածին:

Կրասովսկու մօտենալը լսելով՝ Սարդարը իր  
զօրքը յետ քաղեց Երևան:

Կրասովսկին յետ դարձաւ:

Իսկ պարսից հեծելագունդը նորից ցրուե-  
ցաւ էջմիածնի առաջ, սակայն չհամարձակուեց  
վանքին մօտենալ, անշուշտ կարծելով որ ոսնե-  
րը վանքում մեծ պատրաստութիւն ունեն:

ՃԻԶ.

Երկար չտուեց այս դրութիւնը:

Օգոստոսի 4-ին, անսպասելի կերպով, Աբ-  
բաս Միրզան յանկարծ էջմիածնի դաշտում ե-  
րևեցաւ 30,000 զօրքով:

Մի քանի թեթեւ ընդհարումներից յետոյ՝  
զահաժառանգը համոզուեց, որ թէպէտ և Կրա-  
սովսկու բռնած դիրքը ամուր է, բայց իր ձեռ-  
քի տակ ընդամենը 4000 զօրք ունենալով չի  
վստահանում ցած գալ, ուստի ինքը օգոստոսի  
15-ին իր բանակով եկաւ Օշական գիւղը, որ-  
պէսզի միւս օրը յարձակուի էջմիածնի վրայ:

Բայց հէնց նոյն օրուայ երեկոյին Աբբաս  
Միրզի զօրքը շրջապատելով էջմիածինը՝ Իւսուֆ  
խան զօրապետը առաջարկեց ոռոտ զօրքի մեծա-



ւորին անձնատուր լինել: Մեծաւորը մերժեց:

Ապա խանը նամակով դիմեց Ներսիսին: Սա նոյնպէս մերժեց:

Այս ժխտողական պատասխաններէց յետոյ պարսիկները շարեցին իրանց թնդանօթները և գիշերուայ մթութեան մէջ՝ սկսեցին սաստիկ ուժգնութեամբ վանքը:

Դղրդում էր Արարատեան դաշտը և թնդանօթների որոտման ձայները հասնում էին Արա-յի լեռան ստորոտում բանակած ուս զօրքին:

Կրասովսկին տագնապում էր՝ էջմիածնից ոչ մի լուր չստանալով:

Քաջ զօրապետը չէր իմանում որ էջմիածնից իրան գնացած հայ սուրհանգողները՝ մէկ-մէկու վրայ՝ խոչտանգվում և կոտորվում էին պարսիկներից, ոմանք զրկուելով իրանց աչքերից, ոմանք քթերից և ականջներից, ոմանք լեզուներից և ոմանք էլ տեղն ու տեղը սրախող-խող լինելով\*):

Չնայած հայ սուրհանգողների զլխին եկած այգբան փորձանքներին՝ այնուամենայնիւ նրանցից մէկը կարողացաւ ողջամբ ուսաց բանակը հասնել և իրերի դրութիւնը հազօրդել Կրասովսկուն:

Այդ միջոցին ուս ժենեռալը Երևանի նշահաւոր հայ մելիք Սահակ Աղամալեանից ևս լուր առաւ թէ՝ Արբաս Միրզան շտապում է էջմիածինը քանդելով արշաւել Վրաստան:

\*) Акты, VII, кр. 491.

ՃԻԷ.

Կրասովսկու դրութիւնը շատ վատ էր: Թիֆ-լիզից նրան օգնութեան էին ուղարկել զօրք և մեծամեծ թնդանօթներ: Բայց դրանք հազիւ երեք-չորս օրից յետոյ ժենեռալի տրամադրութեանը տակ կարող էին լինել:

Իսկ մինչև այդ ժամանակ էջմիածինը առանց օգնութեան թողնել, — միևնոյն էր թէ պարսից կատաղութեանը զոհ բերել ոչ միայն էջմիածինը իր ամբողջ միաբանութեամբ, այլ նաև յայտեղ գետեղուած հազարաւոր ուս հիւանդ զինուորներին և նրանց պահակ փոքրիկ զնդին:

Հէնց այդ միջոցին Կրասովսկուն լուր հասաւ (թէ և վերջերում իմացուեց որ լուրը ճիշտ չէր) իբր թէ էջմիածնում հացի պակասութիւնից էլ մարդիկ սաստիկ նեղվում են:

Թերևս աւելի մարդկային կարեկցութիւնից, քան պատերազմական հաշիւներից թելադրուած՝ ժենեռալ Կրասովսկին օգոստոսի 16-ին, իրիկնադարին ճանապարհ ընկաւ դէպի էջմիածին\*):

Նա իր հետ տանում էր 1800 հոգի հետեակ, 500 հեծելազօր, 12 թնդանօթ, 100 հեծեալ հայկական զնդից և մի քանի հարիւր սայլ, պաշարեղէնով բեռնաւորուած:

Բանակաւորում պահպանութեան համար ֆուցին մի քանի հարիւր զինուոր և 10 թնդանօթ:

\*) Акты, VII, кр. 259.



ՃԻԸ.

Աշտարակից մինչև Էջմիածին ~~20~~<sup>18</sup><sub>25</sub> վերստ հանապարհ է, որ շատ քարքարոտ էր մանաւանդ այն ժամանակ, այնպէս որ բեռնակիր սայլերի և թնդանօթակիր կառքերի ակները ջարդվում էին: Զինուորները գրեթէ իրանց ուսերի վրայ էին կրում սայլերի ծանրութիւնները: Աւելացրէք դրա վրայ և այն, որ զօրքի անցած տեղերում ջուր չկար: Ընդ նմին՝ արեւ սաստիկ այրում էր:

Ռուսները գնում էին Քասախ գետի ձախակողմեան ափով: Իսկ գետի աջակողմեան ափով, գրեթէ զուգնթացաբար, նրանց հետևում էին պարսիկները, — հետևակ զնդով և թնդանօթներով:

Վերջապէս ռուսաց զօրքը մտաւ մի նեղ և քարքարոտ ձոր, ուր յանկարծ ինքզինքը շրջապատած գտաւ ամեն կողմից պարսիկներից:

Սկսուեցաւ մի սարսափելի ջարդ:

Քաջութեամբ մեռնում էին ռուս սպաներն ու զինուորները, իսկ կենդանի մնացածները՝ քայլ առ քայլ սւիներով էին բաց անում իրանց համար ճանապարհ՝ ձորից դուրս գալու նպատակով:

Կրասովսկու տակ երկու անգամ ձին սպանուեցաւ, ինքնէլ ձախ թևից վիրաւորուեցաւ:

Այնուամենայնիւ ժենեռալը շարունակում էր կռուել ի խրախոյս իր զինուորներին:

Ուր ուրեմն կոտորածից ազատուած ռուս

զինուորները ձորից դուրս գալով՝ սկսեցին վայր իջնել դէպի Էջմիածնի դաշտը, բայց այստեղ էլ այդ խեղճերին նոր հարուած էր սպասում:

ՃԻԹ.

Ծարաւից սաստիկ պապակուած, յոգնածութիւնից հազիւ հազ շարժւել կարողացող զինուորները իրանց առաջ մի պղտոր առու տեսնելով՝ առանց իրանց մեծաւորների հրաման ու յորդորներին անսալու, ազահաբար վրայ թափուեցան:

Եւ ահա հէնց այդ բոլորին նրանց վրայ յարձակուեցան պարսիկները և նորից սկսուեցաւ ռուս զինուորների ջարդը\*):

Վերջիններս այն աստիճան յոգնած, թուլացած էին, որ անդադար զլորվում և վայր էին ընկնում և չէին կարող որքան և իցէ ընդդիմութիւն ցոյց տալ՝ նոյն իսկ գլուխը կտրելիս:

Պարսիկները ոչխարի նման մորթոտում էին նրանց և կտրած գլուխները ժողովում, տանում էին Աբբաս Միրզին, որ, — ասում են, — խոստացել էր ամեն մի ռուսի գլխի համար՝ տասը ոսկի, իսկ հայի գլխի համար՝ հինգ ոսկի\*\*):

Այսպէս ահա Կրասովսկու բանակի համար այդ օրը (օգոստոսի 17) մի չարաբեր օր էր:

Զհաշուելով վիրաւորուածներին և 200 հո-

\*) АКТЫ, VII, кр. 560. № 517.

\*\*) Հաշտութեան պայմանների մասին՝ Պատկերչի հուստարմատար Գրիբուսկովի հետ բանակցելիս՝ Աբբաս Միրզան ժխտելով ժխտում էր ռուս զինուորներին մորթոտել պարսիկների ձեռքով: АКТЫ, VII, 555. № 516.



գի գերի ընկածներին, այդ օրը պատերազմի դաշտում մնացին ուս 24 սպաների և 1150 զինուորների զիականեր:

Բայց ռուսների կորուստը անհամեմատ առաւել շատ կը լինէր, եթէ մի հայ մարդ, անսպասելի կերպով, օգնութեան հասած չլինէր ռուսներին:

Այդ հայը՝ Երեանցի Յակոբ Յարութիւնեանցն էր:

ՃԼ.

Յակոբ Յարութիւնեանցը պարսկահպատակ էր և վաղուց ի վեր ծառայում էր Սարդարի թնդանօթաձիգ զօրքերում:

Նա յայտնի էր որպէս հմուտ ուժաւոր: Ներկայ պատերազմում նրան յանձնել էին մի անգլիական թնդանօթ:

Սկզբում նա հաւատարմութեամբ կատարում էր իր գործը, բայց կռուի կատաղի ժամանակ տեսնելով քրիստոնէայ զօրքերի պարտութիւնը և քաջ գիտնալով որ այդ զօրքը ս. Էջմիածինը ազատելու համար է գնում, յանկարծ թնդանօթի բերանը շուռ տուեց և փոխանակ ռուսներին՝ սկսեց պարսիկներին կոտորել\*):

Այսպիսով Յակոբ Յարութիւնեանցը հնարաւորութիւն տուեց ռուսական մի վաշտի՝ անփառ պարսից ձեռքից խոյս տալու, ազատուելու:

Եւ այդ վաշտի ազատումն էր զխաւորապէս, որով Յակոբի գործած յանցանքը յայտ-

\*) Акты, VII, кр. 491.

նուեցաւ: Իսկոյն ևեթ նրան կալանաւորեցին: Բայց կռուի ընդհանուր շփոթի ժամանակ Յակոբը յաջողեցաւ փախչել: Պարսիկները ման եկան, գտան, և նորից բռնեցին:

Սարդարի հրամանով Յարութիւնեանցի աչքերը բռնեցին, քիթը, շրթունքները, ականջները և ոտքերի կրունկները կտրեցին և վէր ձգեցին դաշտում զիակաների մէջ:

Ժամեր անցնելուց յետոյ՝ այս այլանդակուած ու տանջուած մարդը ուշքի եկաւ և ձեռքերի վրայ սողալով մի կերպ ինքզինքը Էջմիածնի վանքը գցեց:

Յակոբ Յարութիւնեանցի արածներն ստուգելուց յետոյ՝ Պասկելիչը կարգադրեց նրան միանուագ 10 ոսկի, որ 31½ բուբլի էր անում, տալ: Տարեկան էլ մինչ ցմահ 100 բուբլի թոշակ սահմանեց:

ՃԼԱ.

Յակոբ Յարութիւնեանցի շնորհիւ պարսիկների ձեռքից ազատուած վաշտի խուսափումը տեսնելով՝ Էջմիածնում եղած զօրքերը նրանց ընդառաջ գնացին օգնելու նպատակով:

Այս բանը տեսնելով խուսափող վաշտին հետապնդող պարսիկները՝ յետ քաշուեցին և կոտորածը դադարեց:

Այնուհետեւ կենդանի մնացած ռուս զինուորները, — ամենքն էլ ուժասպառ և աշխարհուած, — խումբ-խումբ և անկարգ դիմեցին դէպի Էջմիածին:



Վանքի պարտալի դռները բացուեցան, զանգակները հնչեցին և միաբանութիւնը խաչ ու խաչվառով դիմաւորեց իր ազատիչներին:

— «Այս մի բուռն ուռւ եղբայրները, — ասեց նաբանեց Ներսէսը, ճղեցին անցան երեսուն հազար կատաղի զօրաց միջից: Այս սակաւաթիւ դուռնը անմահ փառաց արժանացաւ և ժենեռաւ Կրասովսկու անունը յաւիտեան անջնջելի կը մնայ Էջմիածնի տարեգրութեանց մէջ\*):

Սակայն Էջմիածնի հէնց այդ ազատումը՝ Կրասովսկուն, ասլա և Ներսիսին, շատ թանգ նստեց:

Պասկելիչը, որ այդ ժամանակ Նախիջևանի կողմերումն էր և իր գլխաւոր բանակով պատրաստվում էր Թաւրիզի վրա արշաւել ուր և կարծում էր Աբբաս Միրզին հանդիպել, զարմանալով զարմացաւ, երբ լսեց յանկարծ, որ պարսից զահաժառանգը Նրևանի կողմերումն է:

Մի քանի օր յետոյ՝ Պասկելիչը ստացաւ Կրասովսկու զեկուցագիրը և պատերազմի տխուր նկարագիրը:

Թաւրիզի վրայ արշաւելու միտքը նա, ի հարկէ, ստիպուած եղաւ թողնել, կամ յետաձգել և զալ օգնութեան հասնել Կրասովսկուն:

Զեկուցագիրն ընդունած օրուայ երեկոյին և և՛ Պասկելիչը վերցրեց իր բանակի մեծ մա-

\*) Բարձրագոյն թոյլատրութեամբ՝ 1833 թ. մայիսի 9-ին եփրեմ և Յովհաննէս կաթողիկոսները, վանքի հաշուով մի արձան կանգնեցրին 1827 թ. օգոստոսի 17-ին սպանուած ուռւ դիւնուորների վրայ, Էջմիածնից 4 վերստ հեռու:

սը 20 թնդանօթով և ճանապարհ ընկաւ դէպի Էջմիածին:

ՃՂԲ.

Սեպտեմբերի սկզբներին Աբբաս Միրզան սեց Պասկելիչի գալը և իսկոյն հեռացաւ: Նա անցաւ Արաքսը և Սուրմալուի Ղարա-Ղալա կոչուած տեղում կանգ առաւ:

Իսկ Պասկելիչը ամսի 5-ին, գիշերուայ ժամը 10-ին իր զօրքով հասաւ Էջմիածին, ուր նրան պատշաճաւոր յարգանքով դիմաւորեց Ներսէսը: Սակայն Պասկելիչը սառն կերպով ընդունեց, որովհետեւ Աշտարակեցուն իրան համարում էր Աշտարակի պատերազմի գլխաւոր մեղաւորներէից մէկը:

Նւ ահա հէնց այդ օրուանից սկսվում է Պասկելիչի անբաւականութիւնը դէպի Ներսէսը:

Բայց որովհետեւ Պասկելիչը դեռ կարօտ էր Ներսիսին, — ուստի և զսպելով իր զայրոյթը՝ արտաքուստ դարձեալ շոյշոյում էր Աշտարակեցուն:

Հետեւեալ առաւօտը, սեպտեմբերի 6-ին Էջմիածին եկաւ նաև Կրասովսկին՝, Թիֆլիզից եկած հասած զօրքերի և մեծամեծ թնդանօթների հետ:

Պասկելիչը յարձակուեց Կրասովսկու վրայ և բացատրութիւն պահանջեց, թէ ինչո՞ւ էր նա շտապել Էջմիածնին օգնութեան գալու:

«— Որովհետեւ, պատասխանեց Կրասովսկին, ես վախենում էի, թէ թշնամին պարսպալը կը քանդէ և կը վեր առնէ վանքը»:

— «Նս տեսայ վանքի պատերը, — կոշտու-



թեամբ ասաց հրամանատարը, — և ձեր վախը ի  
զուր էր. աւելի լաւ էր թողնել թշնամուն առ-  
նել էջմիածինը, քան թէ նրա ազատութեան  
համար զօրքը վտանգի մէջ գցել: Ես աւելի լաւ  
կը համարէի զոհել վանքը, քան թէ անել այն,  
ինչ որ դուք արիք»:

Կրասովսկուն չի թոյլ տուեց Պասկեվիչը ու-  
րեւէ բացատրութիւն տալու, կամ արդարանալու:

Իսկ երբ նա իր ստորագրեալներին վարձա-  
տրելու հարցը բարձրացնելով՝ Պասկեվիչի առան-  
ձին ուշադրութիւնը հրաւիրեց իր գլխաւոր աշ-  
խատակից Ներսէս արքեպիսկոպոսի վրայ, — Պաս-  
կեվիչը հեզնեց ասելով՝ «ես մի շաւ կը ներկեմ  
յոպարոն արքեպիսկոպոսին, որ չհամարձա-  
կուի բանակը սխալների մէջ գցել, մանաւանդ  
երբ ես այստեղ չեմ»\*):

ՃԼԳ.

Քանի որ Աբբաս Միրզան Արաքսն անցել,  
յետ էր դարձել, քանի որ Թիֆլիզից ապսպրուած  
զօրքերն ու մեծ թնդանօթներն եկել հասել էին  
և քանի որ աշնան գալով՝ եղանակը բաւականին  
մեղմացել էր, — Պասկեվիչը վճռեց Սարգար-Ա-  
բաղի բերդը վերցնել:

Սարգար-Աբաղը գտնվում էր էջմիածնից  
ոչ այնքան հեռու, ինդամենը մի վերստ հեռա-  
ւորութեամբ Շահրիար գիւղից:

Բերդը 15 տարի առաջ կառուցել էր Երեւ-  
նի Սարգարը մեծ մասամբ հայ զիւղացիների

\*) Ամենայն Հայոց կաթող. եր. 298.

օգնութեամբ: Նա քառակուսի էր և ամուր ու  
բարձր պարիսպներով և աշտարակներով էր շրջա-  
պատւած: Շինութեան քարերը՝ Արմաւիր կարծ-  
ւած պատմական քաղաքի մեծամեծ որձաքա-  
րերիցն էին:

Բերդը զինւած էր բազմաթիւ թնդանօթ-  
ներով:

Բացի միջանի հազար պահապան զօրքերից,  
որոնց հրամանատարը նշանաւոր Հասան խանն  
էր, պարսիկները բերդի մէջ ժողովել էին շրջա-  
կայ գիւղերի հայ և թուրք բնակիչներին և կենսա-  
կան ու ռազմական մթերքների մեծ պաշար:

Մինչդեռ ռուսական բանակը իր քանակու-  
թեանը բաւարար պաշար չունէր և չէր էլ ճարվում:

Այս անհրաժեշտ կարիքից հարկադրուած  
հպարտ Պասկեվիչը զիջաւ և, յանկարծ մեղմանա-  
լով, զիմեց Ներսիսին խնդրելով, որ զօրքերի  
համար նա ինքը հաց ճարէ:

Ներսէսը յոնձ առաւ պաշար ճարել, եթէ  
իրան հետ մի երկու գունդ զօրք ուղարկուի  
մինչև Սուրմալուի աղահանքը, — մինչև Կողբ  
գիւղը:

Սեպտեմբերի 9-ին ամբողջ բանակը էջ-  
միածնից դուրս եկաւ դէպի Շահրիար գիւղը ուղ-  
ղուելով:

Այդ գիւղից զօրքերի մեծագոյն մասը Պաս-  
կեվիչի իրան հրամանատարութեամբ գնաց և  
Սարգար-Աբաղը պաշարեց, իսկ փոքրագոյն մասը  
ժենեռալ Սուխոելէնի հրամանատարութեամբ և



Ներսիսի առաջնորդութեամբ շտապ անցաւ Արաքսը, հասաւ Կողբ և պարսից ձեռքով աշտեղ դիզած միքանի հազար սոմար ցորենն ու գարի զրաւելով իսկոյն յետ դարձաւ և ամսի 12-ին միացաւ Պասկեվիչի բանակին\*):

Սուխաւենի յանկարծական յարձակումը Կողբի վրայ աշխարհ ազդեց մօտակայ Ղարա-Ղալա կոչուած տեղում գտնուող Աբբաս Միրզի վրայ, որ իսկոյն հեռացաւ իր զօրքերով դէպի Մակու:

Կողբում Ներսէսը տեսաւ պարսից ձեռքով ժողովուած մի քանի հարիւր հայ գերդաստաններ Աշտարակ, Օշական և Փարաքար գիւղերից:

Պարսիկները դրանց քշել հեռացրել էին իրանց գիւղերից, որպէսզի ռուսներին օգնութիւն չկարողանան անել:

Ներսէսը այդ բոլոր ընտանիքներին հետը վերցնելով իրանց գիւղերն ուղարկեց\*\*):

### ՃԼԴ.

Պասկեվիչը շօշափելի փաստեր ունէր այն մեծ ազդեցութեան նկատմամբ, որ ունէր Ներսէս արքեպիսկոպոսը տեղացի ոչ միայն հայ, այլ նոյն-իսկ թուրք ազգաբնակութեան վրայ:

Ուստի երբ արհիւն Կողբից բանակը վերադարձաւ, Պասկեվիչը խնդրեց նրան մի կոչ-պրօկլամացիա ուղղել Սարգար-Աբաղի հայ բնակիչներին

\*) АКТЫ, VII, 4р. 561, № 518.

\*\*) Նոյնը,

որպէսզի նրանք շուտով անձնատուր լինեն ռուսներին:

Հայերի օրինակին կը հետևէին ի հարկէ, և միւսները:

Եւ Ներսէսը գրեց և ցրուեց հետևեալ կոչը.

«Հայաց բնակելոց ի Սարգարաբատ, ի մէջ բերդին»:

«Ծանուցանել ձեզ հարկաւոր համարիմ, զի Նորին բարձր գերազանցութիւն գլխաւոր կառավարիչն զօրաց ռուսաց որ յերևան Իվան Ֆէդրիչ Պասկեվիչն այնպէս տնօրէնութիւն իւր կարգադրեալ յայտնէ վասն ամենայն եղելոցն ի մէջ բերդիցն Սարգարապատու և երևանու զօրաց բերդապահաց և ժողովրդոց բնակչաց, զի թէ յօժարեսցին նոքա յառաջ քան զկործանումն պարսպաց բերդիցն ելանել յայտնի կամ այնպիսի կերպիւ, և թողուն զհակառակութիւնն և զպատերազմն անօգտակար անձանց իւրեանց և սերնդոց և ժառանգաւորաց իւրեանց, այնպիսեացն տուեալ լինիցի ազատ կամք՝ գնալ ապահովութեամբ, ուր և կամք իւրեանց եղիցին և որ ի նոցունց մնացելոց իցէ ի հպատակութեան կայսեր ռուսաց, ունիցի զյոյս կատարեալ զի վայելել ունի զմեծ ողորմութիւն նորա լիազոյն ապահովութեամբ, իսկ՝ որ ոք կամիցի յամառիլ յուսով քաջամարտութեան իւրեանց և ոչ յօժարեսցի յառաջ քան զփորձս պատերազմութեանց հոգ ունիլ վասն ի բաց հեռացուցանելոյ զինքն ի հակառակութեանց և ի



Թշնամութեանց ընդդէմ ահաւոր զօրաց տեղեւորա-  
ստանն կայսերութեան ամենայն ուսաց, այն-  
պիսիքն ունին մատնիլ ի սուր աններելի վրէժխն-  
դութեամբ: Ապաքէն պարտաւորութիւն ինձ  
համարեալ՝ փութամ յայտնել ձեզ այժմ, զի ամեն-  
այն կարելի եղանակաւ հնարս հնարեսլիք ծանու-  
ցանել եղելոցն ի բերդի ընտանեաց ձերոց և  
ամենայն ծանօթից վասն այնպիսի կարգադրու-  
թեանց կամաց զլիաւոր կառավարչին զօրաց  
ուսաց, զի որք կարողքն լինիցին հոգ կալցին  
հեռացուցանել զանձինս և հանել ի պարսպաց  
բերդիցն զինքեանս և ապրեցուցանել զկեանս  
իւրեանց»:<sup>\*)</sup>

ՃԼԵ.

Ներսիսի այս կոչը գրուեցաւ սեպտեմբեր  
12-ին. Սարգարաբաղի պաշարումը սկսուեցաւ  
13-ին, իսկ ռմբակոծումը՝ 18-ին:

Միքանի ժամուայ պաշարումից յետոյ՝ հա-  
յերը նախ խնդրանօք, ապա Թախանձանօք ստի-  
պում էին Հասան խանին անձնատուր լինել:  
Խանը թէև անձնատուր չեղաւ, սակայն նոյն  
երեկոյեան մթութեան մէջ փախաւ բերդից իւր  
զօրքերի հետ միասին՝ Նրեանի ձանրան բռնելով:

Խանի փախուստը ռսներին իմաց տալու  
նպատակաւ մի հայ վաղեվագ եկաւ բանակը և  
կանչեց «սալդաս իդի, սարդար ստորայ»:<sup>\*\*)</sup>

<sup>\*)</sup> Պատմ. Հայոց կաթող. եր. 98.

<sup>\*\*)</sup> Ամենայն հայոց կաթող. եր. 302.

Հեծելագօրքի մի մասը հետամուտ եղաւ  
Հասան խանին բռնելու, բայց ճանապարհը՝ մթու-  
թեան մէջ՝ կորցնելով ունայնաձեռն յետ դարձաւ՝  
գերի վերցնելով միմիայն 250 սարբազ:

Հասան խանի հեռանալուց անմիջապէս յետոյ՝  
Սարգարաբաղի հայերը բերդի դուռները բացին  
և ռսներին ներս հրաւիրեցին:

Հայ ժողովուրդն ու հոգեւորականութիւնը  
խաչ ու խաչվառով դիմաւորեց և բերդի մէջ  
ընդունեց Պասկեվիչին, որի ձեռքն անցան բացի  
13 թնդանօթներէից և այլ պատերազմական մթերք-  
ներէից, այլ եսե հացի մեծ պաշար\*):

Պասկեվիչը, ի հարկէ, անմիջապէս ազատ  
թողեց ինչպէս հայ, նոյնպէս և վրացի ու գերմա-  
նացի (Կատերինֆէլտ կօլօնիայից) այն գերիներին,  
որոց պարսիկները ժողովել բերդն էին տարել:

Վրացի գերիների մէջն էր Սպիրիդոն Էսաձէ  
անունով մի պատանի: Ներսէսը սրան որդեգրելով  
ուղարկեց իր հիմնած Ներսիսեան դպրոցը, որի  
դասընթացը աւարտելուց յետոյ՝ Էսաձէն մտաւ  
պետական ծառայութեան մէջ և մինչև ժանդարմի  
գեներալի պաշտօն ստացաւ:

Էսաձէն եօթանասնական թուականներում  
Թիֆլիզում մեռաւ. նա երախտագէտ էր դէպի  
Ներսիսի յիշատակը և բարեկամ ու համակրող  
հայերին:

ՃԼԶ

ՆԼԱՃԱԾ Սարգարաբաղ բերդի պահպանու-

<sup>\*)</sup> Акты, VII. ер. 561.



թիւնը մի վաշտ ուսն զօրքի և հայկական զնդին յանձնելով՝ Պասկեվիչը վերցրեց մնացած զօրքը և Ներսիսի հետ գնաց Երևանի վրայ: Սեպտեմբերի 25-ին չորս կողմից սկսուեցաւ և Երևանի բերդի ուժեղացումը:\*)

Բայց ուժեղացումից առաջ էլ, նրա տևողութեան միջոցին էլ, Ներսէսը, ըստ յանձնարարութեան Պասկեվիչի, անդադար բանակցում էր թէ քաղաքի և թէ բերդի մէջ գտնուած հայերի հետ, որոց թիւը 12 հազարի էր հասնում և որոց մի մասը պարսիկները շրջականերից էին ժողովել բերել, որպէսզի ուսաները նրանցմով չօգտուին: Ժողովածների թուումն էր և էջմիածնի միաբանութեան մի մասը:

Սակայն պարսիկների հաշիւը սխալ երևեցաւ: Մի տեղ ժողոված հայերը չգաղարեցան դարձեալ աջակցել ռսներին, որքան որ հնարաւորութիւն ունէին: Իսկ դրանց դրդողը, ինչպէս ասացինք, Ներսէս Աշտարակեցին էր:

Հայ կտրիճները անդադար տանում և բերում էին Ներսիսի կոչերը, նրա նամակներն ու պատասխանները:

Կողմնակի կերպով յիշենք, որ հայ կտրիճներից միմեայն մէկը, — Աստուածատրեան ազգանունով, — Ներսիսի խռովարար կոչերը բաժանելիս՝ բռնուեցաւ յանկարծ:

Պարսիկները նրան թնդանօթի մէջ դրին և կրակ տուին:

Այս թշուառ մարդու կնոջը Պասկեվիչը տրւեց միանուագ 30 ոսկի. 30 ուրբի էլ տարեկան կինսաթոշակ նշանակեց:

Այսպիսով ահա մի կողմից Ներսիսի կոչերն ու խոստումները և միւս՝ կողմից՝ ուսաց թնդանօթները, վերջի վերջոյ, ստիպեցին ժողովրդին և սրա բուն պահանջմամբ նաև Հասան խանին, որ Սարգարի — իր եղբօր փոխարէն ինքն էր բերդը պաշտպանում, անձնատուր լինել:

Քաղաքի ղոնները բացուեցան և ուսաց զօրքը ներս մտնելով՝ իրաւունք ստացաւ միքանի ժամ շարունակ կողոպտել ժողովրդին, ի հարկէ, անխտիր, հայերին էլ, թուրքերին էլ:

Հասան խանը, ուրիշ 7 խաների և 4000 սարբազի հետ՝ գերի ընկան: Ռսների ձեռքն անցաւ նաև 4 դրօշակ 49 մեծ և 50 փոքր թնդանօթ:

Երևանի առման հետեւալ օրը՝ Երևանի պաշտպի առաջ Պասկեվիչի և ուսական բոլոր բանակի ներկայութեամբ՝ Ներսէսը մեծ հանդիսով գոհաբանական մաղթանք կատարեց հոկտեմբեր ամսոյ 2-ին:

Քաղաքի բնակիչներից՝ հայերը իրանց գերդաստաններով շարուել էին բերդի, արդէն խախտուած, պատերի վրայ և հանդիսին մտիկ անում:

Մաղթանքը վերջանալիս՝ դուսաց բոլոր թնդանօթները միաժամանակ որոտացին: Որոտմունքից օդը դղրդաց: Պատերից մի երկուսը

\*) АКТЫ, VII, кр. 564, № 523.



փուլ եկան, իրանց տակ սպանելով տասնեկաւոր հայ ընտանիքներ:\*)

### ՃԼԷ.

Այն օրը, երբ Ներսէսը Երևանի առման պատճառաւ՝ գոհաբանական մաղթանք էր կատարում,—ձիշտ նոյն օրը՝ գեներալ իշխան Էրիստովը, ռուսական մի փոքրիկ բանակով Աբբաս Միրզին հալածելիս՝ պարսից Մարանդ քաղաքն էր հասնում. և առանց արիւնհեղութեան տիրում:

Մարանդից Աբբաս Միրզան փախուստ տալով դէպի Խոյ՝ Թաւրիզ հրաման ուղարկեց, որ այնտեղ եղած ռազմամթերքը դուրս հանեն՝ ռուսաց ձեռքը չձգելու համար:

Սակայն գահաժառանգի այդ հրամանից առաջ՝ մի գունդ զօրք Մուրավեովի հրամանատարութեամբ՝ Թաւրիզի առաջ կանգ առաւ, ճանապարհին պատահած հայ գիւղերի բնակիչները դիմաւորում էին ռսներին և նրանց համար եղ և ոչխար մորթում: Հոկտեմբերի 12-ին, նոյն օրն ևեթ իշխան Էրիստովը ևս եկաւ միացաւ Մուրավեովին:

Ռուսաց բանակը տեսնելով՝ Թաւրիզի բնակիչներին ահ և սարսափ տիրեց: Գժտութիւն ծագեցաւ բնակիչների և սարբազների մէջ, որոնք խումբ-խումբ սկսեցին փախչել, իսկ քաղաքացիք

\*) Ամենայն Հայոց կաթող. եր. 394.

ոչ յարմարութիւն և ոչ էլ ցանկութիւն ունէին պաշտպանելու:

Եւ ահա հոկտեմբերի 13-ին՝ Թաւրիզի դռները բացւեցին և ռուսաց զօրքին դիմաւորելու համար՝ դուրս եկան նշանաւոր քաղաքացիներ, պարսից Մուշդէյիտը և հայոց հոգեւորականութիւնը խաչ ու խաչվառով:\*)

Մուրավեովը, որ պարսկերէն և հայերէն ազատ խօսում էր և որ վերջերում Կովկասի կառավարչապետ եղաւ, միմիջարեւելի և յուսադրելով իրան դիմաւորողներին՝ պատուիրեց խաղաղ մնալ:

Միքանիստաղգոլութիւններից յետոյ՝ ռուսաց զօրքը հանդիսաւոր կերպով մտաւ Ատրպատականի մայրաքաղաքը և իր ձեռքը ձգեց բացի բազմաքանակ ռազմական մթերքից և 2 դրօշակից նաև 40 հատ թնդանօթ:

### ՃԼԸ.

Պատկերվիչը միանգամայն տեղեկութիւն չունէր ոչ Էրիստովի Մարանդ հասնելուն, ոչ էլ յետոյ նրա և Մուրավեովի՝ միացեալ բանակներով Թաւրիզ մտնելուն և տիրելուն:

Եւ հենց որ լսեց՝ իսկոյն հետը վերցնելով իր բանակի հեծելագունը՝ շտապեց դէպի Մարանդ և այդտեղից Թաւրիզ, ուր շատ ջբեղ հանդիսով մուտք գործեց հոկտեմբերի 19-ին:

\*) АРМ. VII. 565 № 526.



Պատկերվիչը, որքան որ մի կողմից ուրախ էր թուում թաւրիզի առմամբ, այն էլ այնքան դիւրութեամբ, նոյնքան ցաւումէր՝ որ Ատրպա-տականի մայրաքաղաքի առումը՝ իր ձեռով չը-կատարուեցաւ:

Այդ իսկ պատճառով, և մասամբ իր փա-ռասիրութեանը յազուրդ տալու համար, Պատկե-վիչը նախ և առաջ՝ էրիստովին էր, Մուրավեո-վին էլ պարզեւորել տուեց, բայց յետոյ տապա-ւեց՝ էրիստովին բանակից հեռացնելով, իսկ Մուրավեովին Ռուսաստան փոխադրել տալով:

Թերեւս մեր ընթերցողներին յայտնի է, որ վրաց արքայազն իշխան Աղէքսանդրը՝ ռսների գէմ ապսպամբելով պարսից կողմն էր անցել և նրանց զօրքերի հետ կռւում էր ռսների հետ բոլոր ժամանակ:

Ռսները թաւրիզ մտնելիս՝ արքայազն Աղէքսանդրը գնացած էր տաճկաց Վան քաղաքը, ուր և հրոսակներ էր կազմում՝ քիչ ժամանակից յետոյ կայանալի ոռւս տաճկական պատերազմում ոռւսաց գէմ գործելու նպատակով:

Արքայազն Աղէքսանդրի կինը, Մարիամ անունով, 23 տարեկան մի գեղեցկուհի, Երեւանի յայտնի Մելիք Սահակ Ալամալեանի աղջիկն էր և ոռւսների թաւրիզ մտած ժամանակ այնտեղ էր՝ իբրեւ իր բնակութեան մշտատեղին:

Կասկածելով մի գուցէ իշխանուհի Մարիամը թաւրիզ մտալով տեղական հայերի վրայ, իր ամուսնոյ հրահանգով, որոշ ազգեցութիւն գործէ

ընդդէմ ոռւսաց, — Պատկերվիչը Մարիամին, իր Հերակլ որդու հետ, Երեւան իր հօր տունը ուղարկեց:\*)

Այս այն Մարիամն էր, որ 80 թուական-ներում Թիֆլիզում վախճանուելով Վանքի մայր եկեղեցում թաղուեցաւ:

ՃԼԹ.

Թաւրիզի վեր առնելը մեծ տալաւորութիւն գործեց թէ Հահի և թէ ամբողջ Պարսկաստանի վրայ:

Ուստի պարսիկները ձեռնամուխ եղան հաշտութիւն կնքելու:

Սկսուեցան երկար բարակ բանակցութիւններ, հրամանատարների և նրանց հաւատարմատուրների տեսակցութիւններ, բանակցութիւններն ընդհա-տուեցան յանկարծ, պատերազմը վերսկսուեցաւ, բայց, վերջի վերջոյ, պարսիկները չկարողանալով այլևս ոռւսաց յառաջխաղացումն արգելել՝ լսեցին Մնդլիայի բարեկամական խորհրդին և 1828 թուականին փետրուարի 10-ին կնքեցին պատմու-թեան մէջ յայտնի Թիւրքմէն-չայի հաշտութեան դաշնագիրը:\*\*)

Թիւրքմէն-չայի դաշնագրութեամբ Երեւանի և Նախիջևանի խանութիւնները դարձաւ ոռւսաց

\*) Ամենայն Հայոց Կաթող. եր. 317. և և АКТЫ, VII, եր. 568 № 527.

\*\*) Այդ դաշնագրութիւնը հայ թարգմանութեամբ հանդերձ տես Аксаковъ собр. акты Գրքի եր. 270—278



սեպհականութիւն: Բացի դնանից Պարսկաստանը վճարեց 10 դուրուր կամ 20 միլիօն ըուբլի պատերազմական ծախք:\*)

Նոյն դաշնագրով (յօդ. 12) երկու տէրութեանց հպատակներին, որոնք Արաքսի այս և այն կողմը անշարժ կալուածներ ունէին, իրաւունք էր տրվում, երեք տարուայ ընթացքում, ազատօրէն ծախել կամ փոխանակել ըստ իրանց կամաց: Իսկ 15-րդ յօդւածով Ատրպատական աշխարհի բոլոր բնակիչներին մի տարի ժամանակ էր տրվում ազատաբար անցնելու պարսից աշխարհներից ուսուսաց գաւառները: Նրանց թոյլ էր տրվում նմանապէս դուրս տանել կամ ծախել իրանց շարժական գոյքը, իսկ անշարժ կալուածները ծախելու համար տրրվում էր հինգ տարի ժամանակ

Թիւրքմէն-չայի դաշնագրի այս յօդուածները խմբագրուած էր յատուկ հայերի համար՝ թէև դաշնագրի մէջ հայ անուն չկայ յիշուած, այլ Ատրպատականի բնակիչ:

Չէնց դաշնագրի այդ յօդուածների տրամադրութեամբ էլ Պասկեվիչը՝ իրան աջակից և զօրավիգ ունենալով Ներսէս արքեպիսկոպոսին, անմիջապէս ձեռնամուխ եղաւ պարսկահայերի գաղթեցումանը:

ՃԽ.

Մենք տեսանք, որ նախ քան պատերազմի սկսուելը պարսիկ կառավարութիւնը Արարատ-

\*) Акты VII кр. 540 № 502

եան դաշտի հայկական գիւղերի բնակիչներից շատ շատերին գաղթեցրեց Պարսկաստան, որպէսզի նրանք պատերազմի ասպարէզից հեռու մնալով՝ չկարողանան այս կամ այն կերպով Ռսններին օգնելու:

Ժողովրդի դաղթմամբը երկիրը, բնականաբար, ամայացաւ:

Աւելացրէք դրան՝ վրայ հասած պատերազմը իր տեսակ-տեսակ աղէտներով և դուք ճիշտ գաղափար կը կազմէք այն ամէն աւերմունքի և ամայութիւնների մասին, որ պատերազմը վերջանալուց յետոյ տիրում էր Արարատեան դաշտի երեսին, առաւելապէս նորանաւճ Երևանի և Նախիջևանի խանութիւններում, որոնք այնուհետև ի պաշտօնէ կոչուեցան Հայկական նահանգ (Армянская область):

Արդ՝ այդ աւերած, ամայացած ու խոսպանացած երկրին վերստին կենդանութիւն տալու համար անհրաժեշտ էր Պարսկաստանից յետ բերել՝ ինչպէս մի տարի առաջ այնտեղ քշուած հայերին, նոյնպէս և այնտեղի բնիկ հայերին:

Այս էր ահա Պասկեվիչի միակ նպատակը երբ Թիւրքմանչայի դաշնագրութեան մէջ՝ գաղթականութեան նկատմամբ յայտնի պարբերու, թիւններ էր մտցնում:

Եւ որպէսզի հայերի գաղթականութիւնը անարգել և շուտ գլուխ գայ, Պասկեվիչը Ներսէս Արքեպիսկոպոսի օգնութիւններովը չբաւականանալով՝ Ռուսաստանից իր մօտ բերել տուեց, իր



առանձին յանձնարարութեանց ատիճանաւորի պաշտօնով, մեծահամբաւ Լազարեան տոհմի ներկայացուցիչներէց մինին, որ էր Լազարոս Յովակիմեան, — Լազար Նակիմովիչ — Լազարեանց, որ թէև 28 տարեկան հազիւ կը լինէր, բայց արդէն գնդապետի ատիճան ունէր:

Լազարեանի հետ՝ Պասկեվիչը Մոսկուայից բերել տուեց նաև Սերորէ վարդապետին, որ Կաթողիկոսիւնից վերադարձած՝ Նիքիմի կաթողիկոսութեան հենց առաջի տարին էջմիածին գալով՝ միաբան գրուեցաւ և քիչ ժամանակից յետոյ՝ գնաց Մոսկուա Լազարեան ձեմարանում ուսուցչութեամբ պարապելու:

ՃԽԱ.

Լազարեան գնդապետը Պասկեվիչին գտաւ Նախիջևանում, իսկ երբ նա Կրասովսկուն օդնելու նպատակաւ գնաց էջմիածին, — Լազարեանը մնաց իշխան Էրիստովի բանակում: Եւ նրա ու Մուրավեօվի հետ Թաւրիզ մտաւ, որտեղի հայերը տեսնելով իրանց նախկին հայրենակից Լազարեաններին տոհմի երիտասարդ ներկայացուցիչն, ոգևորուեցան և պատրաստ էին նրա ամեն մի առաջարկութիւնը կատարելու:

Երբ Պասկեվիչը Թաւրիզ եկաւ, իսկոյն Լազարեանին քաղաքապետ նշանակելով՝ գաղթականութեան գործը նրան յանձնեց առանձին, յատուկ հրահանգով:

Այդ հրահանգի մէջ ասուած է որ Լազարեանը իրա համար ընտրում է օգնական պաշտօնեաներ (կամ հայեր կամ հայերէն իմացողներ), որոնց ուղարկում է քրիստոնէաբնակ գաւառները գաղթականութիւնը ղեկավարելու:

Հարկ չէ ոչ որի ստիպել կամ բռնութեամբ գաղթեցնել, այլ համոզել, որ քրիստոնէայ կայսեր հպատակութիւնն ընդունելով՝ նրանք խաղաղ և երջանիկ կեանք կը վայելեն:

Յուսադրել նրանց, որ գաղթելով ոռոսաց երկիրը առևտուրով պարապողները կարող են բնակուել քաղաքներում և այնտեղի առևտրականների հետ միևնոյն իրաւունքները վայելել, — իսկ երկրագործները բաւականաչափ հող կը ստանան և վեց տարի ազատ կը լինեն հարկերից և երեք տարի բեգարից:

Այն գաւառներից, որտեղից ոռոսաց զօրքերը շուտով պիտի դուրս գան, նամանաւանդ Սաւրադայից, հարկ է, որ քնակիչներն էլ շուտ գաղթեն, որովհետև զօրքերի գնալուց յետոյ՝ պարսիկները կարող են նրանց նեղացնել և արգելել:

Ուրմիայի և Խոյի գաւառները առժամանակ պիտի մնան ոռոսաց ձեռքում իբրև գրաւական, մինչև որ պարսիկները վճարեն պայմանաւորուած գումարը, ուրեմն այս տեղերից կարող են գաղթել մինչև մայիսի վերջը:

Ամեն մի գաղթող գիւղ կարող է իր կողմից մի հաւատարմատար թողնել, որ նա պայմանաւորուած ժամանակում կարողանայ ծախել գաղթողների անշարժ կալուածները:



Գաղթողները պէտք է շարժուեն տեղներից ամբողջ գիւղերով, խումբ-խումբ, ամեն մի խումբը 150—300 գերդաստան:

Գաղթականները պիտի բնակուին նախիջևանի և Երևանի գաւառներում, իսկ մի քանի գիւղերի բնակիչներին թոյլ է տրվում գաղթել Ղարաբաղ\*):

Այս հրահանգների հետ Պասկևիչը լազարեանին 25,000 ռուբլի յանձնեց չքաւոր ընտանիքներին դրամական օգնութիւն տալու համար, բայց ոչ աւելի քան 10 ռուբլի, և այն էլ տասն տարուայ մէջ վերադարձնելու պայմանով:

ՃԽԲ.

Նորանաճ երկրի կառավարութեան համար Պասկևիչը մի «ժամանակաւոր կառավարութիւն» էր սահմանել Երևանում՝ նախագահութեամբ ժենեւալ Կրասովսկու. անդամներից մէկն էլ Ներսէս Արքեպիսկոպոսն էր:

Հէնց այս «ժամանակաւոր կառավարութեան» էլ Պասկևիչը հրամայել էր մի յանձնաժողով կազմել, որ պէտք է ցոյց տար գաղթականներին իրանց բնակուելու տեղերը և ընդհանրապէս օգնէր նրանց տեղաւորւելու:

Այդ Յանձնաժողովին ևս հրահանգ էր տրւած, բացի դրանից նաև իրաւունք, որ տուն շինելու համար փողի կարտօութիւն ունեցողնե-

\*) Այդ հրահանգը տես, «Собр. Актовъ» I. Էր. 151—161.

րին՝ 10-ից մինչև 20 ռուբլի փող տայ այն պայմանով, որ 10 տարուայ մէջ վերադարձնեն արքունի գանձարանին առանց տոկոսի:

Այս կարգադրութիւններն ու հրահանգները տալուց յետոյ Պասկևիչը կամենալով թոյլ չտալ Ներսիսին որևէ ինքնագլուխ կարգադրութիւն առնել, կամ միջնորդութիւն յարուցանել՝ մարտի 28-ին նրան մի այնպիսի նամակ գրեց\*) «Գիտենալով որ Ատրպատականից գաղթելու ցանկութիւն ունեցողներից շատերը ձեր սրբազնութեանն են դիմում և խնդրում, որ նրանց տեղ տաք Երևանի աշխարհում, ես հարկաւոր եմ համարում ուղարկել ձեզ՝ զնդապետ լազարովին և Երևանի ժամանակաւոր վարչութեանը տւած հրահանգներէս պատճէնները. և կատարելապէս կը յուսամ, որ ձեր սրբազնութիւնը, ձեր ունեցած տեղեկութիւններով և խորհուրդներով՝ կ'օգնէք Երևանի վարչութեանը յաջողութեամբ կատարելու այս գործը»:

ՃԽԳ.

Այս ամենից յետոյ լազարեանի կազգադրութեամբ ռուսաց բանակի շատ սպաներ, մեծաւ մասամբ հայեր, ցրւեցան հայաբնակ գիւղերը և սկսեցին ժողովրդին շարժել:

Ինքը՝ լազարեանը իւր անունից մի կոչ հրատարակեց և Պարսկահայերի մէջ ցրւեց:— Կոչը զրւած է ռսերէն և հայերէն,՝ գրաբառ, ո-

\*) «Собр. Актовъ» I. Էր. 462.



ըր մենք աշխարհաբառի վերածելով առաջ ենք բերում այստեղ, տեղ տեղ, բառերը մեր կողմից ընդգծելով:

«Քրիստոնեաներ,—այսպէս է սկսում Լազարեանի կոչը,—ինձ հասած հաւաստի լուրերից տեղեկանում եմ, որ անբարեմիտ մարդիկ ոչ միայն անմիտ և սուտ լուրեր են տարածում, այլ և վախեցնում են դէպի օրհնաբանեալ Ռուսաստանը զաղթել ցանկացողներին: Եւ դրանով վերջիններիս սրտի ցանկութեան իրագործմանը արգելք դառնում»:

«Այս ամէն սնտոյի լուրերն ու երկիւղը փարատելու համար ես, իբրև հայ ազգի հաւատարմաւոր, համաձայն մեր սպարապետի (Պապկեվիչի) ինձ վրայ դրած պարտաւորութեան, սրբանով ահա յայտնում եմ ձեզ, որ Ռուսաց մեծահոգի կայսրը ձեզանից զաղթել ցանկացողներին տալիս է իւր պետութեան մէջ՝ խաղաղ երջանիկ և ապահով ապաստանարան Նախիջևանում և Ղարաբաղում, ուր որ ինքներդ ցանկանում էք: Այդ տեղերում դուք կստանաք մեծ տարածութեամբ արգասաբեր, հացալից հողեր՝ որոյ մի մասն արդէն սերմանաւ է և որոնցից հաւաքած պողի մի տասներորդական մասը միայն դուք զանձարանին տալու պարտաւոր կը լինէք: Վեց տարի շարունակ դուք ազատ կը մնաք ամէն տեսակ հարկատուութիւնից, իսկ ձեզանից աղքատները՝ դրամական օգնութիւն էլ կստանան»:

(Այս կողմերում անշարժ կայքեր ունեցողները՝ իրանց ընտանիքը ուղարկելուց յետոյ՝ կարող են իրանց հաւատարմատարները թողնել այստեղ որպէս զի նրանք այդ կայքերն հինգ տարւայ ընթացքում վաճառեն այստեղ, ինչպէս որ Թիւրքմէնչայի դաշնագրութեամբ որոշուած է\*):

Ձեր նշանակած հաւատարմատարների անունները և ձեր կայքերի ցուցակը՝ ես կըններկայացնեմ Նորին Բարձրութիւն Աբբաս Միրզի ֆօտ եղող՝ մեր դեսպանին կամ գործակալին, որպէս զի նրանք, ձեր հաւատարմատարները, որպէս մեր կայսեր հպատակներ, Նորին Մեծութեան բարձր հովանաւորութեան տակ գտնւին:

Ռուսաստանում դուք կունենաք կրօնի ազատութիւն և իրաւունքների հաւասարութիւն կայսեր միւս հպատակների հետ: Եւ կը մոռանաք այն ամեն վշտերն ու նեղութիւնները, որոց մինչև հիմայ համբերել էք: Այնտեղ դուք կըգտնէք մի նոր հայրենիք քրիստոնեաներոյ բնակեցրած և ձեր սուրբ կրօնը այլ ևս ոչ մի ճնշման չի ենթարկւի: Այնտեղ դուք կապրէք

\* Պարսկահայերը և նրանց սրտացաւ ղեկավարողները Լազարեանի այս խօսքերը հալած իւրի տեղ ընդունեցին և կատարեցին: Մինչդեռ տեսէք թէ այդ խօսքերին ինչպէս վերաբերեցին Նեստորականները: Ահա Լազարեանի իրան սեպհական խօսքերը Պապկեվիչին տաւ նրա տեղեկագրից (կր. 168): «Ատրպատականում բնակող բազմաթիւ Նեստորականներից,—առանձին ջանք ու աշխատանք գործ դնելուց յետոյ,—հազիւ հազ ես կարողացայ հարիւր տուն գաղթեցնել, թէպէտ և ամէն ջանք գործ դրի, մինչև իսկ դրամական մեծամեծ նպաստ էլ խոստացայ, ամէնքին գաղթեցնելու: Սակայն ջանքերս ապարդիւն անցան: Գաղթած 100



օրէնքի հովանաւորութեան տակ և կզգաք նրա բարերար ազդեցութիւնը: Վերջապէս դուք այնտեղ ձեր բարեկեցութիւնը կը կարգաւորէք, այժմեան ձեր կրած չնչին զոհողութիւնների փոխարէն՝ հարիւրապատիկ վարձատրութիւնով:

Ծշմարիտ է, դուք թողնում էք հայրենիքը, որ ամէնքի համար առհասարակ սիրելի է, սակայն այս միակ միտքը, որ դուք քրիստոնեայ պետութեան մէջ էք ապրելու, թող ձեզ բերկրանքով ու ցնծութեամբ լեցնէ:

Պարսկաստանի զանազան գաւառներում ցըրւած քրիստոնեաները՝ մի տեղ կը հաւաքւեն և ձեզանից ով կարող է գիտենալ թէ՛ Ռուսիոյ Մեծ Կայսրը ինչպիսիք է վարձատրելու ձեր անձնւիրութիւնը:

Շտապեցէք, ժամանակը թանկ է: Ռուսաց զօրքերը շուտով Պարսկաստանի սահմաններից կը հեռանան, այն ժամանակ կը դժւարանայ ձեր գաղթումը և այնուհետև մենք չենք կարող երաշխաւորել ձեր ապահովութիւնը: Կարճ ժամանակով և քիչ բան զոհելով, դուք ձեռք կըբերէք ամէն բան և ընդ միշտ: 30-ն մարտի 1828 ամիս Ուրմիա\*):

տուն նետորականների մէջն էին երկու յայտնի և շատ ազդեցիկ մեկերնքը,—Սարիստա և Ալլաւերդի անունով, որոնց ետ նշանաւոր դումար տուի: Գալով միւս նետորականներին,—նրանք զրականաբար յայտնեցին թէ իրանք երբեք չենք շարժուի մինչև որ Ռուսաց կառավարութիւնը չվճարէ Ստրպատականում եղած իրանց անշարժ կայքերի արժէքը»:

\*) Собрание актовъ относящихся къ исторіи арм, народ. Уманъ II. кр. 163—166.

ՃԽԴ.

Իր հերթում ներսէս արքեպիսկոպոսն էլ երկու հոգևորական ուղարկեց Պարսկաստան, որոնք պէտք է նպաստէին զաղթականութեանը\*):

Այդ հոգևորականներն էին՝ Ստեփան Եպիսկոպոս Ենովքեան և Ղարաբաղցի Նիկողայոս վարդապետը, որոնք ամենուրեք շրջելով՝ յորդորում և համոզում էին ժողովրդին ազգասիրութեան անունով անշուշտ գաղթել, թոթափել պարսկական լուծը և անցնել ազատ տէրութեան՝ Ռուսաստանի ազատ երկիրը:

Այդ միջոցին Սալմաստի ս. Բարդուղիմէոս վանքի վանահայրն էր ոմն Իսրայէլ Եպիսկոպոս: Այս հոգևորականը զաղթականութիւնը ազգակործման բան համարելով՝ ախոյեան կանգնեց Ներսիսի ուղարկած հոգևորականների հանդէպ և արձակ համարձակ յաղորդում էր հայերին տեղներէցը չշարժել:

Իսրայէլ Եպիսկոպոսի այս վարմունքը դիւր չեկաւ ներսէս Աշտարակեցուն, որ փութաց մարտի 27-ին 1828 թ. Պառկեմիչին առաջ ամբաստանել իր կարգակցին հետեւալ դրութեամբ:

«Այն անձինք,—գրում էր ներսէսը,—որոց ես ուղարկել էի համոզելու և ճանապարհ ձգելու Ստրպատականից դէպի Ռուսաց սահմանները գաղթող հայերին՝ տեղեկացնում են ինձ թէ Իսրայէլ Եպիսկոպոսը, որին էջմիածնի Հոգևորա-

\*) Акты, VII, кр. 609 № 570.



կանութիւնը նշանակել է Սարմատի ս. Բարդուղիմէոսի վանքում, մոռանալով իր ֆրիստնէական պարսականութիւնը, գաղտնի նեղութեամբ եւ քաջարձակ սպառնալիքներով արգելում է հայոց այս կողմը գաղթելու եւս եւ ուրիշ անկարգութիւններ է անում\*)։

«Վասն որոյ,— շարունակում է Ներսէսը,— համաձայն հայոց պատրիարքի ինձ տաժ իշխանութեանը հայոց քոյր հոգեւոր գործերը կառավարելու համար, ես խնդրեցի այնտեղի զօրավար ժենեռալ մայեօր իշխան Չավչավաձէին, որ գրէ խոյի բերդապետին՝ յիշեալ Իսրայէլ եպիսկոպոսին զինուորների խիստ հսկողութեամբ ուղարկել էջմիրածնի վանքը հոգևոր դատի ենթարկելու և այս դէպքում ամենևին չփախչել նրա աստիճանն անպատեհույց, որովհետև մինչև որ նա չարդարացնի այստեղի հոգևորականութեան առաջ իր գնացքը, մինչև այն ժամանակ արժանի չէ իր աստիճանին վայել պատուի։ Մյթմ ես տեղեկանում եմ, թէ խոյի բերդապետը պատասխանել է, որ առանց ձերդ պայծառափայլութեան հրամանի չի կարող կատարել իմ պահանջմունքը։ Վասն որոյ ամենախոնարհաբար խնդրում եմ հրամանագրել ում հարկն է, որ շուտափոյթ ուղարկեն Իսրայէլ եպիսկոպոսին»)»։

\*) Ներսէսը, սովորաբար, սիրում էր իրա հակառակորդներին տապալելու համար կառավարութեանը դիմել և չէր բաշխում նրանց նշանակ զրպարտելու։

\*) АКТЫ, VII, кр. 607, № 568.

ձեռն.

Ներսիսի այս գրութեանը Պատկեմիչը, այսպէս պատասխանեց՝ «Ես ցաւում եմ, որ դուք՝ տեղեկանալով Սարմատի Իսրայէլ եպիսկոպոսի անքարեմիս վարմունքի մասին, չէք բարեհաճած ուղղակի ինձ դիմելու։ Այն միջոցին ես Թաւրիզում չինելով՝ ամենայն յարմարութեամբ կարող էի կատարել ձեր ցանկութիւնը։ Բայց այժմ ես շատ դժարանում եմ ձեր պահանջմունքը Իսրայէլ եպիսկոպոսի մասին լցուցանել, վասնզի թէև խոյի գաւառը մի առժամանակ գրաւ է թողնւած մեզ մօտ, մինչև որ պարսիկները կը վճարեն իրանց պարտքը, այնուամենայնիւ առանց Աբբաս Միրզայի համաձայնութեանը չի կարելի ոչ ոքի դուրս քշել, որովհետև՝ դրանով պարսից տէրութիւնը իրաւացի կերպով կարող է բողոքել, որ մենք խախտում ենք դաշնադրութիւնը։ Այդ պատճառով ներկայ հանգամանքներում ես աւելի ոչինչ չկարողացայ անել բացի այն, որ հրամանագրեցի ժենեռալ Պանգրատեմին աշխատել համոզել Իսրայէլ եպիսկոպոսին, որ նա գայ ներկայանայ ձերդ սրբազնութեան՝ իր արարմունքի համար արդարանալու կամ դատաբանելու։ Հրամագրեցի նաև յայանել նրան, որ եթէ չշտապի գնալու, այն ժամանակ նա կը զրկուի իր աստիճանից եւս եւ ստիպողական կերպով կը պնդեմ Աբբաս Միրզային, որ հարկադրէ նրան գալ էջմիրածին։ Սակայն կարծելով, որ



ձեզ ստորագրեալ հոգեւորականաց շրջանում սորանից առաջ էլ երբեմնապէս պատահած պիտի լինին վարտաւորութեանց այսպիսի օրինազանցութիւնք, ես կը ցանկայի գիտենալ, թէ ինչ եղանակով էին դատի ենթարկուում այդպիսի անբարեմիտ անձինք և թէ Հայոց հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը ինչ միջոցներ էր գործ դնում ըմբոստացողներէ դէմ»\*) :

ՃԽԶ.

Ժենեբալ Պանգրատեվը՝ չկարողանալով համոզել Իսրայէլ եպիսկոպոսին յօժարակամ էջմիածին գնալու, աշխատեցաւ և ձեռք բերելով Պասկեվիչին ներկայացրեց Իսրայէլի մի նամակը յանուն Սարմատի պարսիկ կառավարիչ Մուստաֆա-բէգին, որ ռաներին ծածուկ համակրող էր և ուզում էր գաղթել աշտոնի։ Իսրայէլը իր նամակով համոզում էր Մուստաֆա-բէգին, որ ոչ ինքը գաղթէ և ոչ էլ հայերին թոյլ տայ որ գաղթեն։

Իսրայէլ եպիսկոպոսի այդ նամակը իր ձեռքին գէնք առած՝ Պասկեվիչը որոշեց իր նախկին ցանկութիւնը ի կատար ածել՝ այն է Իսրայէլին կարգալոյծ անել տալ։ Ուստի և 1829 թ. մայիսի 31-ին, № 1460 գրութեամբ դիմեց ուղղակի Նեփրեմ կաթողիկոսին, որին հաղորդելով Ներսիսի, Չավչավաձէի և իրան ու Պանգրատեվի միջև եղած վերոյիշեալ թղթերի բովանդակութիւնը և Իսրա-

\*) АКТЫ, VII, кр. 608, № 569.

յէլի՝ Մուստաֆա-բէգին գրած նամակի իմաստը, իր գրութիւնը Պասկեվիչը եզրափակում է այսպէս՝ «Իսրայէլի եպիսկոպոսի այսպիսի անբարեմիտ վարմունքը դէպի մեզ եւ վնասակար ազդեցութիւնն Հայոց վրայ, ստիպում է ինձ ամենախոնարհաբար խնդրել Ձերդ Վեհափառութիւնից քննութեան ենթարկել այս հոգևորականի արարքը և արդեօք չէ՞ք բարեհաճիլ պատշաճաւոր համարել կարգալոյծ անել նրան եպիսկոպոսական աստիճանից, որ նա ի յարմ է գործ դնում, կամ թէ մի ուրիշ պատժի ենթարկել»։\*)

Եթէ մեր ընթերցողները յիշում են՝ Պասկեվիչի նման մի ժամանակ էլ երմօլովն էր պահանջում Գանձասարի Սարգիս եպիսկոպոսին պատժել՝ գրեթէ համանման, կարծեցեալ յանցանքի համար։ Դառնանք գաղթականներին։

ՃԽԷ.

Թիւրքմանշայի հաշտութեան դաշնագիրը կապելուց երկու տարի յետոյ մի ռուս պաշտօնեայ Պասկեվիչին, ի միջի այլոց, գրում է՝ «Անցեալ 1827 թուի պատերազմի անմահ գործերից մէկն է անշուշտ պարսկահայերին գաղթեցնելը»։

Տեսնենք թէ այդ անմահ գործը ինչպէս գլուխ եկաւ։

Մենք գիտենք, սիրելի ընթերցող, որ գաղթականութիւնը դեկավարելու գործը՝ Պասկեվի-

\*) АКТЫ VII кр. 632 № 603



չը յանձնել էր գնդապետ Ղազարոս Լազարեանին:

Սա էլ իրան համար ուսաց բանակի միջից օգնականներ էր ընտրել հայ ազգի սպաներ 7 հայերենագէտ այլազգիներ:

Ներսէս Աշտարակեցին էլ իր կողմից երկու կուսակրօն հոգեւորականներ էր ուղարկել իրանց կողմից՝ գնդապետ Լազարեանի օգնականներին աջակցելու: Վերջերում այդ հոգեւորականների վրայ աւելացան և մի քանի այլ վարդապետներ, նոյնիսկ ազդեցիկ քահանաներ:

Արդ՝ ուսւ կառավարութեան այդ աշխարհական և հոգեւորական, հայ ազգի և այլազգի գործակալները, — ագենտները, — ցրուեցան Պարսկաստանի ամեն մի հայաբնակ վայրերը, նոյնիսկ պարսից մասի Բիւրդաստանի խորշերը, և սկսեցին հայերին դուրս քշել դէպի ուսաց նորանաւաճ գաւառները՝ է որ համոզելով և է որ ստիպելով:

Հաշտութեան դաշնագիրը, ճիշտ է, գաղթականութիւնը նախատեսել էր, բայց գաղթումը թողած էր ժողովրդի ազատ կամքին և ընտրութեանը:

Սակայն ի՞նչ խօսք կարող է լինել ազատութեան մասին, երբ խօսքի քսումակին կանգնած է ոյժը, բռնութիւնը:

Թէ արդարեւ պարսկահայերի գաղթը ըստ մեծի մասին արեւստական կերպով սկսւեցաւ և գլուխ եկաւ, այդ մասին գոյութիւն ունեցող

բազմաթիւ պատմական փաստերից\*) թարգմանաբար դնում ենք այստեղ պարսիկ զահաժաւանգի մի նամակը ուսաց գորավար ժենեոալ Պանգրատեվին\*\*):

«Իարեհաճութեամբ ծանուցանում եմ, — գրում էր Աբբաս Միրզան, — Ձեր գերազանցութեանը, որ Սալմաստում եղած ուսաց գորքերի մեծաւորների մասին յաճախ ինձ լուրեր են հասնում, որ նրանք ամեն միջոց գործադրում են Սալմաստի հայերին գաղթեցնել՝ նրանց նեղելով և երկիւղ տալով, որով և հասնում են իրանց նպատակին:

Ամենայն օր ես տեղեկութիւն եմ ստանում որ հայերին բռնութեամբ քշել են տալիս: Եւ այդ տեղեկութիւնները ճիշտ են. ես նրանց հաւատ եմ ընծայում, որովհետեւ գաղթել ցանկացող հայերը, որ արդէն ձգել թողել են իրանց անշարժ կայքերն ու կալուածները, հեշտութեամբ կը յայտնեն իմ աստիճանաւորներին իրանց իսկական ցանկութիւնը»:

«Որովհետեւ Խոյի նահանգը մինչ օրս ձեր ձեռքին է, ուրեմն ձեր կողմից միանգամայն աւելորդ է նահանգի ամեն մի հայաբնակ գիւղը աստիճանաւորներ ուղարկել, որտեղ նրանք ստի-

\*) Գնդապետ Լազարեանի տեղեկագրից, որ 1829 թւի դեկտ. 24-ին նա ներկայացրել է Պասկեվիչին (сообщ. актовъ, № 166—182) պարզ երևում է թէ, ինչպէս ինքը Լազարեանը, նոյնպէս և նրա նշանակած հայ և հայախօս սպաները, 1828 թւի փետրւարի 28-ից մինչև յունիսի 11-ը որքան և ի՞նչ միջոցներ են գործ դրել գաղթականութեանը գլուխ բերելու համար:

\*) АКТЫ, VII, № 615.



պում են գաղթել ոռոսաց երկիրը: Ես կարծում եմ, որ գաղթել ցանկացող հայերը՝ առանց ձեր աստիճանաւորների ստիպման էլ կարող են գաղթել:

Ձեր գերագանցութեանը ի հարկէ՝ յայտնի են հաշտութեան պայմանները և զօրքերի գլխաւոր հրամանատարի կամքը, որ, կարծեմ թէ, հակառակ է ձեր վարմունքին: Երևի նա դժգոհ է լինի իր ստորադրեալների այդ վարմունքից: Այս պատճառով ահա ես Սալմաստ եմ ուղարկում Միրզա Մանուգին՝ յանձնարարելով նրան պարզօրէն ծանուցանելու հայերին, որ նրանք ազատ են գաղթելու կամ չգաղթելու:

Իսկ ձեզ ծանուցանում եմ, որ ձեր ստորադրեալների արարմունքը հակառակ են թէ հաշտութեան դաշնագրին և թէ երկու տէրութիւնների նպատակին: Հետեւաբար հաճեցէք հրամայել ձեր ստորադրեալներին վերջ դնել իրանց արարմունքներին: Իմացած եղէք, որ ճնշման կամ ստիպման մասին ոչ ոք բերան չէր բաց անիլ, եթէ որ հայերը իրանց յօժար կամքով գաղթէին և ձեր աստիճանաւորներից գաղթման տոմսակներ ստանային:

Ես յոյս ունիմ, որ ձեր գերագանցութիւնը՝ իւր գործունէութեան ժամանակ պարտ ու պատշաճ արդարութիւնը ձեռքից բաց չի թողնիլ»:

ՃԻԼ.

Ահա նոյն հարցի առթիւ Աբբաս Միրզի և

մի այլ նամակը՝ գնդապետ Լազարեանին ուղղած, որ մենք ոռոսերէնից վերածում ենք հայերէնի:

«Ստացայ Ձեր ազնուութեան նամակը, որով արդարացնում էք Ձեր գործունէութիւնը հայերի գաղթման հարցի մասին, որ ժենեռայ Պասկեվիչի կարգադրութեամբ, ասում էք, Ձեզ է յանձնարարւած: Այդ յանձնարարութիւնը ինձ արդէն յայտնի էր: Գիտէի, որ կառավարութեան հրամանաւ՝ այդ գործը Ձեզ է յանձնւած: Սակայն երկու տէրութեանց մէջ եղած դաշնադրութեան պայմանները և երկու կայսրների բարեկամական յարաբերութիւնը պահանջում են, գաղթել ցանկացողներին արդելք չդառնալ: Այդ հիման վրայ՝ ես ոչ մի արգելք չհանեցի այն մի քանի թաւրիկեցի հայերի առաջ, որոնք ոռոսական զօրքի այդ քաղաքից հեռանալուց և իմ այնտեղ մտնելուց յետոյ, եկան և ինձ իրանց ցանկութիւնը յայտնեցին թէ ուզում են գաղթել: Եւ գաղթեցին: Իսկ գուք հակառակը վարեցաք: Որտեղ որ ոռոսական զօրք կար. տեղական հայերին ստիպեցիք գաղթել՝ իբրեւ թէ յօժարակամութեամբ: Բայց եթէ խղճով դատելու լինենք, անկարելի է ենթադրել, որ մի քանի հազար ընտանիք սրտանց և ինքնայօժար կամքով յանկարծ թողնեն իրանց հազարաւոր տարիների հայրենիքը, իրանց կայքերը, իրանց այգիներն ու աները՝ բոլորովին տկուր և անտէր մնալու համար»:



«Ձեր ասելով հայերը ցանկանում են գաղթել: Սակայն երկու տեսակ ցանկութիւն կայ. առաջինը՝ երբ ժողովուրդը իւր ցանկութիւնը ինքը կը արտայայտէ, իսկ երկրորդը՝ երբ այդ ցանկութիւնը երկկողմի և ստիպման հետեանքն է լինում:

Հաշտութեան դաշնագրում յիշած ցանկութիւնը՝ յիշածս ցանկութիւններից առաջինն է: Ուստի և և ինձ դիմող Թաւրիզեցի հայերին՝ ես ինքս անցաթուղթ տւի: Իսկ դուք, բարեծնունդ տէր, երկրորդ տեսակի ցանկութեան վրայ էք յենում: Դրա ապացոյցը այն է, որ գաղթման պարագլուխ հանդիսացան քահանաները: Իսկ քահանաներին այդ պատւէրը տրեցաւ էջմիածնում նստող առաջնակարգ եպիսկոպոսից (Ներսիսից), որ քահանաներին սպառնացել էր թէ բոլորին էլ կարգալոյծ կանէ և խիստ պատասխանատուութեան կենթարկէ, նոյնիսկ հանդերձեալ կեանքում:

Հէնց այժմ, երբ Ձեր ազնութիւնը Սալմաստումն էք գտնում ձեր զօրքերով, վերջիններս խստութեամբ փող են պահանջում այն հայ գիւղացիներից, որոնք գաղթել չեն ցանկանում, մինչդեռ գաղթել ցանկացողներից ոչ միայն ոչինչ փող չէք պահանջում, այլ ընդհակառակը դեռ դուք ինքներդ էլ նրանց փող էք տալիս:—Արդեօք խղճի ամենափոքր նշոյլ անգամ կ'այ այս դէպքում: Ել սրանից էլ աւել աշկարայ ստիպմունք կամ բռնութիւն կարող

է միթէ լինել: Այն հայ գիւղերը, որոց բնակիչները գաղթել չեն ուզում, դուք այնքան զինւորներ և զազախներ էք ուղարկում, որոնցից սաստիկ նեղելով ժողովուրդը թողնում հեռանում է հայրենիքից:

Ձեր Ազնութիւնը թող ինքը խղճի մտօք վկայ է թէ ռքան քաղաքներ և ռքան գիւղեր դուք ինքներդ շրջեցաք և անձամբ տեսաք թէ ուս զօրքը ինչ աստիճան ճնշում և ստիպում է հայերին: Այժմ, երբ արդէն պատերազմը վերջացած է և երկու տէրութիւնների մէջ հաշտութիւն և խաղաղութիւն է տիրում,—արդեօք ուրիշը ինչ նպատակ ունեն ձեր այդ եռանդուն շրջագայութիւնները գիւղից գիւղ, եթէ ոչ յորդորելու և խրախուսելու հայերի գաղթը՝ հակառակ դաշնագրութեան և բարեկամութեան:— Այս տեսակ վարմունքը՝ շատ տգեղ բան է և ժողովրդին ստիպմամբ զրկանքների ենթարկելն՝ նոյն իսկ Աստծոյ հակառակ գործ է:

Ձեմ կարծում թէ արդարասէր, ճշմարտասէր և վեհանձն Ձեր մեծ կայսեր բաւականութիւն պատճառէ բարեկամ տէրութեան հետ Ձեր այսպէս վարւիլն: Ձեմ կարծում նմանապէս, որ ժենեռալ Պասկեփիչն ևս Ձեզանից գոհ մնայ: Եթէ դուք արդարութիւնից չ'կամենաք շեղւել, չէք կարող ժխտել, որ այս գաղթականութիւնը երկկողմի և բռնութեան արդիւնք է:

Մինչև հիմայ Ձեր գործունէութեան մասին ես լուռ էի, սակայն ձեր նամակը ստանալով



հարկաւ որ համարեցի համառօտակի սրանով պատասխանել Ձեզ: Մի և նոյն ժամանակ Ռուսական Տէրութեան այստեղի ներկայացուցչին ևս յայտնեցի\*):

### ՃԽԹ.

Պէտք էր կարծել, որ այդքան եռանդով հայ ժողովուրդին Պարսկաստանից դուրս բերող ռուս կառավարութիւնը, յանձին Պասկեվիչի, որքան և իցէ նախապատրաստութիւն կտեսնի ինչպէս նրանց իրանց նոր հայրենիքը հասցնելու, նմանապէս և նրանց այնտեղ տեղաւորելու նկատմամբ:

Ոչ այս և ոչ այն: Պասկեվիչին հարկաւոր էր ժողովուրդ՝ իր նւաճած նոր երկիրները մշակելու, ծաղկեցնելու համար:

Մնացածը թող ինքը այդ ժողովուրդը հոգայ,—կարծես այսպէս էր մտածում Պասկեվիչը և ինքը քաշուում գնում թիֆլիզ՝ միքանի տասնեակ հազար ըուբլի տալով Լազարեանին ի նըպաստ գաղթականների:

Այդ իսկ պատճառաւ այն թշուառների զոհաբերութիւնը՝ անօրինակելի էր: Նրանք թողել էին իրանց տուն ու տեղը, պատուական այգիները, ցանած դաշտերը. հացով լի ամբարները և ձմրան ցրտին (փետրւար ամիսն էր), ամենամեծ մասամբ ոտքով, շտապում էին դէպի Արաքս:

Ծերունիները իրանց ուսերի վրայ երեխաներին էին կրում, իսկ կնանիք, երկու-երեք օրւայ պաշար: Եւ այն հարուստ գիւղականը, որ երէկ փարթամացած էր ամեն մի բարիքով այսօր յետին չքաւորի պէս՝ ոտքով տանում էր իր բազմաթիւ զերդաստանը՝ յուսալով թէ Արաքսի ձախ ափում եղեմական դրախտը պիտի մտնի: Հայերի հարստութիւնը Պարսկաստանում՝ նրանց անշարժ կալածներն էին, որ հիմա թողնում էին նրանք անտէր անտիրական: Ծախել չէին կարող, որովհետեւ պարսից կառավարութեան զաղտնի թելադրութեամբ՝ արգելւած էր հայերից որևէ կալւած գնելը:

Ամենաուռնուր անձինք անգամ դրամ չունէին ձի կամ աւանակ առնելու և մանր երեխաներին բարձելու: Լզար, անպիտան աւանակները 10—15 ըուբլիով չէին ճարվում և դրամ ունեցողները ևս մնացել էին տարակուսած:—Պասկեվիչից ստացած 25,000 ըուբլին Լազարեանը ըստիպւած էր դրամ չունեցողներին բաժանել 5—5 ըուբլիով, որպէս աղքատի՝ ողորմութիւն: Բայց երբ այդ դրամն էլ հատաւ, Լազարեանը ստիպւած էր թիֆլիզի հայ վաճառականների օգնութեանը դիմել, նրանցից 2000 ռուբլի փոխ առնելով:

Ահա թէ որպիսի տառապանքներով զաղթականները Արաքսն անցան, մտան ռուսաց երկիրը:

Իսկ նրանց դրութեան մասին Արաքսի այս

\*) Краткій обзоръ ист. арм. царства, մասն VII, էր. 207-209.



ափում՝ թող խօսի ինքը դադթականութեան դե-  
կավար Լազարեանը:

Ահա նրա № 237 գրութիւնը յանուն Պաս-  
կեպիչին\*):

ՃԾ.

«Շտապում եմ գեկուցանել Ձեր պայծառա-  
փայլութեանը, որ ժենեռալ Պանգրատեմը ինձ  
գրած թղթերումը հաստատում է այն լուրերը,  
որ ես լսած էի Արաքսն անցնող հայերի գրու-  
թեան մասին: Հաստատում է որ Նախիջևանի և  
Երևանի գաւառներում հացի մեծ պակասութիւն  
կայ և տեղական իշխանութիւնը ոչ մի օգնու-  
թիւն չի կարողանում հասցնել մինչև անգամ  
այն 700 տուն հայերին, որոնք Մարաղայից  
գաղթեցին: Այս գերդաստանները թողին ամեն  
ինչ և ամենից շուտ գաղթելով՝ չկարողացան  
վերցնել իրանց հետ մինչև անգամ իրանց սրնն-  
դեան համար հարկաւորեալ հացը:

Իմ գրութիւնը շատ ծանր է: Յայտնի է,  
որ գաղթականներին օգնելու գործը յանձնւած  
է Երևանի ժամանակաւոր կառավարութեանը, ո-  
րից ևս ոչ մի տեղեկութիւն չունիմ և չգիտեմ  
թէ ի՞նչ անեմ:

Եթէ որ գաղթականութիւնը դադարեցնեմ,  
սրանով ես ձեր կամքի հակառակ շարժած կը  
լինիմ: Իսկ եթէ փութացնեմ, գոռիս քերեմ

\*) АРТЕ, VII, кр. 611, № 573.

ստակում եմ, որովհետեւ այս թշուառ գերդաստան-  
ները որ ամեն բան թողնելով մեզ հետեցին,  
դաժան սովին զոհ կը դառնան:

Միակ ելքը, իմ կարծիքով, այն է, որ մենք  
գրական նպաստը շատացնենք, որպէսզի գաղ-  
թականները կարողանան հարկաւոր թւով կեն-  
դանիներ գնել՝ իրանց հացերը բեռնելու համար:  
Իսկ հաց՝ այստեղ շատ կայ, և միևնոյն ժամա-  
նակ, էժան էլ է:

Այս անհրաժեշտ է գոնէ ձմեռայ համար,  
այսինքն մինչև նոր հունձը:

Սակայն, դժբաղդաբար, ես այդ գրական  
նպաստն էլ չեմ կարող տալ, վասնզի Ձեր նշա-  
նակած նպաստագրամից ես միմիայն 8000 ոս-  
կի եմ ստացել, որից, ըստ ձեր նախընթաց հը-  
րամանի, 1500 ոսկի տւել եմ Թաւրիզի քնա-  
կիչներին: Մօտս մնացած գումարը բաւականու-  
թիւն չի անում՝ ոչ թէ գաղթականներին օգնե-  
լու, այլ նոյնիսկ սրանց տեղներիցը շարժելու,  
եթէ մինչև անգամ ընդունելու լինինք, որ սը-  
րանց համար այգտեղ, մեր նորահաճ երկրումը,  
ամեն ինչ պատրաստ կը լինի»:

ՃԾԱ.

Լազարեանից և միւսներից ստացած այս-  
պիսի բովանդակութեամբ գրութիւնները ստի-  
պեցին Պասկեպիչին № 937 գրութեամբ դիմե-  
լու... Ներսէս արքեպիսկոպոսին՝ մեղադրելով  
թէ նա ինչո՞ւ սկզբում առատօրէն խոստանում



էր գաղթականները ծախքերը հոգալու՝ արքունի գանձարանին առանձին ծանրութիւն չպատճառելով, իսկ հիմա չի օգնում: Եւ որովհետեւ, աւելացնում է Պասկեվիչը, — իւր հերթում գանձարանը եւ անկարող է օգնել, ուստի դարձեալ ներսիսին իրան եւ հայ հոգեւորականութեանն է մնում՝ հնար եւ միջոց գտնել գաղթականներին սովորեցնել շինելու ուղիները»<sup>\*)</sup>:

Ընթերցողի սեպհական խորհրդածութեանը թողնելով Պասկեվիչի այս տրամադրութիւնն ու բարեխղճութիւնը, մենք կարդանք Լազարեանի մի այլ նամակը նոյն Պասկեվիչին՝ գրւած 1828 թ. մայիսի 21-ին Նախշկանից:

«Արաքսն անցնող գաղթականների խղճալի գրութեան մասին՝ Խոյից եկողների<sup>\*\*)</sup> միջոցաւ ինձ հասած տեղեկութիւնները՝ իբր թէ նրանք առանց հացի են մնացել և բաց երկնքի տակ, ինձ ստիպեցին շտապով գնալ այնտեղ — Նախշկան:

Որքան էլ որ ինձ հասած լուրերը չափազանցեցրած էին, անուամենայնիւ եթէ Հայկական Նահանգական վարչութիւնը շուտափոյթ և կտրուկ միջոցների չդիմէ, գաղթականները անսկարագրելի թշուառութիւնների կ'ենթարկեն:

Հայկական Կոմիտեոյի բաժանմունքը, որ

<sup>\*)</sup> АКТЫ, VII, кр. 615 № 582.

<sup>\*\*)</sup> Դրանցից մէկն էր Անդրկական զեռպանատան քարտուղարը. որ հրապարակաւ կշտամբում էր գաղթականութեան զեկաւարներին՝ նրանց դատաւարութիւն և անխիղճ անտարբերութեան համար:

այստեղ բացւած է շտապս կապիտան Նէվերովսկի 2-րդի նախագահութեամբ՝ չնայած այս մարդասէր սպայի ցանկութեանն ու եռանդին, ոչ մի միջոց և հնարաւորութիւն չունի գաղթականներին Նախշկանի գաւառում տեղաւորելու և հետզհետէ եկող խմբերին միւս գաւառներն ուղարկելու:

Ընդ սմին՝ այստեղի կառավարութիւնը գաղթականներին տեղ չի յատկացնում բնակութեան համար՝ ասելով թէ գիւղերը պատկանում են կամ այստեղի էքսան խանին և կամ նրա ազգականներին և թէ ամբողջ գաւառում միմիայն երեք գիւղ կայ. որ արքունի են:

Մեր կառավարութեան կամքը, որ Ձեր պաժառաքաւորութիւնը ծանուցած էր ինձ, թէ գաղթական քրիստոնեաները վեց տարի ժաճանակաւ ազատւած են ամեն տեսակ հարկերից և բեզառներից, այստեղ չի գործադրվում, և ամեն մի մորթած կենդանու համար այստեղի կառավարութիւնը մի ռուբլի է ստանում, որպիսի հարկ ռուսական ոչ մի նահանգում գոյութիւն չունի<sup>\*)</sup>:

Համարձակւում եմ խնդրել Ձերդ պայծառափայլութիւնից՝ բարեհաճել միջոց ցոյց տալ Հայկական Նահանգների վարչութեանը և Կոմիտեոյին, որ գաղթականներին տեղաւորեցնելու առթիւ Ձեր արձակած հրամանները ճշտութեամբ կատարւին, որպէսզի Ռուսաստանի այս նոր և

<sup>\*)</sup> АКТЫ, VII, кр. 629.



աշխատասէր հպատակների գրութիւնը փոքր ինչ բարւոքւի\*)»:

### ՃԾԲ.

Ահա մի այլ նկարագիր գաղթականների ցաւալի գրութեան, որ տալիս է գաղթականաց յանձնաժողովի նոր նշանակած աւագ անդամ իշխան Մովսէս Երկայնաբազուկ-Արղութեանը՝ Պասկեվիչին ուղղած № 368 յայտարարութիւնում\*\*):

«Գաղթականների բնակած տեղերը շրջելուց յետոյ,—գրում է իշխանը,—ես կատարեալապէս համոզեցայ, որ չնայած գանձարանից նրանց տւած նպաստին՝ գաղթականները այնուամենայնիւ ամենամեծ կարօտութեան մէջ են:

Կարիք կայ գլխաւորապէս նախ՝ սերմացւի Հայկական նահանգում, ուր արդէն 6500-ից աւելի գերդաստուն են տեղաւորւել, առաջիկայ 1829 թւականում սովի առաջն առնելու համար ամենաանհրաժեշտ է առնւազն 12 հազար չետվերտ ցորեն և գարի: Մի չետվերտի գինը, միջին թւով, 6 ըուբլի հաշւելով՝ կանի 72,000 ռ.:

Երկրորդ՝ գաղթականների մէջ 2500 գերդաստուն կայ, որոնք ուտելու ոչինչ չունեն: Արդ՝ անհրաժեշտ է դրանց հաց տալ: Մէն մի գերդաստանին կերակրելու համար՝ պէտք է տալ 3 չետվերտ պրօսո, որի գինը 2 ըուբլի հաշւե-

\*) АКТЫ, VII, кр. 627, № 596.

\*\*) АКТЫ, VII, кр. 645, № 619.

լով կանէ 15,000 ըուբլի: Ընդամենը ուրեմն 87,000 ըուբլի:

Այս գումարը, որ Ձերդ պայծառափայլութիւնից ես խնդրում եմ, ամենաանհրաժեշտն է և ամենաչափաւորը: Առանց այս գումարին՝ անհնարին է ազատ մնալ այլևայլ անախորժ դէպքերից:

Եթէ գրութիւնը այսպէս շարունակւի՝ գաղթականների մի մասը անշուշտ՝ յրնթացս երկու տարւայ\*\*), յետ կը դառնայ իւր նախկին հայրենիքը:

Միւս մասը, որի հաւատն ու սէրը դէպի թագաւոր կայսրն աւելի հաստատուն է, անշուշտ զոհ կը գնայ իւր այս ագնիւ զգացմունքներին:

Իսկ երրորդ մասը, որ իւր նախկին հայրենիքի առաւելութիւններով գուցէ չի շնայալ և տոկունութեամբ կը տանի իւր այս նոր հայրենիքի դառնութիւններին,—այդ մասն էլ ստիպւած կը լինի երկար, շատ երկար սպասել իւր վիճակի բարւոքմանը:

Ի վերջոյ պարտք եմ համարում յայտարարել Ձերդ պայծառափայլութեան, որ գաղթականների օգտին խնդրածս գումարը՝ այստեղ պէտք է հասուցանւի նախօրօք, այն է առաջի-

\*) Թիւրքմանշայի դաշնագրի զօրութեամբ՝ 2 տարւայ ընթացքում ցանկացողները կարող էին մի երկրից՝ միւսը գաղթել: Բայց յետոյ Գրիբոեդովը բացատրեց և Պասկեվիչը ի պաշտօնէ հրատարակեց, որ մի անգամ ուսուց երկիրն եկողը՝ այլևս իրաւունք չունի յետ դառնալու: (АКТЫ, III, 645, № 619).



կայ սեպտեմբեր ամսւոյ ընթացքում, ի հակառակ դէպս՝ ես անկարող կը լինեմ արդարացնել ձեր ընտրութիւնը\*):

ՃԾԳ.

Լազարեանի, իշխան Արղութեանի, ևս և Գրիբօեդովի և ուրիշների կողմից հասած այս ամեն դառն նկարագրութիւնները կարգաւոր՝ Պասկեվիչը եթէ ոչ պատասխանատուութիւնից՝ գէթ անախորժութիւններից իւր անձը ապագայում ազատ կացուցանելու համար՝ հետևեալ № 141 գրութիւնը ուղղեց Պետերբուրգ կոմս Դիպիշին:

«Դիտենալով թէ որքան դժուարին գործ է բազմաթիւ ժողովուրդ մի տեղից միւս տեղ փոխադրել՝ նամանաւանդ առանց որեւէ նախապաշարաստութեան և միջոցների և տեղափոխել ժողովրդին մի այնպիսի երկիր, որ սեպհական միջոցներ չունի, ընդ նմին պատերազմի պատճառաւ աւերւած էլ է,—ես չէի կարող չնախատեսնել այն ամեն զրկանքները, որին կարող էին ենթարկուել Ատրպատականից մեր կողմերը գաղթող միջանի հազար գերդաստուններ:

Նրանի նաճելուց յետոյ՝ կարգադրւած և հաւաստիացւած էր, որ ներկայ գործում առանձին դժարութիւն չի լինիլ և որ քրիստոնեա-

\*) Ասացինք, որ իշխան Արղութեանը նշանակւած էր գաղթականաց յանձնաժողովի աւագ անդամ:

ների գաղթումը, բացի Ռուսաստանին անպայման օգտակար լինելուց, կառավարութեանը առանձին հոգս չի պատճառիլ և ծախսի տակ չի ձգիլ:

Ի վերայ այսր ամենայնի ես այս գործի (գաղթականութեան) մանրամասնութիւնների մէջ չմտայ, մինչև որ հայ հասարակութիւնները իրանք,—Ատրպատականը մեր գրաւելուց յետոյ,—լատուկ հաւատարմատարներ էին ուղարկել ինձ մօտ, որոնք Դէյ-Կարխանում ինձ ներկայանալով՝ խնդրեցին ինձ թոյլ տալ գաղթել մեր նոր նաճած երկիրը՝ առանց որեւէ պահանջի, առանց որեւէ պայմանի, այլ միմիայն իւրեւ շը-նորհ, ողորմութիւն\*):

Ժողովրդի թախանձանքը լսելով և միևնոյն ժամանակ, համոզւած լինելով, որ նորանաճ, դատարկ երկիրն այս ժողովրդի նման հիւ, աշխատասէր և ըստ հաւատոյ մեզ նւիրւած տարրով լեցնելն՝ կարող է Ռուսաստանին մեծ օգուտ բերել,—ես երեսփոխաններին (ժողովրդի հաւատարմատարներին) վաղաքշելով՝ իրաւունք

\*) Պասկեվիչը մոռացել էր, երևի, որ գաղթականութիւնը յաջողեցնելու համար՝ Լազարեանին ինքն էր բերել տակ: Ինքն էր իւր սպաներին հայաբնակ վայրերը ցրել, որ հայերին գաղթեցնեն, ինքն էր Խուրայէլ եպիսկոպոսին պատժել ցանկացողը, վերջապէս ինքն է, որ, մի ժամանակ զրում էր նախարարին՝ «եթէ մինչև 7 հազար հայ ընտանիք պարսկաստանից մեր սահմաններն անցան,—այդ ոչ թէ ներսիս կարծեցեալ ազդեցութեանը պէտք է վերագրել,—ալ գաղթականութեան համար իմ նշանակւած սպաների ժրութեանն ու եռանդին, և նա մանաւանդ այն զրամական օգնութեանը, որ ես վճարեցի տալ գաղթականներին (Акты, VII, 260.



տւի գաղթել, բայց բնաւ երբէք ես նրանց չյու-  
սաղըեցի թէ իրանց որեւէ տռանձին օժանդա-  
կութիւն կամ այլ օգուտ կը լինի, բացի որո-  
շեալ ժամանակ հարկերից նրանց ազատ թողնելը:

Չնայած այս ամենին, չնայած Պարսիկների  
կողմից կատարւած հակառակ գործողութիւննե-  
րին՝ քրիստոնէից գաղթումը Ատրպատականից  
գէպի մեր երկիրը,—ինչպէս ստացածս գեկու-  
ցագրերը ցոյց են տալիս,—արագ կերպով է ըն-  
թանում:

Եւ մինչ օրս Ղարաբաղում տեղաւորւել են  
279 գերդաստուն, իսկ Երեւանի նահանգում 948  
գերդաստուն: Դալով գաղթականների ընդհանուր  
թւին՝ ըստ վկայութեան Լազարեւի՝ 5000 գեր-  
դաստունից աւելի է»:

Ապա թւելով գաղթման յաջողութեանը նը-  
պաստող պարագաները, Պասկեւիչը շարունա-  
կում է՝ «գաղթման այս յաջողութիւնը տեսնե-  
լով հանդերձ և այս գաղթականութիւնից սպա-  
սելի ակնյայտնի օգուտները մեր տէրութեան  
համար գնահատելով հանդերձ՝ ես միևնոյն ժա-  
մանակ չեմ կարող չնախատեսել\*) ապագայ  
դժարութիւնները և խոշոր ծախքերը, որոնք  
անխուսափելի կը դառնան գաղթականներին տե-  
ղաւորելու ժամանակ:

Որովհետեւ հարկ կը լինի դրանց կերակրել  
ի հաշիւ արքունի գանձարանին ոչ թէ միայն  
մինչև այս տարւայ հունձը, այլ նաև մինչև գալ  
տարւայ հունձը:

\*) Էլ ինչ նախատեսել, երբ արդէն իրողութիւն էր:

Բացի դրանից՝ պէտք կը լինի՝ գաղթական-  
ներին սերմացու տալ, իսկ այդ ինձ համար շատ  
և շատ դժւար է հետեւեալ պատճառներով. նախ՝  
Երեւանի և Նախիջևանի գաւառները, որ գաղ-  
թականների բնակատեղ է յատկացրած, անցեալ  
պատերազմի երեսից բոլորովին աւերւած լինե-  
լով հացի բաւարար պաշար չունին:

Երկրորդ եղած պաշարն էլ ես յատկացրած  
եմ ի սնունդ զօրքին, որ իմ ուշադրութեան ա-  
մենագլխաւոր առարկան է:

Երրորդ՝ տաճկական պատերազմը արգելք է  
դառնում հաց գնել հարեան տաճկաց գաւառնե-  
րից, որոց մեծ պաշար կայ: Եւ չորրորդ՝ Պար-  
սիկները նոյնպէս ակամայից և դժգոհութեամբ  
են թոյլատրում իրանց երկիրներում հաց գնելը:

Այս ամենը ի նկատի առնելով ես թէպէտեւ  
քրիստոնեաներին սովի չմատնելու համար,  
ամեն միջոց ի գործ դրել եմ և մինչև անգամ  
պատուիրել եմ գնդապետ Լազարեւին, որ իրանց  
տեղերից շարժւել չթոյլ տայ այն քրիստոնեա-  
ններին, որոնք անկարող են իրանց հետ հաց  
վերցնել մինչև նոր հունձը, այսինքն՝ մինչև յու-  
լիսի մէկը, վասն զի աւելի լաւ է այդ քրիստո-  
նեաներին Պարսկաստանում թողնել, քան թէ  
մեր երկրում նրանց սովի և տառապանքների  
մատնել\*), այնուամենայնիւ ես չեմ կարող ե-  
րաշխաւորել, որ բոլոր գաղթականներին ես կա-

\*) Արդէն մատնւած, պրծած էին, երբ Պասկեւիչը գրում  
էր այդ տողերը:



րող կը լինեմ կերակրել այնքան ժամանակ, մինչև նրանք իրանց ցանածներով կարող կը լինեն կերակրել: Եւ ակնյայտնի տեսնում եմ, որ նրանց կերակրելու համար՝ մեծամեծ ծախքերի պէտք կան. թէպէտեւ ես ամեն կերպ կաշխատեմ, որ բարձրագոյն հաճութեամբ գաղթականութեան համար նշանակւած գումարի քանակութիւնից աւելի ծախք չանեմ\*)»:

### ՃԾԴ.

Մինչդեռ մի կողմից Պասկեվիչի և նրա ըստորադրեալների և միւս կողմից Պասկեվիչի ու մինիստրի մէջ այս ապարդիւն գրադրութիւններն էին տեղի ունենում,—գաղթական ժողովուրդը այստեղ և այնտեղ թափւած, մերկ. սոված տապում ու տապալկում էր, ինչպէս ասում են, ինքը իւր իւղով:

Գաղթող ժողովրդի ընդհանուր թիւը հասաւ 8249 տան կամ մօտ 45,000 հոգու:

Այդ ահագին բազմութեանը կառավարութեան կողմից տրւած նպաստի համագումարը հասաւ ընդամենը 90,000 ռուբլու, ուրեմն, միջին թւով, ամեն մի հոգուն երկու ռուբլի, այն ևս՝ 10 տարւան ընթացքում վերագարձնելու պայմանաւ:

Այսպիսի նպաստները, այս տեսակ խնամատարութիւնը, բնական է, որ գաղթականների համար ոչ մի խորուրդ և նշանակութիւն չու-

\*) АКТЫ, VII, кр. 628 № 597.

նէին: Եւ, խեղճեր, նրանք ճանճերի նման կոտորվում էին:

Տէրութեան կատարած վիճակագրութիւնից երեւցաւ, որ կարճ ժամանակում 8249 պարսկահայ գաղթական գերդաստնից մնացել էին 6946 գերդաստուն, պակասել էր 1303 գերդաստուն կամ 10,000 հոգի:

Այսպէս թէ այնպէս գաղթականներին մի կերպ տեղաւորեցին՝ 7—8 հարիւր գերդաստուն Երևանում, Նախիջևանում և Օրդուբաթում, իսկ մնացածը Արարատեան դաշտի գիւղերում.—առաւելապէս Գառնի-Բասար, Գարաշիշաք, Դարալագեզ, Կարբի-Բասար, Զանգի-Բասար, Շարուր և Սուրմալու և այլն\*):

Գաղթականների տեղաւորումն էլ, ի հարկէ առանց նեղութիւնների, առանց զրկանքների և զոհողութիւնների չկատարեցաւ:

Այդ ամենի մասին ևս մեր ընթերցողներին մի թեթիւ գաղափար տալու համար քաղում ենք մի ոռւս պաշտօնէի,—Զուբարեօվ ազգանունով, Պասկեվիչին գրած տեղեկագրի հետեւալ տողերը: Զուբարեօվը գրում է 1830 թ. ապր. 20-ին\*\*):

«Հայերը մի ժողովուրդ են, որ այս երկրում (խօսքը Ղարաբաղի մասին է) ամենից շատ են հաւատարիմ մեր տէրութեանը և կարելի է

\*) Թէ պարսկաստանի և թէ վերջերում տաճկաստանի գաղթականների թւի մասին, նոյնպէս և մանրամասն աղբւսակի մասին տես сообр. актов, I մասն кр. 182, 185 և 387.

\*\*) АКТЫ VII кр. 460—465, № № 411 և 413. և և Ամենայն Հայոց կաթող. кр. 333—335.



ասել, նրանք ամենաազնիւն են գոնէ հասարակ ժողովուրդի մէջ: Պարսկաստանից գաղթած հայք նշանաւոր են օրինակելի իշխատասիրութեամբ. նոցա մեծ մասը արհեստաւոր են, շատ օգտուէտ և շատ հազաւակաւ կովկասում:

Դժբաղդաբար այս օգտակար ժողովուրդը՝ յափից դուրս ձնշլոյմ է Ղարաբաղում:

Մի կողմ թողնելով բնիկ հայերին, որոնք կեղեքվում են թիւրք բեգերից, կը յիշեմ միայն գաղթականների մասին: Ղարաբաղի տեղական (ռուս) իշխանութիւնը Հայոց դէմ մի ինչ որ նախապաշարմունք ունենալով, աններելի կերպով նեղացնում է նրանց և միևնիւյն աշտն նրանք յունեն հաստատուութիւն: Նրանց տեղ եւ շատ անբերրի հողեր, իսկ Մեղրի Դեօնէյի մահաշում տաճ հողերն էլ շատ քիչ են...

Որպէս ապացոյց թէ որպիսի թշուառ դրութեան մէջ են գաղթականները Ղարաբաղում, կը յիշեմ հետեւելը: Տեղական (ռուս) իշխանութեան կարգադրութեամբ՝ Մարաղայի հայերը սկզբում բնակութիւն ստացած էին, այժմ աւերակ, Բերդա (Պարտաւ) քաղաքում: Այստեղը, որ մի դաշտ է Կուր գետի մօտ, ամառը սաստիկ շոք է և անտառներում եղած զանազան թունաւոր սողունները այստեղ մահաւան տեղ էին դարձնում կատարելապէս: Մարաղեցիք՝ զով և առողջ կլիմայի սովոր լինելով՝ չէին կարող տանել արեգակի խանձող տապը և հիւանդանում էին:

Դիւղի տանուտէրը իգուր էր աղաչում թոյլ

տալ իրանց տեղափոխել լեռնային կողմերը. նրանց թախանձանքները առանց հետեւանքի մընացին: Չունենալով ոչ ջուր, ոչ էլ կերակուր, բնակելով բաց երկնքի տակ և ենթարկելով արեգակի կիզիչ տօթին, դժբաղտ հայերը զոհ գընացին մահաւան:

Երեք ամսան ընթացքում նրանցից մեռան 1012 հոգի:

Ինք բաւական չէր. շրջակայ քոչող թուրքերը, գաղթականների հիւանդութիւններից օգուտ քաղելով՝ թալանեցին նրանց բոլոր գոյքն ու տաւարը: Իգուր էին հայերը արդարադատութեան դիմում: Նրանց ծեծով էին բաւականութիւն տալիս:

Առհասարակ հայերը այստեղ վերին աւսիճանի ներշնչում են թէ իրանց թուրք նայիբներից և թէ տեղական (ռուս) իշխանութիւններից:

Եւ եթէ թշուառներից մէկն ու մէկը Շուշի էր գալիս խնդրամատոյց լինելու, նրան յարապար գաւազնոթութեամբ էին պատասխանում:

ՃԾԵ.

Ղարաբաղի գաղթականների վիճակից աւերի վատթար են նկարագրում ռուս պաշտօնեաները՝ Նրեանի և Նախիջևանի կողմերում բնակեցրած գաղթականների վիճակը:

Այդ խեղճերը երկար շաբաթներ և ամիսներ բաց երկնքի տակ մնալուց յետոյ՝ մասամբ տե-



դաւորւեցան թրքաբնակ գիւղերում: Բայց թուրքերի համար ծանր էր այդպիսի հարեանութիւնը, ուստի և նրանք տրանջալ սկսեցին:

Նրկիւղ կրելով այդ տրտունջները շատանալուց ու բարդւելուց՝ ոռւս իշխանաւորները հայերին հիմա էլ այդ գիւղերիցն էին քշում դէպի այլ վայրեր, մեծ մասամբ անհամապատասխան գաղթականների մեծ մասի կարիքներին:

Այս մէկ կողմից:

Միւս կողմից ոռւս տեղական իշխանաւորները ոչ միայն բարոյապէս փչացած, կաշառակեր էին, այլև միանգամայն անընդունակ, անհամապատասխան իրանց պաշտօնին: Ռուս պաշտօնեաների տգիտութիւնն ու անընդունակութիւնը այն աստիճանի էր հասնում, որ 1828 թւին, երբ լիազօր ղեսպանի պաշտօնով նշանաւոր Գրիբօսեդովը Թեհրան էր գնում՝ Հայկական նահանգի գաղթականների վրայ կարգւած այդ ոռւս պաշտօնեաներին տեսնելով և նրանց կատարած գործերի հետ անցողաբար ծանօթանալով, խորհուրդ տւեց ի պաշտօնէ Պասկեվիչին, որ սա «գոնէ Թիֆլիզի Հայոց (ներսիսեան) դպրոցի աշակերտներիցը» մի քանի հոգի, իբրև պաշտօնեաների պաշտօնակատարներ, ուղարկւեն այն կողմերը:

ՃԾԶ.

Մենք գիտենք, ընթերթող, որ Պասկեվիչը ինչպէս կրասովսկի ժենեռալից նոյնպէս և Ներ-

սէս արքեպիսկոպոսից սաստիկ ցաւած էր, նրանց համարելով պատճառ այն մեծ ջարդին, որ կերաւ ոռւս փոքրիկ բանակը Օշականի ձորում, երբ գնում էր էջմիածինը ազատելու\*):

Սակայն ի նկատի առնելով ժամանակը և պատերազմը՝ Պասկեվիչը առ երևոյթն բարեկամ էր ձեռնում Ներսիսին՝ նոր ի նորոյ օգտւելու նրա աղբեցութիւնից և շահագործելու նրա ազատիրական եռանդը:

Այդպէս էլ եղաւ:

Ընթերցողը նախորդ գլուխներում տեսաւ թէ Ներսէսը սրբան և քանի տեսակ ծառայութիւններ արաւ Պասկեվիչին պատերազմական գործողութիւնների բոլոր ժամանակամիջոցում և յետոյ:

Պատերազմը վերջանալուց յետոյ՝ հաշտութեան դաշնագրի առթիւ՝ Ներսէսը մի քանի խորհուրդ տւեց Պասկեվիչին որ ի հարկ է, նա արհամարեց՝ մտքումը նոր ի նորոյ վշտանալով հայ եպիսկոպոսի անտեղի միջամտութիւններովը պետական քաղաքական գործերի մէջ:

Ի վերայ այսր ամենայնի՝ Պասկեվիչը իր վիշաբ դարձեալ թագցրեց Ներսիսից:

Վերջինս էլ այնուհետև սկսեց իր միջնորդութիւնները յօգուտ հայերին Պասկեվիչի առաջ անել զնդապետ Լազարեանի միջոցաւ՝ անդադար նրան ուղղած իր նամակներով:

Լազարեանն էլ Ներսիսի նամակների բովանդակութիւնը յայտնում էր Պասկեվիչին, որ Դր

\*) Акты, VII, кр. 259, № 214.



մտքում թէ՛ Լազարեանին և թէ՛ Ներսիսին ծաղրելով հանդերձ՝ պատրաստակամութիւն էր ցոյց տալիս՝ Ներսիսի առաջարկները ի կատար ածելու, ինչպէս ասում են, նրանց գլխների տակ փափուկ բարձեր դնելով։

Եւ Լազարեանը, որ մի անփորձ երիտասարդ էր, շտապում էր աւետել և ուրախացնել Ներսիսին գրելով թէ՛ «գոր ինչ գրեալ էիք ինձ վասն սիրելի մեր ազգին և սահմանաց Երևանու՝ ես նորին բարձր գերագանցութեան (Պատկեմիչին) վասն այս խօսեալ եմ, որ ասաց ինձ թէ՛ միաքն ու դիտաւորութիւնն իւր Կայսերական Մեծութեան նոյն է. նա ևս ինքն նորին բարձր գերագանցութիւնն հետևելոց է այս բանին լաւապէս կատարել։ Եւ ես իմոյս կողմանէ՛ ինձ առաջին և սուրբ պարտաւորութիւն կը համարիմ այն է՝ որ լինիմ օգուտ ազգին մերոյ»)»։

ՃԾԷ.

Ներսիսի և Լազարեանի մէջ եղած բարեկամական յարաբերութիւնը տեսնելով՝ Պատկեմիչը զբանից էլ ուզեց օգտուել։

Նա ուզում էր, որ նորանւած բերդերը (Աբաս-Աբադ, Սարգար-Աբադ և Երևան) հայ զինւորների պահպանութեանը յանձնի՝ նախապէս այդ նպատակի համար ժողովելով հայերից մինչև 2000 երիտաւարդ։

Դրանց մէջ մտնելու էին պատերազմի ժամանակ գործող՝ հայկական գնդից կենդանի մընացած սակաւաթիւ հայ զինւորները։

\*) Ամենայն Հայոց կաթող. եր. 315.

Պատկեմիչի այդ նպատակի պատճառները երկու էին։

Առաջին այն, որ ուս զինւորները ամառայ տօթերին սաստիկ հիւանդանում էին և յաճախ էլ կեանքից զրկվում։

Արդ՝ հայ զինւորներով փոխարինելով իր ուս զինւորներին՝ Պատկեմիչը, ուրեմն մի մարդասէր և խելացի գործ կատարած կը լինէր։

Երկրորդ պատճառը այս էր։

Ռուս-պարսկական պատերազմը դեռ չէր վերջացել, որ ուս-առձկական պատերազմի շրջուկներն սկսեցան։ Եւ յիշաւի. Նիկողայոս Առաջինը հաստատապէս որոշել էր յարձակել Տաճկաստանի վրայ։

Ուստի Թուրքմէնշայի հաշտութեան դաշնագիրը կոպելուց անմիջապէս յետոյ՝ Պատկեմիչին հրամայեցաւ պատրաստուել Օսմանցիներէրի վրայ յարձակելու Փոքր-Ասիայում։

Պատերազմի ծրագիրը կազմելիս՝ Պատկեմիչն ուզում էր իր կողմն ունենալ նաեւ պարսից զահաժառանգին, Աբբաս Միրզին։

Վերջինս այս միաբն ինքն էր առաջինը արտայայտել Պատկեմիչին։

Եթէ այս միաբն հաւանութիւն գտնելով իրագործէր և Աբբաս Միրզան, իբրի ուսաց դաշնակից, իր սուրբ օսմանցիների դէմ ուղղէր, — այն ժամանակ, ըստ ծրագրի Պատկեմիչի, նա պիտի ստանար ի տրիտուր իր ծառայութեան՝ Վանը և Մուշը\*)։

\*) АКТЫ, VII, кр. 691, № 764



Ահա այդ ժամանակ Ռուսաստանը՝ այլևս Պարսկաստանի կողմից ոչ մի երկիւղ չունենալով՝ ռուսական ամբողջ բանակը կ'ուղղէր օսմանցիների դէմ:

Իսկ պարսիկներից նոր գրաւած բերդերի պահպանութեան համար 1500 կամ 2000 հայ զինուորներն էլ շատ բաւական էին:

Արդ՝ որպէսզի Ներսէսը այդքան զինուորացու հայ երիտասարդներ ժողովէ՝ Պասկեվիչը Լազարեանի միջոցաւ խոստացաւ նրան, Ներսիսին Ս. Աղէքսանդր Նեփսիու առաջին աստիճանի չքանչանը (որ և բերել տւեց\*):

Պասկեվիչի այս ցանկութիւնը Լազարեանը Ներսիսին յայտնեց հետեւեալ նամակով\*\*):

ՃԾԸ.

— «Իբրաւի մեծաւ ուրախութեամբ ընթերցայ զայն նամակն գրաֆ Դիբիչին առ Իվան Ֆէօդորովիչն (Պասկեվիչն), յորում յայտ առնէ թէ՛ կայսրն մեր վասն վարձատրուց առնելոյ զօգտակար աշխատանս և զվաստակս, որ Ձերդ սրբազնութիւն կրեալ է յայսմ միջոցիս, կամի ընծայել Ձեզ զնշան ս. Աղէքսանդր Նեփսիու առաջին աստիճանի, և խնդրէ միայն զհամաձայնութիւն Իվան Ֆէօդորովիչին, որպէս զխաւոր վառաժարչին, և ժենեռալս մեր (Պասկեվիչը) յօժար համաձայնութեամբ իւրով յայտնեաց զբարեկամութիւնս առ Ձերդ սրբազնութիւն:

Յոյժ հարկաւոր հարկարիւմ ասել Ձեզ, զի

\*) АКТЫ, II, кр. 252, № 205:

\*\*) Ամենայն Հայոց կաթող. եր. 316.

կայսրն տայ զգալ, որ անգաւ հայոց ի նշան շնորհակալութեան իւրոյ զողորմութեան իւրոց, ի հարկէ, արդէն կազմեալ է գոնէ 2000 կամ 1500 զօրս, եւ այնու եղեալ է արժանի ապագայ ողորմութեանց նորա»:

Թէպէտ ես յոյժ ցաւիմ, զի պարագայը մինչև այժմ չթողին մեզ առնել երեւի ինչ, բայց յուսամ զի անգաղար Չանացոյութիւն բայց միաւորեալ ընդ ըզձանաց այլոց, որպէս և իմոյս, ի փոքր միջոցիս կազմելոց եւ զվերոյիշեալ թիւ գօրաց: Ահա մերութիւն իմ կամէր արդէն առաքել առ Ձեզ և զ(կ) ոչումն (պրօկլամացիա) իմ առ հայս (գօրք ժողովելու համար), բայց աներկբայ լինելով, զի Ձերդ սրբազնութիւն առաւելագոյն քան զայլս գիտէք զգրութիւն ազգիս մերոյ, զքնանս և զօգուանս նորա, — զիմեմ առ Ձեզ և խնդրեմ խոնարհաբար տալ ինձ վասն այսմիկ զհարկաւոր խորհուրդ, որովք պահպանելով միանգամայն և զշահաւէտութիւնս ազգին՝ կարողացուք գրգռել զնա առ ի կատարումն առաջարկութեանց մերոց:

Ձոր ինչ հաճոյ և շահաւէտ թւեսցի Ձերդ սրբազնութեան վասն Հայոց յայս կողմանէ, խնդրեմ ջնորհ առել և կարելի փութով առաքել առ ինձ, և ես ամենայն կերպիւ ջանալոց եմ զի զխաւոր կառավարչն համաձայնեացէ և հաստատեացէ»:

ՃԾԹ.

Լազարեանի այս նամակը կարդալով թերեւ



Ներսէսն աշխատէր, իրան յատուկ ոգևորութեամբ և անշրջահայեցութեամբ, զօրաժողով լինել, սակայն Լազարեանի նամակի երկրորդ մասը նրան զլիսի ձգեց վերջապէս, որ Պասկեվիչը իրան ձեռք է առել և պարագնում է: Ահա նամակի այդ մասը.

— «Լինելով միշտ հարազատ բարեկամ, — շարունակում էր Լազարեանը, — որպէս և հնազանդ որդի Ձերդ բարձր սրբազնութեան, հարկաւոր համարիմ յայտ առնել և զայս, որ կուսակալն մեր (Պասկեվիչն) յոյժ անբաւական է որ մինչև ցայժմ ոչ որպիսութիւնք և ոչ եկամուտք Երևանայ յայտնի չեն նմա, ևս աւելի որ ըստ երեւոյն՝ դուք յամենայն համաձայն էք ընդ Կրասովսկուն և ոչ երբէք ոչ ցուցանէք անցաւորաբար դմիտս կամ զխորհուրդս ձեր: Կարգեալ գտնել անգամ կառավարութեան Երևանայ և հաւասար ժենեռալ Կրասովսկուն՝ պարտէ զի այնմ բանի՝ ուր միտք ձեր այլ են ընդ միասնորա, զրել զձերն առ կուսակալն և դնել ի ներքոյ քննութեան նորա, որով և կատարել զկամս նորա»:

Ամեն մի մարդու համար էլ, նամանաւանդ Ներսիսի համար շատ պարզ էր, որ եթէ Պասկեվիչը Երևանի որպիսութիւնների և եկամուտների մասին տեղեկութիւն էր ուզում ստանալ, նա այդ կարող է ի պաշտօնէ հրամայել և ստանալ: Կամ եթէ նա Երևանի կառավարութեան գործերի նկատմամբ՝ զեղծում կամ օրինազանցութիւն էր նկատել, կարող էր իբրեւ իշխանա-

ւոր, բացատրութիւն պահանջել, յանցաւորներին պատժել, պատուհասել:

Սակայն Պասկեվիչի նպատակը բոլորովին այլ բան էր:

Նա մտքումը զրել էր Կրասովսկուն տապալել: Ժամանակն եկել, հասել էր արդէն: Կրասովսկուն այլևս նա պէտք չունէր:

Այժմ ուզում էր նրա տապալումը Ներսիսի ձեռքով կատարել. նրան իր բարեկամի հետ թշնամացնել, կուսացնել, որպէսզի ինքը յետոյ առաջ Կրասովսկուն տապալէ և ապա իրան Ներսիսին:

Բայց, ինչպէս առաջինք, Լազարեանի նամակի երկրորդ մասը Ներսիսի աչքերը բացին և նա չկամեցաւ այլևս նրա ձեռքին կոյր գործիք լինել, նրա ածած դուգուկովը պարել:

Ներսէսը ոչ մի առիթ չունէր Կրասովսկուն մասին զանգատաւոր լինելու, այն էլ թագնաւոր, անարգաբար, ինչպէս որ Պասկեվիչը՝ յանձին Լազարեանի՝ խորհուրդ էր տալիս:

Ներսէսը հասկացաւ վերջապէս, որ Պասկեվիչը թշնամացել է Կրասովսկուն հետ՝ յատկապէս Օշականի պատերազմի պատճառաւ՝ յատկապէս էջմիածնի և առհասարակ հայերի շահերը պաշտպանելու պատճառաւ, հետևաբար հալածելով Կրասովսկուն՝ Պասկեվիչը հալածում է Ներսիսին և նրա պաշտպանած հայկական շահերը:

Կրկնում ենք՝ Ներսէսը այս բանը վերջապէս հասկացաւ, ուստի և Պասկեվիչի առաջարկը չլսելու տւեց, լռութեամբ մերժեց:



Ներսիսի այս վարմունքը, ի հարկէ, փառասէր, գոռոզ կոմսին՝ Պասկեվիչին՝ դիւր չեկաւ:

Եւ նա ինքն ուղղակի, առանց այլոց օգնութեան, Կրասովսկուն Ռուսաստան քշելուց յետոյ՝ ձեռնամուխ եղաւ Ներսիսի և զբանով նրա պաշտպանած Էջմիածնի կամ առհասարակ հայկական շահերի տապալմանը:

Սակայն նախքան այդ տապալման մանրամասնութիւններին դիմելը՝ մենք պէտք է այստեղ մեր ընթերցողներին յայտնենք, որ Աբբաս Միրզային ուսաց դաշնակից ընդունելու ծրագիրը\*) որ Պասկեվիչն առաջարկել էր Պետերբուրգ, այնտեղ չընդունուեց, չյարգուեց:

Արքունիքը գտաւ, որ ուսա գօրքը առանց պարսից գահաժառանգի օգնութեան էլ կարող է օսմանցիների հախիցը գալ: Ուստի և հրամայուեցաւ Պասկեվիչին՝ իր բանակով սահման անցնել:

Եւ նա 1827 թ. յունիսի 14-ին Գումրիի մօտով՝ մտաւ տաճկաց սահմանը:

Սկսեցաւ ուս-տաճկական պատերազմը, որին առ այժմ թողած՝ մենք դառնանք Ներսիսի տապալման պատմութեանը՝ պատմութիւն, որ երկու դարուց ի վեր կրկնվում է մեր, այսպէս առած, քաղաքական գործիչների հետ՝ առանց մագափ խելքի և զիտակցութեան բերելու նրանց, ինքն նրանք անհատական անձինքներ, թէ ամբողջ կազմակերպութիւններ, — այդ միևնոյն է:

\*) АКТЫ, VII, Լр. 693 № 678.









804

30

ՀՀ Ազգային գրադարան



NL0418228



6892